«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
10 (2)

Երևան 2022

ISSN 1829-3980

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր
Հարություն Մարության, պ.գ.դ.,
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ
Էդիտա Գզոյան, պ.գ.թ.,
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անումյան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն, Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաքեսյան, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան, Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր,Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի երևանյան մասնաճյուղ, Հայաստան

Անահիտ Խոսրոևա, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Բեռլինի ազատ համալսարան, Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան, Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիուսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շեմասյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ներբասկա-Լինքոլնի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Tsʼeghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”)

Editor in Chief:
Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:
Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Elke Hartmann, Free University Berlin, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Rubina Peroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Valery Tunyan, Russian State University of Tourism and Services, Yerevan Branch, Armenia

Цехаспанагитакан андес (“Журнал исследований геноцида”)

Главный редактор
Арутюн Марутян, доктор ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения
Заместитель главного редактора
Эдита Гзоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, профессор, Свободный университет Берлина, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член НАН РА, Франция

Андраник Дакесян, доктор политологии, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусхаус), Потсдам, Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Ваге Ташчян, доктор истории, проект “Ушамадян,” Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, ереванский филиал Российского государственного университета туризма и сервиса, Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Институт истории НАН РА, Армения

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Ցեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am):
Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ:
Ցեղասպանագիտական հանդեսում տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին:
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար:
Ցեղասպանագիտական հանդեսն ինդեքսավորվում է Գիտական հոլման հայկական ցուցչի (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում:
Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes ("Journal of Genocide Studies") (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide.
Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors.
Journal of Genocide Studies is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI).
Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Цехаспанагитакан андес ("Журнал исследований геноцида") (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом "Музей-институт Геноцида армян" (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян.
Статьи, обзоры и другие материалы, опубликованные в "Журнале исследований геноцида," отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда "Музей-институт Геноцида армян." Фонд "Музей-институт Геноцида армян" не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами.
"Журнал исследований геноцида" индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Նարեկ Մ. Պողոսյան
«Անանուն հանցագործություն». դիտարկումներ «ցեղասպանություն» եզրույթի նախատիպի շուրջ.....9

Լուսինե Յ. Աբրահամյան
Նախապատրաստելով Հայոց ցեղասպանությունը Տրապիզոնում. վաղ փուլ և ակտիվացում.....26

Ռոբերտ Ա. Թաթոյան
Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի հարցի շուրջ.....49

Գոհար Վ. Խանումյան
Էսթեր Փոլ Լավջոյ. ամերիկացի բժշկուհու փորձառությունը Զմյուռնիայի աղետի ժամանակ.....74

Թեհմինե Ռ. Մարտոյան
Զմյուռնիայից Միտիլինի. Մկրտիչ Ավետյանի վերապրման պատմությունը.....90

Էթիկայի կանոններ.....110

Ցուցումներ հեղինակներին.....111

CONTENT

ARTICLES

Narek M. Poghosyan
"A Crime without a Name": Some Observations on the Prototype of the Term "Genocide".....9

Lusine Y. Abrahamyan
In Preparation for the Armenian Genocide in Trapizon: Early Phase and Activation.....26

Robert A. Tatoyan
On the Question of the Armenian Death Toll as a Result of Smyrna Catastrophe.....49

Gohar V. Khanumyan
Esther Pohl Lovejoy: The Experience of American Woman Physician during Smyrna Disaster.....74

Tehmine R. Martoyan
From Smyrna to Mytilene: Survival Story of Mkrtich Avetyan.....90

Ethical Guidelines.....110

Instruction for Authors.....111

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Нарек М. Погосян
“Преступление без имени”: некоторые наблюдения о прототипе термина геноцид.....9

Лусине Ю. Абраамян
Подготовка к исполнению Геноцида армян в Трапизоне: ранняя фаза и активация.....26

Роберт А. Татоян
К вопросу о численности армян, погибших в результате смирнской катастрофы.....49

Гоар В. Ханумян
Эстер Поль Лавджой: опыт американского врача во время катастрофы в Смирне.....74

Тегмине Р. Мартоян
От Смирны до Митилини. История жизни Мкртыча Аветяна.....90

Правила этики.....110

Руководство для авторов.....111

Ցեղասպանագիտական հանդես 10 (2), 2022
https://doi.org/10.51442/jgs.0026

«ԱՆԱՆՈՒՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ». ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵԶՐՈՒՅԹԻ ՆԱԽԱՏԻՊԻ ՇՈՒՐՋ

Նարեկ Մ. Պողոսյան
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հոդվածում վերլուծվում են Ռաֆայել Լեմկինի կողմից *ցեղասպանություն* եզրույթի ձևակերպման պատմական նախադրյալները: Եզրույթի ստեղծման անհրաժեշտությունը Լեմկինը կապում էր նրա հետ, որ կար հանցագործություն, որը, սակայն, ձևակերպված անվանում չուներ և սահմանված չէր:
Փաստերը, սակայն, վկայում են, որ նախքան Չերչիլը կհայտարարեր «անանուն հանցագործության» մասին, արդեն իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և նույնիսկ դրանից առաջ ցեղասպանության վերաբերյալ բնորոշումներ կամ ձևակերպումներ արդեն կային: Մասնավորապես, հատկանշական է, որ Օսմանյան կայսրության՝ հայերի նկատմամբ իրականացված գործողություններն արդեն իսկ տարբեր լեզուներում բնորոշվել էին ցեղի և ժողովրդի սպանություն նշանակող արտահայտություններով: Այսինքն՝ այդ հանցագործությունն անանուն չէր. այլ հարց է, որ այն իրավական սահմանում չուներ, որը ներկայացնելով մեկտեղ՝ Լեմկինը փորձեց սահմանել հանցագործության անվանման սեփական ձևակերպումը:

Բանալի բառեր՝ Ռաֆայել Լեմկին, հանցագործությունների հանցագործություն, բարբարոսություն, վանդալիզմ, «անանուն հանցագործություն», ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, «Völkermord», «folkmord» եզրույթներ:

Հոդվածը ներկայացվել է՝ 02.08.2022: Ընդունվել է տպագրության՝ 16.10.2022:
The article was submitted on 02.08.2022 and accepted for publication on 16.10.2022.
Статья поступила 02.08.2022 и была принята к публикации 16.10.2022.

Ինչպես հղել՝ Նարեկ Մ. Պողոսյան, ««Անանուն հանցագործություն». դիտարկումներ «ցեղասպանություն» եզրույթի նախատիպի շուրջ» *Ցեղասպանագիտական հանդես* 10, no. 2 (2022), 9-25:
How to cite: Narek M. Poghosyan, "'A Crime without a Name': Some Observations on the Prototype of the Term Genocide," *Ts'eghaspanagitakan handes* 10, no. 2 (2022): 9-25.
Как ссылаться: Нарек М. Погосян, "'Преступление без имени': некоторые наблюдения о прототипе термина геноцид," *Цехаспанагитакан андес* 10, no. 2 (2022): 9-25.

Ներածություն

Իրավաբան Ռաֆայել Լեմկինի կողմից *ցեղասպանություն* (Genocide) եզրույթի ստեղծումը ցեղասպանագիտությանն առնչվող ամենաշատ քննարկվող թեմաներից մեկն է: Էթնիկական, կրոնական և ռասայական խմբերին ոչնչացնելու մտադրության առկայությունը ցեղասպանությունն առանձնացնում է այլ միջազգային հանցագործություններից, և այդ իսկ պատճառով այն համարվում է առանձնակի ծանրության հանցագործություն և հիշատակվում որպես հանցագործությունների հանցագործություն (crime of crimes)[1]:

Ցեղասպանություն (genocide) եզրույթի հեղինակ Լեմկինը ևս ներկայացնում է, որ ցեղասպանությունն իր բնույթով հանցագործությունների հանցագործություն է, քանի որ այն ուղղված է քաղաքակրթության հիմքերի ու ազգերի ընտանիքների շահերի դեմ[2]: Այսինքն՝ ցեղասպանության խնդիրը միայն որևէ ազգի կամ պետության հարցը չէ. այն համամարդկային նշանակություն ունի: Եվ դրանով է պայմանավորված, որ ցեղասպանությունը շատ հաճախ որակվում է նաև որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն[3]:

Ուստի պատահական չէ, որ նույնիսկ ներկայումս տեղի ունեցող իրադարձությունների, մասնավորապես՝ զանգվածային սպանությունների շուրջ բանավեճերը շարունակվում են այն համատեքստում, թե արդյոք դրանք կարելի է բնորոշել որպես ցեղասպանություն, թե՝ ոչ: Ընթացիկ միջազգային գործընթացներում շատ են այն դեպքերը, երբ ցեղասպանության կանխարգելման ու դատապարտման թեման ավելի շատ դիտարկվում է քաղաքական շահերի տեսանկյունից, իսկ իրավական և մարդասիրական նշանակությունը երկրորդական պլան է մղվում:

Օրինակ՝ որպես հատուկ միջամտություն ունենալու կամ ռազմական գործողություններ սկսելու հիմք կարող է ծառայել ցեղասպանության վտանգից փրկելու անհրաժեշտության հիշատակումը: Կամ ռազմական գործողությունների ընթացքում ցեղասպանության իրագործման մասին տարբեր մեղադրանքներ են հնչում, որոնք հետո չեն հաստատվում:

Ցեղասպանության թեման անգամ շահարկվում է հենց ժխտողականությունն արդարացնելու համար: Օրինակ՝ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանությունը ժխտելու դիրքորոշման շրջանակներում կիրառվում է Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետությունների նկատմամբ այն մեղադրանքների հնչեցումը, թե այդ երկրներն առաջին հերթին պետք է առերեսվեն սեփական պատմությանը, քանի որ պատմության ընթացքում ցեղասպանություն են իրագործել:

Միևնույն ժամանակ, Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը ժխտելու առանցքային թեզերից է դարձել այն պնդումը, թե *ցեղասպանություն* (genocide)եզրույթը

---

1 Robert Cryer, Håkan Friman, Darryl Robinson, Elizabeth Wilmshurst, *An Introduction to International Criminal Law and Procedure* (Cambridge: Cambridge University Press, 2010), 203.

2 AJHS, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, folder 3, Stop Genocide Now, 4.

3 Samuel Totten, *Teaching and Learning About Genocide and Crimes Against Humanity: Fundamental Issues and Pedagogical Approaches* (Charlotte, NC: IAP, 2019), 33.

գոյություն չի ունեցել մինչև 1944 թ., իսկ դրանով բնորոշվող հանցագործությունը առավել կոնկրետ սահմանվել է 1948 թ. «Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայով[4]:

Սակայն ցեղասպանության շուրջ ժխտողականների շահարկումներին տեղիք չտալու համար նախ պետք է հասկանալ, թե որտեղից են գալիս այդ հանցագործության բնորոշման ակունքները, որոնք են եզրույթը ձևակերպելուն ու հանցագործությունը սահմանելուն նպաստած պատմական նախադրյալները:

Բարբարոսություն և վանդալիզմ

Հայտնի է, որ 1933 թ. տեղի ունեցած Մադրիդի կոնֆերանսում Լեմկինը ներկայացրել էր *բարբարոսություն* (barbarity) և *վանդալիզմ* (vandalism) հանցագործությունների վերաբերյալ սահմանումներ, որոնց հիման վրա նա առաջարկում էր կազմել բազմակողմ կոնվենցիա, որով մարդկային խմբերի ոչնչացումը դիտարկվելու էր որպես միջազգային հանցագործություն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ այս երկու եզրույթի հեղինակը Լեմկինը չէր:

Բարբարոսություն եզրույթը ծագել է հունարենից՝ *βάρβαρος* (հոգնակին՝ «βάρβαροι»՝ «barbaros»): Հին Հունաստանում հույներն այդ եզրույթն օգտագործում էին նկարագրելու ոչ միայն նրանց, որոնք չէին խոսում հունարեն և չէին հետևում դասական հունական սովորույթներին, այլև հունական աշխարհի ծայրամասային հույն բնակիչներին, որոնք ունեին յուրահատուկ բարբառներ[5]: Հույն պատմիչ Հերոդոտոսն առաջինն էր, որ տալիս է այդ եզրույթի բացատրությունը[6]:

Բարբարոսություն եզրույթը ընդունելություն է գտնում նաև Հին Հռոմում և հռոմեացիներն այն օգտագործում էին ոչ հռոմեացի ժողովուրդներին ու ցեղերին բնորոշելիս, ինչպիսիք են, օրինակ, բերբերները, գերմանացիները, կելտերը, իբերացիները, թրակիացիները, իլիրիացիները, սարմատները և այլք: Իսկ արդեն Հռոմեական կայսրության վերջին շրջանում *բարբարոս* բառի միջոցով նկատի էին առնվում բոլոր այն օտարերկրացիները, որոնք չունեին հունական և հռոմեական ավանդույթներ, և հատկապես այն ցեղերը, որոնք հարձակումներ էին գործում Հռոմի սահմանների վրա: Ավելի ուշ գիտնականներն ընդլայնեցին այս բառի կիրառության սահմանները՝ այն օգտագործելով արտաքին թշնամիների կողմից «քաղաքակրթություններ» համարվող մշակույթների վրա հարձակումները բնորոշելիս[7]:

---

4 Republic of Türkiye Ministry of Foreign Affairs, "The Armenian Allegation of Genocide: The issue and the facts," https://www.mfa.gov.tr/the-armenian-allegation-of-genocide-the-issue-and-the-facts.en.mfa, դիտվել է՝ 07.07.2022:

5 Filos Panagiotis, "The Dialectal Variety of Epirus," in *Studies in Ancient Greek Dialects: From Central Greece to the Black Sea,* eds. Emilio Crespo, Georgios Giannakis and Panagiotis Filos (Berlin: De Gruyter, 2017), 218.

6 Jan Willem van Henten, "Martyrdom, Jesus' Passion and Barbarism," in *Violence, Scripture, and Textual Practice in Early Judaism and Christianity*, eds. Ra'anan S. Boustan, Alex P. Jassen and Calvin J. Roetzel (Leiden/Boston: Brill, 2010), 238.

7 Sarah Pruitt, "Where did the word "barbarian" come from?," https://www.history.com/

Իսկ, ընդհանուր առմամբ, *բարբարոս* բառն ամենահաճախն օգտագործվում է մի գործողություն նկարագրելիս, որը կա՛մ դաժան է, կա՛մ վայրենության աստիճանի է հասնում, կա՛մ էլ պարզունակ և ոչ քաղաքակիրթ նշանակությունն ունի, իսկ բարբարոսն այն անձն է, որը կատարում է նման գործողություններ կամ ցուցադրում է նման հատկանիշներ: Այսինքն՝ այս եզրույթը հեռացել է իր սկզբնական իմաստից, և փոխաբերական իմաստով *բարբարոսներ* անվանման ներքո հասկացվում են տգետ, կոպիտ, դաժան և մշակութային արժեքները քանդող մարդիկ: Թերևս դրանով է պայմանավորված, որ Լեմկինը հենց այս եզրույթն ընտրեց: Բարբարոսություն հանցագործությունը նա սահմանում էր որպես գործողություն, որը կատարվում է մարդու կյանքի դեմ՝ մտադրություն ունենալով ոչնչացնելու որոշակի ազգային, կրոնական կամ սոցիալական խմբի[8]:

Վանդալիզմ եզրույթի միջոցով որակվում է այն գործողությունը, որը ներառում է անձնական կամ հանրային սեփականությունը դիտավորյալ կամ առանց հիմնավոր պատճառի վնասումը կամ ոչնչացումը[9]: Այս եզրույթը կապված է *վանդալ* կոչվող արևելագերմանական ցեղախմբի անվանման հետ, որոնք ավերեցին Գալիան, Իսպանիան և Հյուսիսային Աֆրիկան ու 455 թ. կողոպտեցին Հռոմը: Վանդալների լատիներեն անվանումը *vandalus* էր, որն ընկած է նաև Անդալուսիայի՝ Իսպանիայի ամենահարավային շրջանի անվանման հիմքում: Հռոմեացիները վանդալներին հաղթեցին միայն 533 թ. Տրկամարումի ճակատամարտում, և նրանք բնորոշվեցին որպես ցանկացած գեղեցիկ կամ պահպանման արժանի արժեքների ոչնչացնողներ[10]:

Հետաքրքրական է, որ Լուսավորության դարաշրջանում (17-18-րդ դարեր) Հռոմը իդեալականացվում էր, իսկ գոթերն ու վանդալները մեղադրվում էին նրա կործանման մեջ: Արդեն 1794 թ. ֆրանսիացի եպիսկոպոս Գրեգուար դը Բլուան կիրառեց *վանդալիզմ* (vandalisme) ձևակերպումը՝ նկատի ունենալով ֆրանսիական հեղափոխությունից հետո արվեստի գործերի համատարած ոչնչացումը: Ամիսների ընթացքում լրագրողների կողմից այս եզրույթն ընդունելություն գտավ ամբողջ Եվրոպայում, և 1798 թ. այն ամրագրվեց «Dictionnaire de l'Académie Française»-ում (Ֆրանսիական ակադեմիայի բառարան), իսկ 19-րդ դարի սկզբին արդեն համընդհանուր ձևով կիրառվում էր եվրոպական շատ լեզուներում[11]:

Թերևս նկատի ունենալով այս ամենը՝ Լեմկինը կիրառեց *վանդալիզմ* եզրույթը՝

---

news/where-did-the-word-barbarian-come-from#:~:text=The%20ancient%20Greek%20word%20%E2%80%9Cb%C3%A1rbaros,%E2%80%9D%20which%20means%20%E2%80%9Cstammering.%E2%80%9D, դիտվել է՝ 28.05.2022:

8 Raphael Lemkin, "Acts Constituting a General (Transnational) Danger Considered as Offences Against the Law of Nations," Special Report presented to the 5th Conference for the Unification of Penal Law in Madrid (14 -20 October 1933), http://www.preventgenocide.org/lemkin/madrid1933-english.htm, դիտվել է՝ 28.05.2022:

9 Տե՛ս, https://www.lexico.com/en/definition/vandalism, https://www.oxfordlearnersdictionaries.com/definition/english/vandalism, դիտվել է՝ 28.05.2022:

10 Julia Cresswell, *Oxford Dictionary of Word Origins* (Oxford: Oxford University Press), 472.

11 Andy Merrills and Richard Miles, *The Vandals* (Chichester, Malden, Wiley-Blackwell: John Wiley & Sons, 2010), 9-10.

նոր հանցագործության մասին իր առաջարկությունը Մադրիդի կոնֆերանսում ներկայացնելու համար, որտեղ նա նկարագրում էր մշակույթի և արվեստի այն գործերի ոչնչացումը, որոնցում բացահայտվում են գիտության, արվեստի և գրականության ոլորտներում հավաքականության եզակի հանճարն ու ձեռքբերումը: Նա նշում էր, որ ցանկացած հավաքականության ներդրում համաշխարհային մշակույթի մեջ կազմում է ողջ մարդկության հարստությունը, նույնիսկ այն դեպքում, երբ դրսևորում է յուրահատուկ հատկանիշներ: Ուստի, ըստ նրա, ամեն մի ազգի արվեստի գործի ոչնչացումը պետք է դիտարկել որպես համաշխարհային մշակույթի դեմ ուղղված վանդալիզմի գործողություն, քանի որ ողջ մարդկությունը դրա հետևանքով կորուստ է կրում[12]:

Լեմկինի առաջարկները 1933 թ. Մադրիդի կոնֆերանսում ընդունելություն չգտան[13]: Սակայն նա շարունակում է մասնակցել միջազգային իրավական կոնֆերանսների՝ մեկնելով Բուդապեշտ, Կոպենհագեն, Փարիզ, Ամստերդամ և Կահիրե, հանդիպելով իրավաբան գործընկերներին ու հանդես գալով զեկուցումներով: Նա կրկին ներկայացնում էր իր առաջարկները, որոնք, սակայն, որևէ էական ազդեցություն չունեցան:[14]: Հետագայում Լեմկինն այդ անհաջողությունը բացատրում էր նաև նրանով, որ իրավաբան մասնագետները պնդում էին, թե այդ հանցագործությունները շատ հազվադեպ են տեղի ունենում, որպեսզի այդ ուղղությամբ օրենսդրություն ընդունելու անհրաժեշտություն լինի[15]:

Այս ամենով հանդերձ՝ Լեմկինը շարունակում է իր գործունեությունը էթնիկ, կրոնական և ռասայական խմբերի ոչնչացումը որպես առանձին միջազգային հանցագործություն սահմանելու ուղղությամբ: Եվ հետաքրքրական է, որ նույնիսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում նա չէր հրաժարվել բարբարոսություն և վանդալիզմ հանցագործությունների մասին իր առաջարկներից: 1942 թ. մայիսին Հյուսիսային Կարոլինայի իրավաբանների ասոցիացիային ուղղված ելույթում Լեմկինն անգամ պնդում էր, որ իր մադրիդյան առաջարկների ընդունումը կօգներ կանխարգելելու պատերազմը[16]:

1942 թ. հունիսին, երբ ԱՄՆ Տնտեսական պատերազմի խորհրդի (Board of Economic Warfare)[17] կողմից գլխավոր խորհրդական աշխատելու հրավեր է ստանում,

12 Lemkin, “Acts Constituting.”

13 Brendan January, *Genocide: Modern Crimes Against Humanity* (Minneapolis: Twenty-First Century Books, 2007), 25.

14 William Korey, “Lemkin’s Passion: Origin and Fulfillment,” in *Rafał Lemkin: A Hero of Humankind*, ed. Agnieszka Bieńczyk-Missala and Sławomir Dębski, (Warsaw: The Polish Institute of International Affairs, 2010), 79.

15 William Schabas, *Genocide in International Law: The Crimes of Crimes* (Cambridge: Cambridge University Press, 2009), 30.

16 Raffael Scheck, “Raphaël Lemkin’s Derivation of Genocide from His Analysis of Nazi-Occupied Europe,” *Genocide Studies and Prevention: An International Journal* 13, no. 1 (2019): 124, https://doi.org/10.5038/1911-9933.13.1.1584124.

17 Ֆրանկլին Դ. Ռուզվելտի կողմից 1941 թ. ձևավորված մարմին՝ միջազգային տնտեսական և պաշտպանական քաղաքականությունը համակարգելու համար:

Լեմկինն անմիջապես ընդունում է այն: Խորհրդի նախագահն այդ ժամանակ ԱՄՆ փոխնախագահ Հենրի Ուոլեսն էր: Ուստի Լեմկինը հնարավորություն է ստանում «Բարբարոսությունը և վանդալիզմն արգելելու մասին» միջազգային պայմանագրի՝ մեկ էջանոց իր առաջարկով դիմել ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտին[18]: Ռուզվելտը դրական պատասխան է տալիս, բայց քանի որ Երկրորդ համաշխարհային պատերազմն իր թեժ փուլում էր, միջազգային պայմանագրի ձևավորման աշխատանքը տեղի է ունենում միայն մի քանի տարի հետո[19]: Ռուզվելտը հորդորում էր նրան համբերություն ունենալ, սակայն Լեմկինն իր արձագանքում չէր թաքցնում դժգոհությունը՝ ինքնակենսագրականում նշելով. «Երբ պարանն արդեն զոհի վզին է, և խեղդամահ լինելը մոտ է, արդյո՞ք «համբերություն» բառը վիրավորանք չէ բանականության և բնության համար»[20]:

Եվ ուշագրավ է, որ հենց այս նույն ժամանակ՝ 1942-1944 թթ., Լեմկինն աշխատում էր «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատության վրա[21]: 1944 թ. նոյեմբերին Միջազգային խաղաղության Քառնեգի հիմնադրամը հրապարակեց այդ աշխատությունը, որում Լեմկինը բարբարոսություն և վանդալիզմ հանցագործությունների փոխարեն ներկայացնում է *ցեղասպանություն* (genocide) եզրույթը: «Ցեղասպանություն ասելով՝ նկատի ունենք ազգի կամ էթնիկ խմբի ոչնչացումը: Այս նոր բառը ստեղծվել է հունական *genos* բառից (ռասա, ցեղ) և լատիներեն *cide* (սպանել)»,– գրում է Լեմկինը[22]:

Մասնագիտացած լինելով նաև լեզվաբանության մեջ[23]՝ Լեմկինը թերևս հավատում էր բառի, խոսքի ուժին և իր լեզվաբանական գիտելիքներն օգտագործում է՝ փորձելով կարճ և սարսափեցնող *ցեղասպանություն* եզրույթով ցնցել ունկնդիրներին: Ակնկալվում էր, որ այն ավելի մեծ ազդեցություն պետք է ունենար, քան «բարբարոսության և վանդալիզմի հանցագործությունները»:

Հետաքրքրականն այն է, որ, նոր եզրույթի ստեղծմամբ, Լեմկինը հրաժարվում է *բարբարոսություն* և *վանդալիզմ* հանցագործությունների մասին իր առաջարկներից: Այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ 1946 թ. իր գրած հոդվածում փորձում է ներկայացնել, թե նախքան իր կողմից ցեղասպանություն հանցագործությունը սահմանելը, այն նույնիսկ անուն չուներ, և Չերչիլի կողմից այդ հան-

18 Paul R. Bartrop, *Modern Genocide: A Documentary and Reference Guide* (Santa Barbara, CA: ABC-CLIO, 2019), 6.

19 Paul Bartrop, *Genocide: The Basics* (London and New York: Routledge, 2015), 2.

20 Raphael Lemkin, *Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin*, ed. Donna-Lee Frieze (New Haven: Yale University Press, 2013), 115.

21 Steven L. Jacobs, "Raphael Lemkin," in *Encyclopedia of Human Rights*, ed. David P Forsythe (Oxford/New York: Oxford University Press, 2009), 425.

22 Raphael Lemkin, *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation, Analysis of Government, Proposals for Redress*(Washington: Carnegie Endowment for International Peace, 1944), 79.

23 Լեմկինը դեռևս 21 տարեկանում լեզվաբանություն էր ուսումնասիրել Լվովի համալսարանում և վաղ տարիքից տիրապետում էր լեհերենին, գերմաներենին, ռուսերենին, ֆրանսերենին, իտալերենին, իդիշին և եբրայերենին: Samantha Power, *"A Problem from Hell": America and the Age of Genocide* (New York: Basic Books, 2002), 21.

ցագործությունն անվանվում էր «անանուն հանցագործություն»[24]: Այսինքն՝ Լեմկինը *ցեղասպանություն* եզրույթի ստեղծումը փորձում է հիմնավորել այդ հանցագործության բնորոշման բացակայությամբ: Եվ այդպես *genocide* բառն սկսեցին թարգմանել և կիրառել նաև այլ լեզուներում:

Ցեղասպանություն եզրույթի ստեղծումը

Այս համատեքստում ամենակարևոր հարցն այն է, թե արդյոք հանցագործությունն անանո՞ւն էր, ինչպես ներկայացնում է Լեմկինը, թե՞ ցեղասպանության վերաբերյալ բնորոշումներ արդեն իսկ կային անգամ Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում և դրանից առաջ՝ նախքան 1941 թ. օգոստոսին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը ռադիո հեռարձակմամբ կհայտարարեր, թե «ականատես ենք մի հանցագործության, որն անուն չունի»[25]:

Դեռևս Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ հայերի դեմ Օսմանյան կայսրության գործողությունները որակվել էին որպես հանցագործություն: Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը 1915թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրում այն բնորոշում էին «Մարդկության դեմ ուղղված հանցագործություն» (crime against humanity) եզրույթով[26]: Իսկ, օրինակ, Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն նշում էր. «Ես խորապես համոզված եմ, որ սա դարերի ամենամեծ հանցագործությունն է»[27]:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ փաստերը ցույց են տալիս, թե հայերի դեմ Օսմանյան կայսրության կատարած գործողություններն արդեն իսկ ստացել էին *ցեղասպանություն* բնորոշումը: Դրանցում նախքան *ցեղասպանություն* եզրույթի ստեղծումը առկա էր ժողովրդի և ցեղի սպանության մասին ձևակերպումը: Եվ ուշագրավն այն է, որ այդպիսի ձևակերպումները սկսվել են կիրառվել դեռևս նախքան 1915 թ.՝ 1894-1896 թթ. հայերի զանգվածային ջարդերի կամ Համիդյան կոտորածների ժամանակ:

Պատահական չէ, որ ցեղասպանություն եզրույթի գերմանական տարբերակը՝ *Völkermord* եզրույթը (գերմաներենից *Volk* թարգմանվում է ժողովուրդ, ազգ, և *Mord՝* սպանություն), Գերմանիայի քրիստոնեական ամսագրերում հիշատակվում էր դեռևս 1896 թ.: Գերմանացի բողոքական աստվածաբան, Հալլե Վիտտենբերգի համալսարանի պրոֆեսոր Վիլլիբալդ Բայշլագը «Deutsch-evangelische blätter» ամսագրում 1896 թ. սկզբին գրում է. «Այլևս հնարավոր չէ ժխտել, որ մի քանի տարվա

---

24 Raphael Lemkin, "Genocide," *American Scholar* 15, no. 2 (1946): 227-230, http://www.preventgenocide.org/lemkin/americanscholar1946.htm.

25 John Heidenrich, *How to Prevent Genocide: A Guide for Policymakers, Scholars, and the Concerned Citizen* (Westport, CT: Praeger Publishers, 2001), 3.

26 Վիգեն Քոչարյան, *Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում* (Երևան, հեղ. հրատ., 2014), 8:

27 Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence and Oxford: Berghahn Books, 2003), 421.

ընթացքում թուրքական կառավարությունը և բնակչությունն արյունոտ փորձ են կիրառել, որը մոտ է *Völkermord*-ի փորձին»[28]:

Նշենք, որ *Völkermord* եզրույթը ձևակերպել է 1831 թ. գերմանացի բանաստեղծ կոմս Պլատեն-Հալերմյունդին. նա այն կիրառել է ռուսների կողմից լեհական հեղափոխությունը դաժանորեն ճնշելու գործողությունները նկարագրելու համար[29]: Հետաքրքրական է նաև, որ Եվրոպայում աքսորի մեջ գտնվող առաջատար երիտթուրքերից Մուսթաֆա Ռեզիկը 1899 թ. դատապարտեց օսմանյան սուլթանի գործողությունները՝ նրա իշխանությունը բնութագրելով *volkmörderischen Regierung* (ցեղասպան կառավարություն) գերմանական ձևակերպման միջոցով: Ընդ որում՝ նա օսմանյան իշխանությունների ցեղասպանական գործողություններին էր ներառում նաև հայերի կոտորածները[30]:

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայերի դեմ Օսմանյան կայսրության կատարած գործողությունները բնորոշելու համար գերմանացի դիվանագետներն օգտագործում էին հենց *Völkermord* եզրույթը[31]: 1919 թ. գերմանացի հասարակական գործիչ, հոգևորական և արևելագետ Յոհաննես Լեփսիուսը իր վերախմբագրած «Հայ ժողովրդի մահվան ճանապարհը» **զեկուցման** նախաբանում գրում էր. «Որքան էլ մեր երկրում վատ թվա մեր դժբախտությունը, չի կարող համեմատվել այս *Völkermord*-ի հետ, որը երիտթուրքերի խղճի վրա է»[32]: Եվ մինչև հիմա էլ գերմաներենում ցեղասպանության բնորոշման համար կիրառվում է հենց *Völkermord* բառը:

Իսկ փաստերը վկայում են, որ Լեմկինը ոչ միայն տեղյակ էր այս եզրույթի գոյությանը, այլև անհրաժեշտության դեպքում հենց ինքն էլ օգտագործում էր այն: Նա անգամ *Völkermord* գերմաներեն տարբերակը համարժեք է համարել *ցեղասպանություն* եզրույթին: Դրանով է պայմանավորված, որ «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» գրքի IX գլխի գերմաներեն տարբերակում Լեմկինը *ցեղասպանություն* (Genocidium) եզրույթն ավելի հասկանալի դարձնելու համար որպես դրան համարժեք արտահայտություն փակագծում նշում է նաև *Völkermord* եզրույթը[33]:

---

28 Stefan Ihrig, *Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler* (Cambridge, MA and London: Harvard University Press, 2016), 55.

29 Kurt Jonassohn and Karin Solveig Bjo.rnson, *Genocide and Gross Human Rights Violations: In Comparative Perspective* (New Brunswick, NJ: Transaction Publishers, 1998), 140.

30 Matthias Bjørnlund, "'The Big Death': Finding Precise Terminology for the Murder of the Armenian People," 23 April 2015, *The Armenian Mirror-Spectator*, https://mirrorspectator.com/2015/04/23/the-big-death-finding-precise-terminology-for-the-murder-of-the-armenian-people/#_edn2.

31 Wolfgang Gust (ed.), *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916* (New York and Oxford: Berghahn Books, 2014), 126.

32 Hans-Lukas Kieser, "Johannes Lepsius: theologian, humanitarian activist and historian of "Völkermord": an approach to a German biography (1858-1926)," in *Logos im Dialogos: Auf der Suche nach der Orthodoxie*, eds. Anna Briskina, Armenuhi Drost-Abgarjan and Axel Meissner (Berlin: LIT Verlag Münster, 2011), 225.

33 AJHS, Raphael Lemkin Collection, P-154, Box 5, Folder 8, "Axis Rule in Occupied Europe," by Lemkin, Chapter 9 of Manuscript (German) on Genocide, 1944, 1.

Այս ամենը վկայում է այն մասին, որ ցեղասպանության հանցագործությունը բնորոշելու նպատակով Լեմկինը դիտարկել է *Völkermord* պատրաստի տարբերակը, սակայն փորձել է ստեղծել նոր եզրույթ:

Ուշագրավ է, որ գերմաներենում *Völkermord* եզրույթը մինչև այսօր էլ կիրառվում է ցեղասպանություն երևույթը բնութագրելու համար: Ուստի դրանով է պայմանավորված, որ Գերմանիայի Դաշնության Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին 2016 թ. հունիսի 2-ին ընդունված բանաձևում[34] միայն *Völkermord* եզրույթն է օգտագործվում, և որևէ հիշատակում չկա *ցեղասպանություն* եզրույթի վերաբերյալ: Իսկ մինչ այդ՝ 2015 թ. ապրիլի 23-ին, Գերմանիայի նախագահ Յոահիմ Գաուկը Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածներն անվանել էր ցեղասպանություն՝ օգտագործելով *Völkermord* եզրույթը, ինչպես նաև նշել, որ հայ ժողովուրդը զոհ է գնացել Օսմանյան կայսրության ցեղասպանական դինամիկային՝ օգտագործելով *genozidale Dynamik* ձևակերպումը[35]:

Նախքան Լեմկինի կողմից եզրույթի ստեղծումը, կիրառվել է նաև ցեղասպանու-թյան շվեդերեն համարժեքը՝ *Folkmord*: Կովկաս կատարած ճանապարհորդությունից հետո շվեդ գրող և միսիոներ Մարիա Անհոլմը 1906 թ. գրում է «Det dödsdömda folkets saga» (Դատապարտված մարդկանց պատմությունը) գիրքը, որտեղ նա խոսում է 1894-1896 թթ. հայերի դեմ Համիդյան կոտորածների մասին: Եվ համարվում է, որ նա առաջինն էր Շվեդիայում, ով օգտագործեց *folkmord* եզրույթը: Անհոլմը մասնավորապես նշում է. «Հայաստանի հեքիաթը գրված է արյունով և արցունքներով: Ցեղասպանությունը (folkmord), որին մենք ականատես եղանք, արյունահեղ մեծ դրամայի միայն վերջին գործողությունն է, հավատքի և ազատության համար դարավոր ճակատամարտի ավարտը... Մինչև այսօր հայը մահանում է իր հավատքի համար»[36]:

Ուշագրավ է, որ շվեդ քաղաքական գործիչ Կառլ Յալմար Բրանթինգը, որը 1920-1925 թթ. զբաղեցրել է Շվեդիայի վարչապետի պաշտոնը, 1917 թ. մարտի 26-ին Ստոկհոլմում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ օգտագործել է *folkmord* բառը՝ հայության հալածանքները որակելով «կազմակերպված և համակարգված ցեղասպանություն. ավելի դաժան, քան այն, ինչ երբևէ տեսել են Եվրոպայում»[37]: 2010 թ. մարտի 11-ին Շվեդիայի խորհրդարանի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձևում հատուկ ընդգծվում է, որ Բրանթինգը հենց առաջին մարդն է, որը Լեմկինից վաղ օգտագործել է *ցեղասպանություն* բառը (folkmord)[38]:

---

34 Deutscher Bundestag, "Erinnerung und Gedenken an den Völkermord an den Armeniern und anderen christlichen Minderheiten in den Jahren 1915 und 1916," https://dserver.bundestag.de/btd/18/086/1808613.pdf.

35 Joachim Gauck "Worte des Gedenkens im Anschluss an den ökumenischen Gottesdienst anlässlich der Erinnerung an den Völkermord an Armeniern, Aramäern und Pontos-Griechen," 23 April 2015, https://www.bundespraesident.de/SharedDocs/Reden/DE/Joachim-Gauck/Reden/2015/04/150423-Gedenken-Armenier.html, դիտվել է՝ 07.07.2022:

36 Maria Anholm, *Det dödsdömda folkets saga* (Stockholm: Aktienbolaget Ljus, 1906), 3.

37 Vahagn Avedian (ed.), *Armeniska Folkmordet 1915: Frågor och svar. Armeniska riksförbundet i Sverige* (Lund: Lund University, 2010), 29-30.

38 Swedish Parliament Resolution, 11 March 2010,

Իսկ Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում Շվեդիայի ռազմական կցորդ Էյնար աֆ Վիրսենը, որը Հայոց ցեղասպանության ականատեսներից է, 1942 թ. տպագրել է իր հուշագրությունը և Օսմանյան կայսրությունում հայերի ոչնչացման կազմակերպված բնույթին, սպանության մեթոդներին նվիրված հատվածը վերնագրել «Մի ժողովրդի սպանություն» (Mordet på en nation)[39]:

Պետք է նկատի ունենալ, որ նացիստների՝ Լեհաստան ներխուժելուց հետո Լեմկինը այդ երկրից Լիտվայով տեղափոխվում է Շվեդիա: 1940-1941 թթ. ապրում է Ստոկհոլմում և դասավանդում տեղի համալսարանի քոլեջում: Շվեդիայում նա սովորում է շվեդերեն՝ 5 ամիս հետո կարողանալով այդ լեզվով դասախոսել: Շվեդիայում գտնվելու ընթացքում էլ իրավաբանը հասցնում է հավաքել է «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատության համար նյութերի զգալի մասը[40]:

Նշենք նաև, որ նմանատիպ եզրույթ էր կիրառվում նաև Նորվեգիայում: Նորվեգացի գրականության պատմաբան Քրիստեն Քոլին 1917 թ. գրում էր. «Նրանք (թուրքերը – Ն.Պ.), չբավարարվելով մի ամբողջ ժողովրդի իր կացարաններից օտար երկիր վտարելով, սպանեցին և երբեմն նույնիսկ խոշտանգեցին մեծահասակ տղամարդկանց, կողոպտեցին և ստրկության վաճառեցին ամենագրավիչ կանանց ու երեխաներին, իսկ մնացածներին տարան անապատներ կամ ճահիճներ, որտեղ ճնշող մեծամասնությունը պետք է մահանար: Կարդացեք այս *folkemord*-ի (ցեղասպանության) պատմությունը, որը սկսվել է 1915 թ. ապրիլին...»[41]: Նույն թվականին Նորվեգիայում գրող Առնե Գարբորգը, իր հրատարակած օրագրում նկարագրելով Հայոց ցեղասպանությունը, կրկին կիրառում է *folkemord* եզրույթը[42]: 1925 թ. դանիացի մտավորական, լեզվաբան և աշխարհագրագետ Ագե Մայեր Բենեդիկտսենը ևս կիրառում է *folkemord* եզրույթը[43]:

Դեռևս 1943 թ., երբ Լեմկինը չէր հրապարակել «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատությունը, իր նամակներից մեկում լեհական դիմադրության ներկայացուցիչ, Լեհաստանի հետախուզական ծառայության անդամ Կրիշտինա Վիտուշկան Լեհաստանում գերմանական վայրագությունները նկարագրում է որպես սառնասիրտ ցեղասպանություն: Նա օգտագործում է գերմաներեն *Völkermord* և լեհերեն *ludobójstwo* բառերը, որոնք նույնիսկ պատերազմից առաջ էին կիրառվում[44]: *Ludo* բառը լեհերեն նշանակում է ժողովուրդ,

---

http://www.genocide-museum.am/eng/Sweden_Parliament_Resolution.php, դիտվել է՝ 07.07.2022:

39 Einar af Wirsén, *Minnen från fred och krig* (Stockholm: Bonnier, 1942), 220-226.

40 Mark Klamberg, Raphaël Lemkin in Stockholm – Significance for his Work on "Axis Rule in Occupied Europe," *Genocide Studies and Prevention: An International Journal* 13, no 1 (2019): 64-87.

41 Christen Collin, *Verdenskrigen: og det store tidsskifte* (Kristiania, København: Gyldendalske, 1917), 161.

42 Arne Garborg, *Dagbok 1905-1923* (Oslo: H. Aschehoug & Company (W. Nygaard), 1926), 81.

43 Matthias Bjørnlund, "'The Big Death."

44 Krystyna Wituska and Irene Tomaszewski, *Inside a Gestapo Prison: The Letters of Krystyna Wituska, 1942-1944* (Detroit: Wayne State University Press, 2006), xiii.

իսկ *zabójstwo* բառը՝ սպանություն: Լեմկինի կողմից ցեղասպանություն եզրույթի ներկայացումից հետո *ludobójstwo*-ն սկսվեց կիրառվել Լեհաստանում գերմանացի պատերազմական հանցագործների դատավարությունների ժամանակ[45]:

Իսկ Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն դեռևս 1918 թ. իր հուշերը շարադրելիս օգտագործել է «The Murder of a Nation» (Մի ազգի սպանություն) անգլերեն ձևակերպումը, որով և վերնագրել է իր գրքի 24-րդ գլուխը[46]: Ուշագրավ է, որ Մորգենթաուի աշխատանքներն առանցքային նշանակություն են ունեցել Լեմկինի համար և մեծապես ազդել են նրա հետագա գործունեության վրա: ԱՄՆ-ում հաստատվելուց հետո, երբ Լեմկինը սկսում է դասավանդել Դյուկի և Յեյլի համալսարաններում, Հիտլերի՝ նոր տարածքներ գրավելու և ժողովուրդներին ոչնչացնելու ծրագրերը բացատրելու համար օրինակներ էր բերում պատմությունից, մասնավորապես ներկայացնում էր, թե ինչպես է Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն փորձել փրկել հայ ժողովրդին ցեղասպանությունից[47]:

Պատահական չէ, որ ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբաման 2016 թ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա կապակցությամբ հղած իր ուղերձում ընդգծում է Լեմկինի վրա Մորգենթաուի ունեցած յուրահատուկ ազդեցության մասին: «...ԱՄՆ դեսպան սըր Հենրի Մորգենթաուն տագնապի ազդանշան հղեց ԱՄՆ իշխանություններին և օսմանյան ղեկավարությանը՝ փորձելով դադարեցնել բռնությունները: Մորգենթաուի և նրա նման անձանց ջանքերն առանցքային նշանակություն ունեն ապագայում այդօրինակ վայրագությունները կանխելու գործում, իսկ նրա ժառանգությունն ավելի ուշ իր ազդեցությունը թողեց այնպիսի իրավապաշտպանների աշխատանքի վրա, ինչպիսին էր Ռաֆայել Լեմկինը, որը իր ներդրումն ունեցավ ՄԱԿ-ում մարդու իրավունքների առաջին պայմանագրի ընդունման գործում»,– ասվում է ուղերձում[48]: Եվ այն հանգամանքը, որ ցեղասպանության հայեցակարգը ձևավորելիս Մորգենթաուի ժառանգությունը հատուկ նշանակություն է ունեցել Լեմկինի համար, մեծ անհանգստություն է առաջ բերում ժխտողականների շրջանում[49]:

---

45 Grzegorz Motyka, "Were the Massacres of Poles in Volhynia and Eastern Galicia in 1943–1945 Genocide? A Discussion about the Legal Classification of the 'Anti-Polish Operation' Conducted by the Ukrainian Insurgent Army," in *Social Engineering in Central and South-East Europe in the Twentieth Century Reconsidered*, eds. Grzegorz Motyka, Joanna Szymoniczek, Mariusz Zajączkowski, Piotr Madajczyk, Tomasz Stryjek, Wanda Jarząbek (Warszawa: Politycznych Polskiej Akademii Nauk, 2017), 58.

46 Henry Morgenthau, *Ambassador Morgenthau's Story* (Garden City, N.Y.: Doubleday, 1918), 301.

47 Նարեկ Պողոսյան, *Հայոց ցեղասպանության խնդիրը Ռաֆայել Լեմկինի ուսումնասիրություններում* (Երևան, ՀՑԹԻ, 2020), 44-45:

48 The White House Office of the Press Secretary, "Statement by the President on Armenian Remembrance Day," April 22, 2016, https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2016/04/22/statement-president-armenian-remembrance-day, դիտվել է՝ 10.05.2022:

49 Buenos T., "Many Genocides of Raphael Lemkin," *Daily Sabah*, September 11, 2014, http://www.dailysabah.com/opinion/2014/09/11/many-genocides-of-raphael-lemkin; Şükrü Server Aya, "Raphael Lemkin›s Armenianism & "G" Witnessing Unfolded!," https://avim.org.tr/Blog/RAPHAEL-LEMKIN-S-ARMENIANISM-G-WITNESSING-UNFOLDED, դիտվել է՝ 08.06.2022:

Ցեղասպանություն եզրույթի համարժեքներն այլ լեզուներում

Նկատենք, որ ցեղասպանությանը համարժեք հունարեն *γενοκτονία* (genoktonia) բառն ունի հին ծագում[50]: *γένος* (genos) բառը հին հունարենում նշանակում է սերունդ, ընտանիք, ազգ, ռասա[51], իսկ *κτονία* (ktonía) բառը՝ սպանել[52]: 20-րդ դարի սկզբին այս եզրը Հունաստանում նախնառաջ կիրառվել է հայերի հալածանքներն Օսմանյան կայսրությունում նկարագրելու համար[53]: Միևնույն ժամանակ, այս եզրույթի միջոցով է հունարենում տրվում *Հունաց ցեղասպանություն* սահմանումը (հունարեն՝ *Γενοκτονία των Ελλήνων, Genoktonia ton Ellinon*), որը ներառում է 1914–1923 թթ. Օսմանյան կայսրությունում հույն բնակչության համակարգված ոչնչացումը[54]:

Հենց *γένος* (genos) հունարեն բառն է, որ Լեմկինն օգտագործել է *genocide* եզրույթը ստեղծելու համար: Ուշագրավ է, որ *κτονία* (ktonía) հունարեն բառը համարժեք է լատիներեն *-cidium* վերջածանցին, որը սպանել նշանակությունն ունի[55], ու Լեմկինն այն ևս օգտագործել է *ցեղասպանություն* եզրույթը ստեղծելիս: Իսկ այն հարցի շուրջ, թե նա գիտեր *γενοκτονία* (genoktonia) բառի մասին, միայն կարելի է ենթադրություններ կատարել:

Ցեղասպանություն բառին կարելի է հանդիպել նաև այլ ժողովուրդների լեզուներում: Օրինակ՝ հարավաֆրիկյան զուլու լեզվում դեռևս 1830-ական թթ. հայտնի դարձավ *izwekufa* բառը[56]: 1810-1828 թթ. Զուլուների թագավորությունն իր բռնապետ առաջնորդ Շակա Զուլուի օրոք իրականացնում է երկրի տարածքի ընդլայնման և այլ ցեղերի ոչնչացման ամենահավակնոտ արշավանքներից մեկը: Նա ստեղծել էր հզոր ռազմական ուժ, որի միջոցով ներկայիս Հարավային Աֆրիկայի և Զիմբաբվեի հսկայական տարածքներն ավերվում են զուլուների բանակի կողմից: Պատմաբան Ադամ Ջոնսն ընդգծում է, որ ավերածությունների ծավալները, զոհերի ոչնչացման գործընթացն այնպիսին էին, որ համեմատաբար քիչ պատմական ապա-ցույցներ են մնացել այդ սարսափների մասին, իսկ վկայությունները մնացել են տարածաշրջանի ժողովուրդների բանավոր ավանդույթներում[57]:

---

50 Jeremy Sarkin, *Colonial Genocide and Reparations Claims in the 21st Century: The Socio-Legal Context of Claims under International Law by the Herero against Germany for Genocide in Namibia, 1904-1908* (Westport, CT: Praeger Security International, 2009), 109.

51 WordSense Dictionary, "γένος," https://www.wordsense.eu/%CE%B3%CE%AD%CE%BD%CE%BF%CF%82/#Greek, դիտվել է՝ 07.06.2022:

52 WordSense Dictionary, "κτονία," https://www.wordsense.eu/-%CE%BA%CF%84%CE%BF%CE%BD%CE%AF%CE%B1/#Greek, դիտվել է՝ 07.06.2022:

53 Sevasti Trubeta, *Physical Anthropology, Race and Eugenics in Greece (1880s-1970s)* (Leiden and Boston: Brill, 2013), 251.

54 "Hellenic (Greek) Genocide," https://www.greece.org/genocide/, դիտվել է՝ 07.06.2022:

55 Glosbe Greek-Latin dictionary, "κτονία in Latin," https://glosbe.com/el/la/-%CE%BA%CF%84%CE%BF%CE%BD%CE%AF%CE%B1, դիտվել է՝ 08.06.2022:

56 Jeremy Sarkin, *Colonial Genocide*, 109.

57 Adam Jones, *Genocide: A Comprehensive Introduction* (London/New York: Routledge, 2006), 7.

Պատմաբան Մայքլ Մահոնին նշում է, որ զուլուների բանակի նպատակը ոչ միայն թշնամիների պարտությունն էր, այլև նրանց լիակատար ոչնչացումը: Եվ ոչնչացվածների թվում էին ոչ միայն զինվորները, այլև ռազմագերիները, կանայք, երեխաները և նույնիսկ շները[58]: Մահոնին ժողովուրդների ամբողջական ոչնչացման տեսանկյունից Շակայի գործողությունները բնորոշում է որպես ցեղասպանություն, և նա պատահական չի համարում, որ զուլու լեզվում Շակայի արշավանքները նկարագրելու համար կիրառվել է *izwekufa* եզրույթը, որը կազմված է այդ լեզվով *izwe* (ազգ, ժողովուրդ, քաղաքականություն) և *ukufa* (մահ, մեռնող, մեռնել) բառերից: Եվ այս եզրույթն իր իմաստով ու ստուգաբանությամբ նույնական է ցեղասպանությանը[59]:

Ցեղասպանություն եզրույթի թուրքերեն թարգմանությունը *soykırımı*-ն է, որը կարող է թարգմանվել որպես ցեղի սպանդ, կոտորած: Թուրք գիտնականները, որոնք փորձում են Հայոց ցեղասպանության հետ կապված հարցերով այսպես կոչված երկխոսություն սկսել թուրքական հասարակության մեջ, հաճախ նախընտրում են օգտագործել թուրքերեն *kırım* բառը՝ այդպիսով հեռացնելով ցեղային բաղադրիչը և դրանով իսկ ընդգծելով, որ 1915 թ. ընդամենը տեղի է ունեցել սպանդ, կոտորած: Կամ էլ օգտագործում են *katliam* բառը, որն իր իմաստով մոտավորապես համարժեք է ջարդերին[60]:

1919 թ. հուլիսի 5-ին, երբ Ստամբուլի զինվորական դատարանը հեռակա դատապարում է երիտթուրքերի պարագլուխներին, օգտագործում է *taktil* (կոտորած) բառը, որն օսմանյան թուրքերեն տերմին է, սակայն մի շարք թուրք գիտնականներ այն թարգմանել են ժամանակակից բնորոշմամբ՝ *soykırım* (ցեղասպանություն) բառի միջոցով[61]: Թուրք պրոֆեսոր, սահմանադրական իրավունքի մասնագետ Թարրը Զաֆեր Թունայան դատարանի կողմից Հատուկ կազմակերպության մեղսակցության հարցը դիտարկելիս նպատակահարմար է գտնում կիրառել հենց թուրքական *soykırım* եզրույթը[62]:

Ուշագրավ է, որ Անկարայում ԱՄՆ դեսպանատունը Twitter-ում նախագահ Բարաք Օբամայի՝ 2016 թ. ապրիլքսանչորսյան ուղերձը տարածելիս թարգմանության մեջ կիրառում է ցեղասպանության թուրքական տարբերակը՝ *soykırım* եզրույթը[63]: Նշենք, որ նախագահն իր ելույթում օգտագործել էր Մեծ Եղեռն ձևակերպումը[64]:

---

58 Michael R. Mahoney, "The Zulu Kingdom as a Genocidal and Post-genocidal Society, c. 1810 to the Present," *Journal of Genocide Research* 5, no 2 (2003): 254.

59 Նույն տեղում, 255:

60 Fatma Müge Göçek, "Turkish Historiography and the Unbearable Weight of 1915," in *The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies*, ed. Richard Hovannisian (New Brunswick, N.J.: Transaction Publishers, 2007), 338.

61 Ben Kiernan, *Blood and Soil: A World History of Genocide and Extermination from Sparta to Darfur* (New Haven: Yale University Press, 2007), 415.

62 Vahakn N. Dadrian and Taner Akçam, *Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials* (New York: Berghahn Books, 2011), 142.

63 "Ankara's US Embassy Uses 'G' Word when Tweeting Obama's April 24 Statement," *Asbarez*, 26 April 2016, https://asbarez.com/ankaras-us-embassy-uses-g-word-when-tweeting-obamas-april-24-statement/, դիտվել է՝ 13.05.2022:

64 The White House Office of the Press Secretary "Statement by the President on Armenian Remembrance

Երբ Թուրքիայում սոցկայքերի օգտատերերն անմիջապես սկսեցին աղմուկ բարձրացնել այդ բառի օգտագործման առնչությամբ, ԱՄՆ-ի դեսպանատունը շտապեց Twitter-ից հեռացնել տարածված հայտարարությունը: Խոսելով «Daily Sabah» թուրքական թերթի հետ՝ դեսպանատան ներկայացուցիչը նշեց, որ տեղի ունեցածը զուտ թարգմանության սխալ է և ներողություն է հայցում նման զգայուն հարցում թույլ տված սխալի համար[65]: Այս ամենը ևս ցույց է տալիս, որ այլ լեզուներով *ցեղասպանություն* հասկացությունն արտահայտող բառերի նշանակությունը հավասարազոր է ցեղասպանություն եզրույթի կիրառմանը կամ այդպես է ընկալվում:

Իսկ ինչ վերաբերում է այն իրողությանը, որ Լեմկինը *ցեղասպանություն* եզրույթը ստեղծել է համանմանության հիման վրա[66]՝ նկատի առնելով *homicide* (մարդասպանություն) և *fratricide* (եղբայրասպանություն) եզրույթները[67], ապա պետք է նկատել, որ նմանատիպ եզրույթների կիրառումը տեղի է ունեցել Լեմկինից 150 տարի առաջ՝ դեռևս Ֆրանսիական հեղափոխության ժամանակ: Ֆրանսիացի հեղափոխական Գրակչուս Բաբեֆը 1794 թ. հրապարակեց «La Guerre de la Vendée et le système de dépopulation» (Վանդեայի պատերազմը և դեպոպուլյացիայի համակարգը) գիրքը, որում վերլուծելով Վանդեայի[68] կոտորածների հանգամանքները և դրդապատճառները՝ փորձում էր դրանք սահմանել՝ օգտագործելով այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են՝ *populicide*, *plebiscite* և նույնիսկ *nationcide*[69]: Նա ընդգծում էր, որ Փարիզից բնաջնջման պլանով Վանդեա ուղարկվեցին զորքեր՝ սպանելու այդ տարածքում ապրող ազգերին[70]: Իսկ, օրինակ, Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում հայտնի քաղաքական գործիչ Մերլին դը Թիոնվիլը Մայնցում հորդորում էր Փարիզի իր գործընկերներին մահվան դատապարտել Լյուդովիկոս XVI-ին՝ նրան ծաղրաբար անվանելով *nationcide* (ազգասպանություն)[71]:

Day," 22 April 2016, https://obamawhitehouse.archives.gov/the-press-office/2016/04/22/statement-president-armenian-remembrance-day, դիտվել է՝ 13.05.2022:

65 "Huge gaffe from US Embassy, flouts Obama's stance on 1915 events," *Daily Sabah*, 25 April 2016, https://www.dailysabah.com/diplomacy/2016/04/25/huge-gaffe-from-us-embassy-flouts-obamas-stance-on-1915-events.

66 Նշենք, որ համանմանության հիման վրա *ցեղասպանություն* (genocide) եզրույթի հետ մեկտեղ Լեմկինը ներկայացնում է նաև *էթնոցիդ* (ethnocide) բառը՝ նշելով, որ *էթնոցիդ* եզրույթն այլընտրանք է *ցեղասպանություն* հասկացությանը: *Էթնոցիդը* (Ethnocide) բաղկացած է հունարեն *ethnos* (ազգ) և լատիներեն *cide* (սպանել) բառերից: Սակայն ժամանակի ընթացքում *էթնոցիդ* հասկացությունը վերափոխման է ենթարկվել և օգտագործվում է մշակութային ցեղասպանության իմաստով:

67 James Martin, *The Man Who Invented Genocide: The Public Career and Consequences of Raphael Lemkin* (Torrance: Institute for Historical Review, 1984), 3; Raphael Lemkin, "Genocide - A Modern Crime," *Free World* 9, no 4 (1945): 39-43.

68 Խոսքը վանդեական պատերազմների մասին է՝ Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում Ֆրանսիայի Վանդեա շրջանում տեղի ունեցած 1793-1796 թթ. ռոյալիստական հակահեղափոխության:

69 Stéphane Courtois, "Raphael Lemkin and the Question of Genocide under Communist Regimes," *in Rafał Lemkin: A Hero of Humankind*, ed. Bienczyk-Missala A. and Sławomir Dębski (Warsaw: The Polish Institute of International Affairs, 2010), 127-128.

70 Douglas Irvin-Erickson, *Raphael Lemkin and the Concept of Genocide* (Philadelphia: University of Pennsylvania Press, 2017), 83.

71 Jordan R. Hayworth, *Revolutionary France's War of Conquest in the Rhineland: Conquering the Natural*

Այսպիսով, փաստերը ցույց են տալիս, որ նախքան Լեմկինի կողմից *ցեղասպանություն* եզրույթի ստեղծումը, ցեղասպանության երևույթը բնորոշվել է տարբեր լեզուներում ցեղի և ժողովրդի սպանություն նշանակող արտահայտություններով, որոնցով հիմնականում նկարագրում էին հայ ժողովրդի դեմ Օսմանյան կայսրության կատարած հանցագործությունները: Այսինքն՝ այդ հանցագործությունն անանուն չէր, ինչպես վկայում է Լեմկինը՝ հղում կատարելով Չերչիլի հայտարարությանը:

Այլ հարց է, որ այդ հանցագործությունն իրավական սահմանում չուներ: Եվ Լեմկինն ի վերջո հրաժարվեց բարբարոսություն և վանդալիզմ հանցագործությունների մասին իր առաջարկներից ու, օգտվելով գոյություն ունեցող ժողովրդի և ցեղի սպանությունը բնորոշող այլ արտահայտություններից, կազմեց *ցեղասպանություն* եզրույթը և փորձեց ներկայացնել այդ հանցագործության իրավական սահմանումը և նկարագրությունը:

"A CRIME WITHOUT A NAME": SOME OBSERVATIONS ON THE ORIGINS OF THE TERM GENOCIDE

Narek M. Poghosyan
Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

The article analyzes the historical background of the development of the term genocide by Raphael Lemkin. He tried to justify the need for the creation of the term by the fact that before he defined the crime of genocide, it did not even have a formal name, while Churchill called it "a crime without a name."

However, this research demonstrates that before Churchill declared it "a crime without a name," there were some definitions of genocide during the Second World War and even before that. It is particularly noteworthy that the actions carried out by the Ottoman Empire against the Armenians were already characterized in different languages by expressions meaning the murder of the race or the people.

In other words, although the crime was not anonymous, it had no legal definition. Raphael Lemkin gave his own wording of the crime along with presenting it.

Key words: Raphael Lemkin, the crime of crimes, barbarism, vandalism, "a crime without a name". genocide, "Völkermord," "folkmord."

Frontier, 1792-1797 (Cambridge: Cambridge University Press, 2019), 87.

“ПРЕСТУПЛЕНИЕ БЕЗ ИМЕНИ”: НЕКОТОРЫЕ НАБЛЮДЕНИЯ О ПРОТОТИПЕ ТЕРМИНА ГЕНОЦИД

Нарек М. Погосян
Фонд “Музей-Институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

В статье анализируются исторические предпосылки формулировки термина «геноцид» Рафаэлем Лемкиным. Необходимость создания термина “геноцид” Лемкин пытался обосновать тем, что до того, как он дал определение этому преступлению, оно не имело даже формального названия, а Черчилль называл это преступление “преступлением без имени.”

Но факты показывают, что до того, как Черчилль объявил “преступлением без имени”, существовали определения геноцида во время Второй мировой войны и даже до нее. Особо примечательно, что действия Османской империи против армян уже тогда характеризовались на разных языках выражениями, означающими убийство расы и народа. Иными словами, то преступление не было анонимным, другое дело, что это преступление не имело юридического определения, которому Лемкин пытался дать свою формулировку названия преступления наряду с его представлением.

Ключевые слова: Рафаэль Лемкин, преступление преступлений, варварство, вандализм, «безымянное преступление», геноцид, “Völkermord,” “folkmord”.

REFERENCES

Poghosyan, Narek. *Հայոց ցեղասպանության խնդիրը Ռաֆայել Լեմկինի ուսումնասիրություններում* [The Problem of the Armenian Genocide in the Studies of Raphael Lemkin]. Yerevan: AGMI, 2020;

Qoch’aryan, Vigen. *Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում* [The Armenian Genocide in International Legal Documents]. Yerevan: Author’s Publication, 2014.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Նարեկ Մ. Պողոսյան, պատմ. գիտ. թեկն., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից, տեխնոլոգիական առաջընթացը և ցեղասպանության իրագործման ռիսկերը, ցեղասպանությունների առանձին օրինակներ (Բանգլադեշ, Կամբոջա, Թիմոր, Անֆալ և այլն), համեմատական ցեղասպանագիտություն, էլիտիցիդ:

Էլ. փոստի հասցե՝ poghosyan.narek@genocide-museum.am

Narek M. Poghosyan, PhD in History, Researcher at the Comparative Genocide Studies Department, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: the study of the Armenian Genocide by Raphael Lemkin, technological progress and the risks of committing Genocide, other genocides (Bangladesh, Cambodia, Timor, Anfal campaign, etc.), comparative genocide studies, eliticide.

E-mail: poghosyan.narek@genocide-museum.am

Нарек М. Погосян, канд. ист. наук, научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – изучение проблемы Геноцида армян Рафаэлем Лемкиным, технологический прогресс и риски совершения геноцида, отдельные примеры геноцидов (Бангладеш, Камбоджа, Тимор, Анфаль и др.), сравнительное изучение геноцидов, элитицид.

Эл. почта: poghosyan.narek@genocide-museum.am

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՊԻԶՈՆՈՒՄ. ՎԱՂ ՓՈՒԼ ԵՎ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ

Լուսինե Յ. Աբրահամյան
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հոդվածում ներկայացվում է Օսմանյան կայսրությունում 1908 թ. հեղաշրջումից հետո Տրապիզոնի նահանգի հայ բնակչության դեմ երիտթուրքական կառավարության կողմից տարվող հակահայ քաղաքականությունը: Այն իրականացվում էր քարոզչության միջոցով, որն իր բացասական ազդեցությունն էր ունենում նահանգի հայության ինչպես հասարակական, այնպես էլ տնտեսական կյանքի վրա:
Հիմնվելով տարբեր սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկությունների վրա՝ հոդվածում ներկայացվում են 1908-1914 թթ. Տրապիզոնում հակահայ քաղաքականության դրսևորումների բազմաթիվ օրինակներ, քննության են առնվում հայերի դեմ ուղղված հալածանքները, դրանց կազմակերպման ու իրագործման որոշ մանրամասներ, ինչպես նաև պետության ներգրավվածության հարցը:
Տրապիզոնի նահանգում հստակ նպատակային դրսևորում ունեցած այդ քաղաքականության տրամաբանական շարունակությունը լինելու էր Հայոց ցեղասպանությունը, որն ակտիվացման փուլ մտավ երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, Հատուկ կազմակերպության նախագահ Բեհաեդդին Շաքիրի՝ Տրապիզոն գալուց հետո:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Տրապիզոն, հակահայկական քաղաքականություն, առևտրական բոյկոտ, տեղահանություն, իսլամացում, լքյալ գույք:

Հոդվածը ներկայացվել է՝ 13.05.2022: Ընդունվել է տպագրության՝ 26.10.2022:
The article was submitted on 13.05.2022and accepted for publication on 26.10.2022.
Статья поступила 13.05.2022 и была принята к публикации 26.10.2022.

Ինչպես հղել՝ Լուսինե Յ. Աբրահամյան, «Նախապատրաստելով Հայոց ցեղասպանությունը Տրապիզոնում. վաղ փուլ և ակտիվացում», *Ցեղասպանագիտական հանդես* 10, no. 2 (2022), 26-48:
How to cite: Lusine Y. Abrahamyan, “In Preparation for the Armenian Genocide in Trapizon: Early Phase and Activation,” *Tseghaspanagitakan handes* 10, no. 2 (2022): 26-48.
Как ссылаться: Лусине Ю. Абраамян, “Подготовка к исполнению Геноцида армян в Трапизоне: ранняя фаза и активация,” *Цехаспанагитакан андес* 10, no. 2 (2021): 26-48.

Ներածություն

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Տրապիզոնի նահանգում բնակվում էր 73 395 հայ, որից 5 539-ը՝ նահանգի կենտրոն Տրապիզոն քաղաքում[1]: 1894-1896 թթ. Համիդյան կոտորածներից հետո, որին զոհ գնաց նահանգի շուրջ 1 000 հայ[2], որոշ ժամանակ Տրապիզոնի հայության կյանքը հարաբերականորեն հանգիստ էր, սակայն բնակչության մեջ դեռ կար կոտորածների կրկնվելու տագնապը: 1908 թ. երիտթուրքերի հեղափոխությունը և նոր կառավարությունը հայերին սուլթանի կողմից խոստացված, բայց երբևէ չիրականացված բարեփոխումները կյանքի կոչելու հույսեր արթնացրին: Սակայն որոշ ժամանակ անց՝ Սահմանադրության հռչակումից հետո, այդ հույսերը, ինչպես նաև հայ և թուրք «եղբայրությունը» հօդս ցնդեցին, ու շարունակվեց հայահալած քաղաքականությունը[3]:

Տրապիզոնի հայության առաջին հիասթափությունը կապված էր 1908 թ. աշնանը Օսմանյան խորհրդարանի երեսփոխանների ընտրության հետ: 1908 թ. սեպտեմբերին, երբ նահանգի ժողովուրդը խորհրդարանական ընտրությունների եռուզեռի մեջ էր, մի անհայտ հեղինակ Տրապիզոն քաղաքի փողոցներում պատերին հայտարարություն է փակցնում, որում ասվում էր, որ հայերին և հույներին ազատություն տալ նշանակում է կործանել պետությունը, որ Օսմանյան պետությունն արդեն իսկ անկում է ապրում, հետևաբար իսլամի իրական բարեկամները պետք է լրջորեն մտահոգվեն ու համապատասխան քայլեր ձեռնարկեն հայերին բնաջնջելու ու պետությունը փրկելու նպատակով: Այդ մասին տպագրվում է նաև հոդված տեղական *Trabizonda Meşveret* թերթում[4]: Երեսփոխական ընտրություններին Տրապիզոնի նահանգի հայության կողմից Դաշնակցության կուսակցության թեկնածու առաջադրվեց Յ. Շահրիկյանը[5], որի շուրջ նախնական համաձայնություն էր ձեռք բերվել իթթիհաթականների հետ: Վերջիններս, օգտագործելով Առաջնորդ Էմմանուէլ վրդ. Պալյանի անունը, ով դեմ էր Յ. Շահրիկյանի թեկնածությանը, կարողանում են հայերի շրջանում քվեներ հավաքել[6]: Այս առիթով Տրապիզոնում Դաշնակցության կենտրոնական կոմիտեն Կ.Պոլսի գրասենյակին ուղղված նամակում գրում է, որ Տրապիզոնում ու մյուս ներքին գավառներում ոչինչ փոխված չէ, և իթթիհաթականների հետ հարաբերությունները թշնամական են[7]: Տրապիզոնի գյուղերում նույն կերպ

1 Raymond Kévorkian, Paul Paboudjian, *Les Arméniens de l'Empire Ottoman à la veille du génocide* (Paris: Editions d'Art et d'Histoire, 1994), 57:

2 Simon Payaslian, "The Fate of the Armenians in Trebizond, 1915," in *Armenian Pontus. The Trebizond-Black Sea Communities*, ed. Richard G. Hovhannisian (Costa Mesa, California: Mazda Publishing, 2009), 273.

3 Վարդան Գէորգեանց, «Ազգային խրտուիլակներ», *Պօնտոս* կիսամեայ թերթ (Տրապիզոն), 5 յունիսի 1910, թիւ 6-7-8-9, 61-62:

4 Յովակիմ Յովակիմեան (Արշակունի), *Պատմութիւն հայկական Պոնտոսի* (Պէյրութ, Տպագրութիւն Մշակ-ի, 1967), 206:

5 Նույն տեղում, 179:

6 Նույն տեղում, 190:

7 Նույն տեղում, 179-180:

շարունակվում էին թուրքական բարբարոսությունները, թուրք բեյերը կոպտորեն հայ-հոյում էին հայերին և Սահմանադրությունը, իսկ 1909 թ. սկզբներին իրավիճակն այնքան է լարվում, որ անհրաժեշտություն է առաջանում քաղաքապետարանում գումարելու ժողով՝ կուսակալի, զինվորական հրամանատարի և առաջնորդ Էմմանուել վրդ. Պալյանի մասնակցությամբ, որից հետո հայկական, հունական և թուրքական մամուլում եղբայրության և համերաշխության կոչերով հոդվածներ են տպագրվում[8]: Այդուհանդերձ, հայ և թուրք բնաչկության հարաբերությունները շարունակում են մնալ լարված[9]. Սահմանադրությամբ համաներման արժանացած բազմաթիվ ավազակներ հետապնդում ու թալանում էին հայերին, իսկ հետադիմական տարրերը զբաղված էին թուրք ավազակներին զինելով[10]: 1909 թ. մարտի 31-ին (նոր տոմարով՝ ապրիլի 13-ին) հեղաշրջման փորձից[11], այնուհետև Ադանայի կոտորածներից հետո հայերի մտահոգություններն իրենց անվտանգության հետ կապված ավելի խորացան: Տրապիզոնի հայությունը ևս թիրախավորվում է[12]: Այդ օրերին իրավիճակը Տրապիզոն քաղաքում բավականին լարված էր, Տրապիզոնի փողոցներում շրջում էին միայն ոստիկաններ, իսկ խանութները փակ էին[13]: Նման իրավիճակում Տրապիզոնի հայերի համար կենսական խնդիր է դառնում ինքնապաշտպանության կազմակերպումը: Մի շարք դաշնակցական գործիչներ ինքնապաշտպանության միջոցներ են ձեռնարկում, գյուղերում երիտասարդների համար զինավարժություններ անցկացնում[14]: Տրապիզոնում Դաշնակցության կենտրոնական կոմիտեի նախաձեռնությամբ ստեղծվում է ինքնապաշտպանական մարմին, որը, համագործակցելով հնչակյան գործիչների հետ, կապ էր պահում նահանգի գյուղերի հայ բնակչության հետ[15]: Երբ սուլթան Աբդուլ Համիդ II-ին գահընկեց անելու մասին լուրերը հասնում են Տրապիզոն[16], իրավիճակը հարաբերականորեն կայունանում է, վերսկսվում է «սահմանադրական խանդավառությունը»[17], որը, սակայն, երկար չի տևում: Ըստ ականատեսների

---

8 Նույն տեղում, 188:

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում, 180:

11 1908թ. երիտթուրքերի հեղափոխությունից հետո Աբդուլ Համիդ II-ը, փորձելով վերականգնել սուլթանական բացարձակ միապետությունը, 1909 թ. մարտի 31-ին հեղաշրջում է կազմակերպում: Սակայն կառավարությանը հավատարիմ զորքերը՝ Օսմանյան երրորդ բանակը, վերականգնում են երիտթուրքերի իշխանությունը: Սուլթանը գահընկեց է արվում: Երիտթուրքերը գահ են բարձրացնում նրա եղբորը՝ Մահմեդ V-ին (1909-1918): Vahakn N. Dadrian, *The History of the Armenian Genocide. Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence, Oxford: Berghahn Books, 1995), 181.

12 Միսաք Թոռլաքեան, *Օրերուս հետ*, Բ հրատարակութիւն (Պէյրութ, ՀԱՅԿ – Ճեմմէյզէ – Պէյրութ, 1963), 123-128:

13 Նույն տեղում, 126:

14 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 188-189:

15 Նույն տեղում: Տե՛ս նաև Թոռլաքեան, *Օրերուս հետ*, 125-127:

16 Թոռլաքեան, *Օրերուս հետ*, 125-127, Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 190:

17 Արման Կոթիկյան, «Դպրոցա-թատերական կյանքը Տրապիզոնում (1815-1915)», *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր» (Հասարակական գիտություններ),* 7 (1962): 50-52:

վկայությունների՝ Տրապիզոնի փողոցներում հաճախ կարելի էր տեսնել թուրքերի, որոնք հայերի հետևից վանկարկում էին *gâvur* (անհավատ), *seni gidi keşişin oğlu* (անբարոյական քահանայի որդի), *seni gidi Karapet* (անբարոյական Կարապետ) արտահայտությունները, մինչև իսկ այդ ածականներն էին օգտագործում՝ կենդանիների հետ կապված: Գողությունը, թալանը, սպանություններն ու ընդհանուր անապահովությունը շարունակվում են նույն կերպ:[18] Օգտագործվում էր ցանկացած առիթ թուրք խուժանին հայերի դեմ տրամադրելու և նոր կոտորածներ հրահրելու համար: 1910 թ. աշնանը Տրապիզոնում մի հայ երիտասարդի և թուրք կնոջ սիրավեպի պատճառով քաղաքում նոր կոտորածների սպառնալիք է ստեղծվում. թուրք կինը, թողնելով ամուսնուն ու երեխաներին, հայ երիտասարդի հետ փախուստի է դիմում Բաթումի: Առիթն օգտագործվեց հայատյաց թուրքերի[19] կողմից՝ միջադեպին կրոնական երանգ տալով, և «իսլամադավան կնոջ պատիվը» պահանջելով՝ մոլեռանդ խուժանին հայերի դեմ տրամադրելու համար: Իրավիճակն այնքան է լարվում, որ առևանգվում են հայ երիտասարդի քույրերը: Քաղաքի հայ բնակչության անապահով վիճակի հարցով առաջնորդական փոխանորդ Գրիգորիս Պալաքյանն անգամ դիմում է կուսակալին[20]: Առաջնորդարանի նախաձեռնությամբ՝ հայ երիտասարդին և թուրք կնոջը Բաթումիից հետո են ուղարկում Տրապիզոն, սակայն հայ և մահմեդական բնակչության միջև լարվածությունը պահպանվում է: Վարդապետ Պալաքյանը Դուրյան պատրիարքին ուղղված նամակում գրում է, որ քաղաքի լազերն առիթ էին փնտրում թալանի ու կոտորածի համար, իսկ որոշ ունևոր հայեր պահակախմբերով էին շրջում[21]: Նահանգի հայ և թուրք բնակչության միջև լարվածությունն իր տարբեր դրսևորումներով շարունակվում է նաև հաջորդ տարիներին[22]:

Համիդյան կոտորածներից հետո Տրապիզոնից արտագաղթած որոշ հայ մտավորականներ[23], ոգևորված սահմանադրական խանդավառությամբ, 1908 թ. վերադառնում են Տրապիզոն, և նահանգի հայության շրջանում սկսվում է տնտեսական ու մշակութային որոշակի վերելք[24]: Հայկական կրթական ու մշակութային հաստատությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին հաճախ ներկա էին գտնվում թուրք

Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 196-202: Թոռլաքյան, *Օրերուս հետ*, 130-132:

18 Թոռլաքեան, *Օրերուս հետ*, 137:

19 Դրանք առաջին հերթին Էմրուլլահ էֆենդին և Թեքեից Նեշադն էին, որոնք Տրապիզոնում իրենց հայատյացությամբ «մեծ համբավ» էին ձեռք բերել: Տե՛ս Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 207:

20 Նույն տեղում, 206-207:

21 Նույն տեղում, 207:

22 Նույն տեղում, 208:

23 Համիդյան կոտորածներից հետո Տրապիզոնի հայության շրջանում սկսվում է արտագաղթի շարժում, հիմնականում Սև ծովի ռուսական ափեր: Տե՛ս Թոռլաքեան, *Օրերուս հետ*, 56: Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 166:

24 «Օրը Օրին. Յարութիւն Շահիրկեան», *Հայրենիք օրագիր* (Պոլիս), 7/20 յուլիս 1909, 1: Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 166: Կոթիկյան, *Դպրոցա-թատերական կյանքը Տրապիզոնում*, 50-51:

պաշտոնյաներ[25]՝ այդկերպ փորձելով առերես սիրալիր վերաբերմունք ցուցաբերել հայ ղեկավար մարմինների նկատմամբ և թուլացնել Տրապիզոնի հայերի զգոնությունը: Նման մի քայլ էր Տրապիզոնի քաղաքապետարանում 1913 թ. հոկտեմբերին Զավեն պատրիարքի պատվին կազմակերպված ճաշկերույթը, որը Տրապիզոն էր եկել՝ մասնակցելու Հայոց գրերի գյուտի 1500-ամյակի տոնակատարությանը[26]: Ճաշկերույթին ներկա էին թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, իսկ Ներքին գործերի նախարարությունը հատուկ շոգենավ է տրամադրում պատրիարքին Կ.Պոլիս վերադառնալու համար[27]:

1911-1912 թթ. նահանգի հայերի դեմ հետապնդումներն ու խժդժությունները հասնում են ծայրահեղության՝ նոր կոտորածների սարսափի մեջ պահելով ժողովրդին[28]: Պատերազմի ժամանակ հայերի մատուցած ծառայություններն ու քաղաքացիական պարտավորությունների կատարումը որևէ նշանակություն չունեցան. 1912 թ. Տրապիզոնի նահանգում սկսվում են հայ բնակչության խուզարկությունները զենք գտնելու պատրվակով, ինչի հետևանքով Տրապիզոնում ու նահանգի այլ քաղաքներում ձերբակալվում է մոտ 40 հայ[29]: Հայերի դեմ բռնություններն ու կողմնակալ վերաբերմունքը ծայրահեղության աստիճանի են հասնում Բալկանյան պատերազմի ընթացքում (1912-1913 թթ.)՝ կոտորածի սարսափի մեջ պահելով ժողովրդին[30]:

Երիտթուրքական կառավարության հակահայկական քաղաքականությունը տարածվում էր նաև տնտեսական բնագավառում. 1913 թ. վերջին և 1914 թ. ընթացքում կայսրության մի շարք վայրերում, հիմնականում առևտրական խոշոր քաղաքներում և նավահանգիստներում, այդ թվում՝ Տրապիզոնում, իթթիհաթականները հակահայկական և հակահունական բոյկոտ են հրահրում[31], որի նպատակը քրիստոնյաների դիրքերին հարվածելն էր: 1913 թ. վերջերից Տրապիզոնում հայերի ազատ առևտրի իրականացման խոչընդոտներ են ստեղծվում[32], իսկ արդեն 1914 թ. սկզբներին հայ առևտրականների դեմ հալածանքները հասնում են ակնհայտ թշնամության. թուրք ազգաբնակչությունը դադարում է գնումներ կատարել հայերի խանութներից, լարվում են հայ և թուրք առևտրականների հարաբերությունները, փակվում են հայ

25 Կոթիկյան, *Դպրոցա-թատերական կյանքը Տրապիզոնում*, 50-51:

26 Զաւէն արքեպս., *Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ* (Գահիրէ, Նոր Աստղ, 1947), 22-23:

27 Նույն տեղում:

28 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 208:

29 Նույն տեղում:

30 Նույն տեղում:

31 «Հակաքրիստոնէական պոյքոթը», *Ազատամարտ օրաթերթ* (Կ.Պոլիս), 8/21 փետրուար 1914, N 1428, 3: «Առեւտրական պոյքոթը», *Ազատամարտ օրաթերթ*, 10/23 փետրուարի 1914, N 1435, 2: «Առեւտրական պոյքոթը եւ մեծ վաճառականները», *Ազատամարտ օրաթերթ*, 23 փետրուար/3 մարտ 1914, N 1447, 3: Գուժկան Սեբաստիոյ (Կ. Գաբիկեան), *Եղեռնապատում Փոքրուն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ* (Պոսթըն, «Հայրենիք» տպարան, 1924), 21-23: Արշակ Ալպոյաճեան, *Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց* (Կահիրե, 1952), 1219: Գևորգ Քիլիմջյան, *Թուրք-հունական հարաբերությունները 1908-1914 թվականներին* (Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 1988), 164:

32 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 214:

արհեստավորներին պատկանող արհեստանոցները[33]: Արտասահմանից ու Կ.Պոլսից եկած ապրանքները նավահանգստից ներս չէին թողնում[34]: Առաջնորդ Թուրյան վարդապետն այդ մասին տեղեկագրեր է ուղարկում Կ.Պոլսի Հայոց պատրիարքարան և նշում, որ հայ առևտրականի պատկանող բեռնանավերից մեկն առանց բեռնաթափվելու վերադարձել է Կ.Պոլիս[35]: Զավեն պատրիարքն այս հարցի կապակցությամբ խնդրագիր է ուղղում կառավարությանը[36]: Կուսակալ Ջեմալ Ազմին իր հերթին է բողոքում՝ ստեղծված իրավիճակը նկարագրելով որպես զրպարտություն[37]:

Բոյկոտի հետևանքով Տրապիզոնի հայ առևտրականները տնտեսապես թուլանում են, իսկ երբ կառավարությունը «թուրքական նավատորմը ռազմանավերով հարստացնելու» պատրվակով դրամահավաք է սկսում Տրապիզոնի քրիստոնյաների շրջանում[38], քաղաքի հայ բնակչությունը հարստահարվում է ու հայտնվում տնտեսապես ծանր վիճակում, որի հետևանքով ընդհարումներ են տեղի ունենում քրիստոնյաների ու ժանդարմների միջև[39]: Հայերի տնտեսական դիրքերը թուլացնելը, ապա նաև տնտեսությունից դուրս մղելը երիտթուրքերի «ազգային տնտեսություն» ստեղծելու գաղափարի բաղկացուցիչ մաս էին կազմում. դրանք առաջ էին քաշվել կոմիտեի՝ Սալոնիկում (1911 թ.) և Կ.Պոլսում (1914 թ.) անցկացրած համագումարների ժամանակ[40]:

Օսմանյան կայսրությունում հայերի մշտապես անապահով ու անպաշտպան վիճակը մեծապես բացատրում են հայերի ձգտումները՝ հայկական նահանգներում մեծ տերությունների ներգրավմամբ բարեփոխումներ իրականացնելու հարցում: Եվրոպական տերությունների դեսպանների հետ բանակցությունների շնորհիվ ստեղծվեց մի համաձայնագրի նախագիծ, որը ստորագրվեց 1914 թ. փետրվարի 8-ին՝ հայերի շրջանում իրենց վիճակի բարելավման հույսեր արթնացնելով[41]: Հայկական բարենորոգումների[42] շուրջ եղած իրադարձությունների հետևանքով հայ և թուրք

---

33 Վարդգես Մավյան, Տրապիզոնի հայերը Մեծ Ոճիրի ճանապարհին (Երևան, Ճարտարագետ, 2015), 88-89:

34 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 214-215:

35 Նույն տեղում:

36 «Առեւտրական պոյքոթը հայերու դէմ», *Ազատամարտ օրաթերթ* (Կ.Պոլիս), 2/15 մարտ 1914, N 1453, 3: Զաւէն արքեպս., *Պատրիարքական յուշերս*, 36:

37 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 215:

38 Raymond Kévorkian, *The Armenian Genocide. A Complete History* (London, New York: I.B.Tauris, 2011), 467:

39 *Մշակ* օրաթերթ (Թիֆլիս), 22 մարտի 1914, N 63, 2:

40 Ugur Ümit Üngör, "Seeing like a nation-state: Young Turk Social Engineering in Eastern Turkey, 1913–50," *Journal of Genocide Research* 10, no. 1 (2008): 21.

41 Զաւէն արքեպս., *Պատրիարքական յուշերս*, 38-39:

42 Բարենորոգումների ծրագրով՝ Արևմտյան Հայաստանի վեց նահանգներին միանալու էր Տրապիզոնի նահանգը: Արևմտյան Հայաստանի տարածքը բաժանվելու էր երկու շրջանի՝ Հյուսիսային և Հարավային, որտեղ ընդհանուր տեսուչներ էին նշանակվելու նորվեգացի Ն. Հոֆը և հոլանդացի Լ. Վեստենենկը: Տրապիզոնի նահանգը Էրզրումի ու Սվազի նահանգների հետ մտնելու էր Հյուսիսային շրջանի մեջ: Տե՛ս Սիմոն Վրացյան, *Հայաստանի Հանրապետություն* (Երևան, Հայաստան, 1993), 5-6:

բնակչության հարաբերություններն ավելի են լարվում[43]: Քաղաքի հայերի և թուրք ժանդարմների միջև տեղի են ունենում ընդհարումներ[44], խուզարկվում են որոշ հայերի տներ[45], իսկ երբ 1914 թ. գարնանը Տրապիզոն է գալիս ընդհանուր տեսուչ Ն. Հոֆը, հայ և թուրք բնակչության հարաբերությունները դառնում են թշնամական[46]: Պարզ է, որ Տրապիզոնի նման նահանգում բարեփոխումների ծրագրով նախատեսված հայերի հավասար իրավունքները, ինչպես նաև նահանգի կառավարմանը մասնակցելու հեռանկարը ընկալվելու էր որպես ոտնձգություն մուսուլմանական բնակչության իրավունքների նկատմամբ:

Տրապիզոնը Հայոց ցեղասպանության թիրախում

1914 թ. օգոստոսին՝ Առաջին աշխարհամարտի սկսվելուց մի քանի օր անց, Տրապիզոնում հրի է մատնվում հայկական արական վարժարանը, որի հարևանությամբ գտնվում էր ռուսական հյուպատոսարանը[47]: Հրդեհի օջախները վարժարանի տարբեր հատվածներում էին. այրվել էին մատենադարանը, հնագույն քարտեզները և հավաքածուները: Ոստիկանությունը քննություն է սկսում և առաջ քաշում զանազան վարկածներ, այդ թվում՝ քաղաքական, ըստ որի՝ ամառային արձակուրդին փակ վարժարան մտնել և այն հրդեհել հնարավոր էր միայն ռուսական հյուպատոսարանի պարտեզից: Թուրյան վարդապետի և հայկական համայնքի կողմից հայկական վարժարանի հրդեհումն ընկալվում է որպես քաղաքական պրովոկացիա՝ ռուսական հյուպատոսարանի դեմ ցույցեր հրահրելու նպատակով[48]: Ըստ ժամանակակիցների՝ հայկական վարժարանի հրկիզումը սպասվող իրադարձությունների նախանշան էր[49]:

1914 թ. օգոստոսի 2-ին՝ Գերմանիայի հետ քաղաքական և ռազմական գաղտնի համաձայնագրի ստորագրումից հետո, իթթիհաթական վարչակարգը հայտարարում է համընդհանուր զորահավաք[50], որին ենթարկվում է նաև Տրապիզոնի հայ տղամարդկանց մեծամասնությունը[51]: Նրանց զինաթափված տանում են քաղաքից

---

43 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 212: Վահան Մինախորեան, *1915 թուականը. Արհաւիրքի Օրեր* (Վենետիկ – Ս. Ղազար, գրատուն Օմար Խայեամ, Հալէպ – Սուրիա, 1949), 52: Simon Payaslian, "The Fate of the Armenians in Trebizond," in Armenian Pontus, 282.

44 *Մշակ* օրաթերթ (Թիֆլիս), 22 մարտ 1914, N 63, 2:

45 *Ազատամարտ* օրաթերթ, (Կ.Պոլիս), 16/29 մարտ 1914, N 1465, 3:

46 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 212: *Մշակ* օրաթերթ (Թիֆլիս), 22 մարտ 1914, N 63, 2:

47 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 216-217:

48 Նույն տեղում, 217:

49 Նույն տեղում, 215:

50 Dadrian, *The History of the Armenian Genocide*, 220-221:

51 Մավյան, *Տրապիզոնի հայերը*, 91-92: Մարտիկ Թահմազեան, «Գրութուն մէր անցյալնէրի մասին 1850 թվից 1924 թվերը», ՀՅԹԻ թանգարանային ֆոնդեր, բժ 8, ակտ № 6699, թպ. 159, 5-6: Ջոն Կիրակոսյան, *Առաջին Համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը* (Երևան, Հայաստան, 1965), 299:

դուրս՝ դեպի Երզնկա, Բաբերդ և Գյումուշխանե՝ ճանապարհների շինարարության վրա աշխատեցնելու, որտեղ կամ դատապարտվում են դանդաղ մահվան՝ քաղցից ու հիվանդություններից, կամ գնդակահարության[52]:

Տրապիզոնում կառավարության կողմից հրահրվող գործողություններն ու հայահալած միջոցառումները շարունակվում են 1914 թ. աշնան և 1915 թ. գարնան ամիսներին[53]:

1914 թ. նոյեմբերի 2-ին՝ գերմանաթուրքական ռազմական նավատորմի կողմից ռուսական սևծովյան նավահանգիստների ռմբակոծությունից երեք օր անց, Ռուսաստանը պատերազմ է հայտարարում Օսմանյան կայսրությանը: Նավահանգստային քաղաք Տրապիզոնը, գտնվելով պատերազմի Կովկասյան ճակատում, դառնում է ռազմական գործողությունների թատերաբեմ և ձեռք բերում ռազմավարական բացառիկ նշանակություն: Այն դառնում է զինվորականների, ռազմանյութերի ու սննդի ընդունման և տեղափոխման կայան[54]: Դեռևս 1914 թ. գարնանից կառավարությունն այստեղ էր կենտրոնացնում մեծ քանակությամբ զորք և զինամթերք[55]: Պատերազմից առաջ Տրապիզոն են ուղարկվում իթթիհաթական գործիչներից առավել ակնավորները՝ Կենտրոնական կոմիտեի անդամ Յուսուֆ Ռիզա բեյը՝ որպես Հատուկ կազմակերպության ղեկավար, և Յենիբահչելի Նաիլը՝ որպես Տրապիզոնում կուսակցության կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ: 1914 թ. հուլիսի 7-ին՝ ընդհանուր զորահավաքից որոշ ժամանակ առաջ, նահանգապետ է նշանակվում Ջեմալ Ազմին, որը մեծ դերակատարում էր ունենալու նահանգի հայ բնակչության ոչնչացման գործում[56]: Հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին կառավարության հրահանգով Տրապիզոնում դեռևս 1912-1913 թթ. սկսում են բանտերից ազատ արձակել չեթե մարդասպաններ, որոնց պատերազմի օրերին միանում են Ռիզա բեյի չեթեական խմբերը, որոնք Տրապիզոնից ուղարկվում են կայսրության ներքին նահանգներ[57]: Այդ օրերին Տրապիզոնում կազմվում է Կովկասից Օսմանյան կայսրություն փախած մուսուլման վրացիների գունդը՝ *Légion géorgienne*՝ քաղաքի հայության կոտորածներն իրագործելու նպատակով[58]:

1915 թ. փետրվարի 8-ին Տրապիզոնը ռմբակոծության է ենթարկվում ռուսական

---

52 Kévorkian, *The Armenian Genocide,* 483: Մավյան, *Տրապիզոնի հայերը*, 93-95: Թահմազեան, *Գրութուն մէր անցյալնէրի մասին*, 5-6:

53 «Թիւրքական պատերազմի շուրջը», *Մշակ* օրաթերթ, 13 նոյեմբեր 1914, N 257, 2, Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 218-219:

54 *Մշակ* օրաթերթ, 1 նոյեմբեր 1914, N 247, 1:

55 *Մշակ* օրաթերթ, 11 մարտ 1914, N 53, 4: *Մշակ* օրաթերթ, 15 նոյեմբեր 1914, N 259, 1: *Մշակ* օրաթերթ, 26 դեկտեմբեր 1914, N 293, 1: Մավյան, Տրապիզոնի հայերը, 90-91:

56 Kévorkian, *The Armenian Genocide*, 468:

57 Սամսոն անունով տրապիզոնցի հույնի վկայությունը Տրապիզոնի ոճրագործների դատավարության երրորդ նիստի ընթացքում, *Ճակատամարտ* (Կ.Պոլիս), 2 ապրիլ 1919, 2: Հայկազն Գ. Ղազարեան, *Ցեղասպան թուրքը* (Պէյրութ, Համազգային տպարան, 1968), 73-74:

58 Տրապիզոնում զինված ուժերի հրամանատար Ավնի փաշայի վկայությունը Տրապիզոնի ոճրագործների դատավարության ընթացքում, *Ճակատամարտ*, 2 ապրիլ 1919, 2:

նավատորմի կողմից, և քաղաքի թուրք բնակչությունը փախուստի է դիմում դեպի Պոզ Թեփե. քաղաքում մնում են հայերն ու հույները[59]: Ռուսական նավատորմի հեռանալուն պես ոստիկանությունը խուզարկություններ է սկսում հայերի տներում, ինչի հետևանքով ձերբակալվում են մի շարք հայեր՝ զենք պահելու և ռուսական կողմին ազդանշաններ փոխանցելու մեղադրանքով[60]: Տրապիզոնի թեմի հայ կաթողիկե եկեղեցու առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս Նազլյանը գրում է. «Փետրուար եւ մարտ ամիսներուն, գաւառներու մէջ, բոլոր բնակիչներուն, քրիստոնեայ թէ իսլամ, զինաթափութեան սկսուած էր, զինուորական միջոցառման պիտակին տակ: Սակայն, մինչ քրիստոնեաներէն առնուած զէնքերը նոյն ընդ նոյն կը գրաւուէին, իսլամներէն առնուածները ետքէն գաղտնօրէն կը վերադարձնէին իրենց: Յետոյ հայերուն զէնքերը, որոնց վրայ կառավարութիւնը ուրիշներ ալ աւելցնելով դէզ կը կազմուէին ու կը լուսանկարուէին եւ այս լուսանկարները կը ծառայէին պատկերազարդելու հակահայ քարոզչական գրքոյկներ, որովհետեւ անոնք իբրեւ փաստ պիտի ծառայէին, Թուրքիոյ դէմ ուղղուած, հայկական դաւադրութեան մը պատրաստութեան»[61]:

1915 թ. ապրիլին խուզարկություններ են սկսվում քաղաքի բոլոր հայերի տներում[62]: Հակառակ կառավարության սպասելիքներին՝ ոչ զենք, ոչ զինվորական դասալիք, ոչ գնդացիր և ոչ էլ թաքնված լրտեսներ չեն գտնվում խուզարկությունների ընթացքում[63]: Խուզարկություններին հաջորդում են ձերբակալությունները: Թուրք մոլեռանդներին հրահրելու նպատակով հայերին սկսում են մեղադրել թուրք կրոնավորի սպանության մեջ[64]: Անհանգստացած ստեղծված իրավիճակով՝ Թուրյան վարդապետը դիմում է կուսակալին ՝ խնդրելով պաշտոնապես հայտարարել, որ հայերը օրինապահ են և իրենց պարտականությունները լիովին կատարում են օսմանյան հայրենիքի հանդեպ: Սակայն կառավարությունը ոչ միայն ընդառաջ չի գնում, այլ նաև վարդապետին հոչակում է *մյուզիր*՝ վտանգավոր առաջնորդ[65]: Խուզարկություններն ու հետապնդումները շարունակվում էին. Տրապիզոնում ձերբակալվում է Սեդրակ Սուրենյան անունով մի մանրավաճառ՝ Մայր Հայաստանի պատկերով ծխախոտի թուղթ վաճառելու համար, փակվում են հայկական սրճարանները, իսկ դրանց տերերը ձերբակալվում են Ամենայն հայոց կաթողիկոսներ Խրիմյանի և Իզմիրլյանի նկարներն այնտեղ պահելու մեղադրանքով: Սրճարանների տերերը խոշտանգվում են, իսկ նկարները՝ ոչնչացվում[66]:

---

59 Գոհար Սարյան, «Ձեռագիր հուշ տրապիզոնցի Սարյան ընտանիքի», ՀՑԹԻ թանգարանային ֆոնդեր, բժ. 8, ակտ № 11819, թպ. 299, 7-12:

60 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 218:

61 Յովհաննէս Արք. Նազլեան, *Տրապիզոնի Թեմին Վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի Յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914-1928 Շրջանի Քաղաքական-կրոնական Դեպքերուն Մասին* (Պէյրութ - Լիբանան, Հայ Կաթողիկէ Տպարան, 1960), 565:

62 Սարյան, «Ձեռագիր հուշ», 19:

63 *Տրապիզօն*, պատրաստեց Առաքել Կոթիկեան, 20 դեկտ. 1920, ձեռագիր հուշ Նուբարյան գրադարանում, 56 - Trébizonde, 13:

64 Ղազարեան, *Յեղասպան թուրքը*, 74:

65 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 218:

66 *Տրապիզօն*, 13:

1915 թ. հունիսի սկզբներին Տրապիզոն է գալիս երիտթուրքերի՝ Կ.Պոլսի կենտրոնական կոմիտեի անդամ, Հատուկ կազմակերպության՝ *Teşkilat-i mahsusa*-ի նախագահ, բժիշկ Բեհաեդդին Շաքիրը[67]: Ժամանելուց անմիջապես հետո Բեհաեդդին Շաքիրը Տրապիզոնի կուսակալի հետ ժողով է հրավիրում Տրապիզոնի նահանգի կառավարիչներին՝ գաղտնի հրահանգներ տալով նահանգի հայերի ջարդի մասին[68]: Այդ մասին վկայում է նաև ցեղասպանությունը վերապրած տրապիզոնցի Սիրանուշ Մանուկյանը Տրապիզոնի ոճրագործների դատավարության չորրորդ նիստի ժամանակ. դոկտոր Բեհաեդդին Շաքիրը Տրապիզոն է ժամանում՝ իր հետ բերելով կնքված ծրարներ՝ հայերի կոտորածներն ու աքսորը կազմակերպելու ցուցումներով: Այդ մասին նույն դատական նիստի ժամանակ վկայում է նաև թուրք բժիշկ Ավնին, որը հաստատում է, որ տեղահանության հրամանից մի քանի օր առաջ Տրապիզոն էր եկել Բեհաեդդին Շաքիրը՝ տեղահանությունը կազմակերպելու հրահանգներով[69]: Բեհաեդդին Շաքիրի գալուց անմիջապես հետո ժողով է գումարվում Ջեմալ Ազմիի, կայմակամների և մյուդիրների մասնակցությամբ: Ազմին պնդում էր, որ հայերին պետք է կոտորել ոչ թե քաղաքում, այլ աքսորել՝ սովամահության մատնելով[70]: Սիրանուշի վկայությունից պարզ է դառնում, որ հանդիպման ընթացքում հայերի կոտորածներն իրագործելու հարցում որոշակի անհամաձայնություններ են եղել: Հանդիպմանը ներկա իթթիհաթական Մուսթաֆան և Տրապիզոնի հարկային տեսուչ Մեհմեդ Ալին պնդում էին, որ կոտորածները հարկավոր է իրագործել տեղում և անհապաղ[71]: Ժողովին մասնակցում էին նաև Տրապիզոնի իթթիհաթական ակումբի անդամներ Յենիբահչելի Նաիլ բեյը, Իմամզադե Մուսթաֆան, որը Տրապիզոնի Հատուկ կազմակերպության՝ Թեշքիլաթ-ը մահսուսայի պետն էր, հարկային տեսուչ և Կարմիր մահիկի նախագահ Մեհմեդ Ալին, Փիրիզադե Շևքի անունով սպա, ժանդարմերիայի հրամանատար Թալեաթ բեյը և Առողջապահական վարչության տեսուչ բժիշկ Յունուզ Վասֆի բեյը[72]: Որոշում է կայացվում «հեռացնել հայերին», «մեկ հայ անգամ չթողնել», որ «նրանց գերեզմանները քաղաքում չլինեն»[73]: Բեհաեդդին Շաքիրի հեռանալուց հետո Ջեմալ Ազմին Տրապիզոնում երիտթուրքական կուսակցական գործիչների ժողով է հրավիրում, որին

67 Kévorkian, *The Armenian Genocide*, 469:

68 *Տրապիզօն*, 14: «Իթթիհադական պետերու դատավարութիւնը», *Ճակատամարտ*, 9 մայիս 1919, 1:

69 Թուրք բժիշկ Ավնիի վկայությունը Տրապիզոնի ոճրագործների դատավարության չորրորդ նիստին, *Ճակատամարտ*, 4 ապրիլ 1919, 2:

70 Սիրանուշ Մանուկյանի վկայությունը՝ ընթերցված Տրապիզոնի ոճրագործների դատավարության չորրորդ նիստին, *Ճակատամարտ*, 4 ապրիլ 1919, 2: Kévorkian, The Armenian Genocide, 469:

71 Kévorkian, *The Armenian Genocide*, 469:

72 Ֆիլոմինե Նուրյանի վկայությունը Տրապիզոնի ոճրագործների դատավարության երրորդ նիստին, La Renaissance, N 19, 28 January 1919 մեջբերված Krikor Guerguerian, *The Documentory History of the Armenocide in Trebizond by Krieger, Third chapter, Thirth Session,* in Kévorkian, *The Armenian Genocide*, 470:

73 Սիրանուշ Մանուկյանի վկայությունը՝ ընթերցված Տրապիզոնի ոճրագործների դատավարության չորրորդ նիստին, *Ճակատամարտ*, 4 ապրիլ 1919, 2:

հաջորդում է հանդիպումը մութասարրֆների և կայմակամների հետ՝ քննարկելու նահանգի հայերի կոտորածն ու աքսորը կազմակերպելու գործընթացը[74]:

Տասը օր տևած ժողովից հետո սարսափի մատնված հայ բնակչությանը թմբիրի մեջ պահելու և հանրային տրամադրությունները մեղմելու նպատակով վալի Ջեմալ Ազմիի նախաձեռնությամբ կազմվում է հոգևորականների և ազգային երևելիների հանձնախումբ, որը պետք է շրջեր քաղաքներով ու գյուղերով՝ ժողովրդին խաղաղեցնելու ու վստահեցնելու, որ կառավարությունը մտահոգված է իր հպատակների հանգստությամբ[75]: Հանձնախմբի անդամներն էին առաջնորդ Թուրյան վարդապետը, Տեր Շեղմ քահանան, հոգևորականներ Գյումուշխանեից, Սահակ էֆենդի Էթմեքճյանը, Կարապետ Մնացականյանը[76]: Հարկ է նշել, որ այդ հանձնախմբի քարոզչությունն իր քայքայիչ ազդեցությունն ունեցավ հայ ժողովրդի այն հատվածի վրա, որը մտադիր էր ինքնապաշտպանության դիմել:

Հունիսի 5-ին երիտթուրքերի կուսակցության Տրապիզոնի պատասխանատու քարտուղար Նաիլ բեյը քաղաքի կենտրոնում կազմակերպում է հավաք, որի ընթացքում դիմելով քաղաքի թուրք բնակիչներին՝ ասում է, որ հասել է ժամն ապացուցելու քրիստոնյա եվրոպացիներին, անհավատ ռուսներին և նրանց բարեկամներին թուրքական սրի ուժը: Հավաքված հայերին ավելի մոլորեցնելու նպատակով հրավիրվում է ելույթ ունենալու նաև Հայ ազգային դպրոցի ուսուցիչ Թորոս էֆենդին, որն իր խոսքում գովաբանում է Օսմանի սերնդի փառավոր անցյալը, շեշտում հայ ժողովրդի հավատարմությունն ու պատրաստակամությունը կռվելու ընդհանուր թշնամու դեմ[77]: Այս իրադարձություններին հաջորդում է Տրապիզոնի առաջնորդ Թուրյան վարդապետի սպանությունը. նրան հրավիրում են Կարինի պատերազմական ատյանի առջև վկայություն տալու և ճանապարհին սպանում[78], ինչին հետևում է քաղաքի երևելիների սպանությունը: 1915 թ. հունիսի 24-ին Տրապիզոնի համայնքից 42 հայի, հիմնականում կուսակցական գործիչների և ռուսահպատակ հայերի[79], կանչում են նահանգապետարան և տեղեկացնում, որ պետք է ուղարկվեն Սամսուն հար-

---

74 Kévorkian, *The Armenian Genocide*, 469.

75 Ղազար Մակունց, *Տրապիզոնի Հայոց տեղահանութիւնը, Յուշագրական էջեր, պատմեց՝ Ղազար Մակունցը, գրի առաւ՝ Յ. Կոսոյեան* (Թեհրան, տպարան «Ալիք», 1963), 60:

76 Նույն տեղում:

77 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 219-220:

78 Ara Sarafian, *United States Official Records on the Armenian Genocide 1915*-1917 (Gomidas Institute, Princeton and London, 2004), 343: Սարյան, ձեռագիր հուշ, I-19: *Ճակատամարտ*, 4 ապրիլի 1919, 2: *Տրապիզօն*, 14:

79 Ձերբակալվածների շարքում էին դաշնակցական գործիչներ Սեդրակ Եսայանը, Բյուզանդ Ճերմակյանը, Արշակ Պետրոսյանը, Շահեն Ազապլարյանը, Վրեն Գասպարյանը, Գառնիկ Ճիզմեճյանը, ռուսահպատակներ Սուրեն Կարագյոզյանն իր հինգ եղբայրների հետ, Մեղավորյան չորս եղբայրները, Սարյան երեք եղբայրները, հնչակյան գործիչ Հրանտ Մալխասյանը, Մանուկ Բալոյանը, Արամ Որբերյանը, Լևոն Տիրատուրյանը, Հրանտ Սարաֆյանը, Հակոբ Քեղեշյանը, *Շանդան* սրճարանի պետ Վարդան Արթինյանը: Յովակիմյան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 222: Մակունց, *Տրապիզոնի Հայոց տեղահանութիւնը*, 63-64: Kévorkian, *The Armenian Genocide*, 925: Սարյան, ձեռագիր հուշ, I-23, 24:

ցաքննության՝ համաձայն նահանգապետի կարգադրության[80]: Այդ պատրվակով կառավարությունը հայ երևելիներին հեռացնում է քաղաքից ոչ հեռու Պլաթանա[81] կոչվող վայրը, երկու «մավունաներով»՝ մակույկներով Սամսուն տեղափոխելու նպատակով[82]: Նրանց հետևից ծով են դուրս գալիս ժանդարմներով ու *Թեշքիլաթ-ը մահսուսա*-ի՝ Հատուկ կազմակերպության մարդասպանների և չեթեների խմբերով մակույկներ[83]: Գործողությունը ղեկավարում էին Թեքքելի Նեշատը (Թեքքե գյուղից)[84], որը Տրապիզոնում իր հայատյացությամբ «մեծ համբավ» էր ձեռք բերել դեռևս 1910 թ.[85], և ղայեղճի (մակույկավար) Քիսան[86]: Երկուսն էլ մարդասպաններ էին, որոնք ազատ էին արձակվել բանտից Ջեմալ Ազմիի հրամանով: Կառավարությունը մակույկավարներին 50 ոսկի է տալիս այդ գործողության համար[87]:

Ցեղասպանությունը վերապրած տրապիզոնցի Գոհար Սարյանը, որի ամուսինը ձերբակալված 42 հայերի մեջ էր, պատմում է, որ նավահանգստում ձերբակալվածներին թույլատրում են մոտենալ իրենց մտերիմներին՝ ճանապարհի համար գումար և սնունդ վերցնելու[88], սակայն նավահանգստից հեռանալուց հետո հայերին կապկպում են, կողոպտում զարդերն ու գումարը, ապա դանակահարելով սպանում[89], իսկ դիակները նետում ծովը[90]: Ձերբակալվածների շարքում էր Տրապիզոնում *Շանտան* սրճարանի պետ ռուսահպատակ Վարդան Արթինյանը[91]: Նրան հաջողվում է վիրավոր ճողոպրել ու լողալով հասնել Տրապիզոն, որտեղ ափ է դուրս գալիս թուրք ձկնորսների թաղամասում, իսկ վերջիններս, մտածելով, թե Վարդանը ենթարկվել է ավազակային հարձակման, օգնություն են ցույց տալիս և ուղարկում քաղաք[92]: Դեպքերի ականատես ֆրանսահպատակ Լուի Վիդալը, որն աշխատում էր Տրապիզոնի *Singer Company* ընկերությունում, Տրապիզոնի ոճրագործների դատավարության

---

80 Kévorkian, *The Armenian Genocide*, 469: Սարյան, «Ձեռագիր հուշ», I-22: Степан Степанян (ред.), *Германские источники о геноциде армян, Период Первой мировой войны*, т. 1 (Ереван, "Айастан", 1991), 218:

81 Նավահանգստային կայան Սև ծովի ափին՝ Տրապիզոն քաղաքից 8 կմ հեռավորության վրա:

82 Սարյան, «Ձեռագիր հուշ», I-20: «Տրապիզոնի ջարդարարները պատերազմական ատեանի առջեւ», *Ճակատամարտ* (Պոլիս, 27 մարտի 1919 թ.), 2: Viscount Bryce, *The Treatment of Armenians in the Ottoman Empire 1915-16, Documents Presented to Viscount Grey of Fallodon, Secretery of State for Foreign Affairs* (London, 1916), 291: Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 221: Kévorkian, *The Armenian Genocide*, 469:

83 *Trebizond,* prepared by Arakel Gotikian, manuscript in Bibliothèque Nubar, p. 14-15, մեջբերված Guerguerian, *The Documentory History of the Armenocide in Trebizond by Krieger*.

84 Kévorkian, *The Armenian Genocide*, 469:

85 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 27:

86 Սարյան, «Ձեռագիր հուշ», 25:

87 Նույն տեղում, «Տրապիզոնի ջարդարարներու դատը», *Ճակատամարտ*, 5 մայիս 1919, 2:

88 Սարյան, «Ձեռագիր հուշ», I-22:

89 Նույն տեղում, I-26-28:

90 *Trebizond,* 14-15.

91 *Տրապիզոն*, 14: Սարյան, ձեռագիր հուշ, I-24:

92 Սարյան, «Ձեռագիր հուշ», I-27, 28:

վեցերորդ նիստի ժամանակ վկայում է, որ Վարդանը թաքնվել էր նավավար Պետրոսի տանը, որտեղ էլ վերջին անգամ տեսել էր նրան[93]: Վերջինս պատմում է տեղի ունեցածի մանրամասները, սակայն, երբ այդ մասին լուրեր են սկսում տարածվել, ոստիկանությունը շրջապատում է տունը ու տեղափոխում Վարդանին Տրապիզոնի զինվորական հիվանդանոց, որտեղ էլ մի քանի օր հետո թունավորում են նրան բժիշկ Ալի Սաիբի հրամանով[94]: Այդ մասին Վարդանի կնոջը հաղորդում է հիվանդանոցի հայ աշխատակից Տեր-Դավիթյանը[95]:

Տրապիզոնի հայ տղամարդկանց զինվորագրումն ու զինաթափումը, որոնց հետևում է 42 հայ քաղաքական-հասարակական գործիչների, մտավորականների ու գործարարների սպանությունը, Հայոց ցեղասպանության իրագործման պետական քաղաքականության փուլերն էին, որոնք կիրառվում էին կայսրության ողջ տարածքում:

1915 թ. հունիսի 26-ին Տրապիզոնի նահանգային կառավարության կողմից հինգ կետից բաղկացած պաշտոնական հայտարարություն է հրապարակվում թուրքերեն, որով Ջեմալ Ազմին ծանուցում էր հայ համայնքի տեղահանության պաշտոնական որոշման մասին[96]: Հայտարարության մեջ նահանգի հայերը բնորոշվում էին որպես ոչ վստահելի քաղաքացիներ, իսկ ռազմաճակատի թիկունք համարվող նահանգը հարկավոր էր զերծ պահել ներքին անվստահելի տարրերից: Հետևաբար հարկավոր էր նահանգի քաղաքաբնակ ու գյուղաբնակ հայերին հեռացնել ներքին գավառներ: Հայտարարության մեջ ներկայացվում էր, որ արտաքին դրդումների հետևանքով հայերը տարվել էին սխալ ու դավադրական գաղափարներով, և կայսրության ապահովությունը պահելու ու «հայ ազգի գոյությունը փրկելու համար էր», որ կառավարությունը նման որոշում է կայացրել[97]: Սա, իհարկե, բացահայտ կեղծիք էր, որի մասին նշում էին նաև օտարերկրյա ականատեսները: Դեպքերի ականատես՝ Տրապիզոնում ԱՄՆ հյուպատոս Օսկար Հայզերը գրում է. «Զհաստատվեց՝ ով է մեղավոր և անմեղ կառավարության դեմ ուղղված որևէ շարժման մասնակցելու համար: Եթե մեկը հայ էր, դա էլ արդեն բավական էր հանցագործ համարվելու ու աքսորվելու համար…»[98]:

Տեղահանության պաշտոնական հայտարարության օրը Տրապիզոն քաղաքում ձերբակալում են 300 հայ երիտասարդի՝ կազմակերպված ինքնապաշտպանության ցանկացած փորձ բացառելու նպատակով: Նրանց բեռնանավով կապկպված տանում են Սև ծով, որտեղ չեթեները սպանում են նրանց, իսկ դիակները՝ ծովը նետում[99]:

Կառավարությունը միաժամանակ քայլեր էր ձեռնարկում թուրք մոլեռանդներին

93 Guerguerian, *The Documentory History of the Armenocide*, 66.

94 Սիրանուշ Մանուկյանի՝ Վարդանի կնոջ վկայությունը՝ ընթերցված Տրապիզոնի ոճրագործների դատավարության չորրորդ նիստին, *Ճակատամարտ*, 4 ապրիլի 1919, 2:

95 Guerguerian, *The Documentory History of the Armenocide*, 67.

96 Մակունց, *Տրապիզոնի Հայոց տեղահանութիւնը*, 67: Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 222: Սարյան, «Ձեռագիր հուշ», 31: Bryce, *The Treatment of Armenians,* 291: *Sarafian, United States Official Records,* 126-127:

97 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 223:

98 Sarafian, *United States Official Records*, 179.

99 Kévorkian, *The Armenian Genocide*, 469.

հայերի դեմ տրամադրելու ուղղությամբ: Հունիսի 27-ին Տրապիզոնում հրատարակվող իթթիհաթականների պաշտոնաթերթում հոդված է տպագրվում իբր հայերի կողմից Էրկենեսում թուրք իմամի ու նրա ընտանիքի սպանության մասին[100]: Տրապիզոնում ԱՄՆ հյուպատոս Հայզերը դեսպան Հ. Մորգենթաուին ուղարկած զեկուցագրում կասկածի տակ է դնում դեպքի իսկությունը և նշում, որ ստեղծված իրավիճակում իթթիհաթականների պաշտոնաթերթում նման հոդվածի տպագրությունը լավ միտք չէր[101]:

Հայ զինվորների, ազգային գործիչների, մտավորականների ու հոգևորականների ոչնչացումից հետո իշխանությունները կազմակերպում են հայ կանանց, երեխաների ու տարեցների բնաջնջումը: Նկատենք, որ մինչ այդ տեղահանությունն արդեն սկսվել էր կայսրության որոշ նահանգներում. 1915 թ. մայիսի 31-ից հունիսի 6-ն ընկած ժամանակահատվածում հայերի տեղահանության հրամաններ ուղարկվել էին Էրզրումի, Վանի ու Բիթլիսի նահանգապետերին[102], հունիսի 22-ից հուլիսի 5-ը կազմակերպվել էր հայերի տեղահանությունը Սեբաստիա քաղաքից[103]: Տրապիզոնին զուգահեռ՝ տեղահանության հրաման տրվում է Խարբերդ ու Մեզրե քաղաքների ու շրջակա գյուղերի համար[104]: Ամենուրեք տեղահանության հրամանից հետո հայերին տրվում էր մի քանի օր պատրաստվելու համար:

Տեղահանության որոշումը հրապարակելու հաջորդ օրը քաղաքի հայերը խնդրագրերով դիմում են Ավստրիայի, Գերմանիայի, Իտալիայի և ԱՄՆ-ի հյուպատոսների, վերջիններս՝ վալի Ջեմալ Ազմիին ու Նաիլ բեյին՝ փորձելով բնակչության որոշակի խմբերի համար զիջումների հասնել[105]: Նույն խնդրանքով Ջեմալ Ազմիին դիմում են նաև որոշ հայ կանայք[106]: Իթթիհաթական կուսակցական ներկայացուցիչ Նաիլ բեյը, իրեն ուղղված բազմաթիվ դիմումներին պատասխանելով, հուսադրում էր հայերին, որ կաշխատի սուլթանից ներում ձեռք բերել, միայն թե հայերը պետք է հանձնեն իրենց մոտ եղած զենքերը: Այդ նպատակով կառավարությունն իր ներկայացուցիչներին է ուղարկում գյուղեր[107]: Ակնհայտ էր, որ այս քայլով հերթական փորձն էր արվում հայ բնակչությանը զինաթափելու և ինքնապաշտպանվելու հնարավորությունից զրկելու համար:

Տրապիզոնի հայերի տեղահանության հրամանը չէր տարածվում միայն հիվանդների վրա: Հետագայում բացառություններ են արվում այրիների, որբերի, հղի կանանց, ծերերի և հինգ տարեկանից փոքր երեխաների, օտարերկրյա հյուպատոսների ջան-

---

100 Նույն տեղում, 131: Ղազարեան, *Ցեղասպան թուրքը*, 74:

101 Sarafian, *United States Official Records*, 131.

102 Արփինե Բաբլումյան, *Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ բնակչությունը XIX դարի վերջերին - XX դարի սկզբներին* (*Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն*) (Երևան, Պատմ. ինստիտուտ, 2017), 212:

103 Գաբիկեան, *Եղեռնապատում*, 103-104:

104 Բաբլումյան, *Խարբերդի նահանգի հայ բնակչությունը*, 213:

105 Sarafian, *United States Official Records,* 130-131, 138: Սարյան, «Ձեռագիր հուշ», 32, 33:

106 *Տրապիզոն*, 18-19: Սարյան, «Ձեռագիր հուշ», 49, 50:

107 *Տրապիզոն*, 15-16:

քերով՝ նաև կաթոլիկ ու բողոքական հայերի համար[108]: Վերջիններիս տների վրա կարմիր նշաններ էին արվում[109]: Այս քայլով Նաիլ բեյին հաջողվում է մոլորեցնել ինչպես հայերին, այնպես էլ օտարերկրյա հյուպատոսներին՝ հավաստիացնելով, որ կառավարությունը գթասիրտ է գտնվել և արձագանքել է խնդրագրերին: Երկու շաբաթ անց նրանց նույնպես աքսորում են[110]: Կաթոլիկ հայերին տեղավորում են Թոց գյուղում, որտեղ երկու շաբաթ ժանդարմների հսկողության տակ պահելուց հետո տղամարդկանց կոտորում են, իսկ կանանց ու երեխաներին աքսորում Գյումուշխանեի ուղղությամբ[111]: 1915 թ. հուլիսի 20-ին Տրապիզոնում Ավստրո-Հունգարիայի հյուպատոսը Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի նախարար բարոն Ստեփան Բուրիանին ուղարկած «Հայերի աքսորումը Տրապիզոնից» վերնագրով զեկույցում նշում է, որ կառավարության տված խոստումները լուրջ չէին, քանի որ առանց նախապատրաստվելու ժամանակ տալու կաթոլիկներին նույնպես աքսորեցին[112]: Կառավարության հրամանով աքսորվում են նաև քաղաքի ռուսահպատակ, պարսկահպատակ ու բուլղարահպատակ հայերը[113]:

Թեև տեղահանության հրամանը մահապատժի սպառնալիքով արգելում էր քաղաքի հույներին իրենց տներում թաքցնել հայերին կամ խնամել որբերին[114], այդուհանդերձ շատ հայեր իրենց երեխաներին հանձնում են ծանոթ հույների, ամերիկացի միսիոներ Քրոուֆորդի[115] կամ հույների մետրոպոլիտի խնամքին[116:]

ԱՄՆ հյուպատոս Օսկար Հայզերը դեսպան Մորգենթաուին ուղարկած նամակում նշում է, որ տեղահանությունից առաջ կառավարությունը թույլատրում էր հայերին ցանկության դեպքում մինչև 15 տարեկան աղջիկներին ու մինչև 10 տարեկան

---

108 Յոհաննես Լեփսիուս, *Գերմանիան և Հայաստանը*, 153: Sarafian, United States Official Records, 154: Սարյան, ձեռագիր հուշ, 82, 83: Նազլեան, *Արք. Նազլեանի Յուշերը*, 199-200:

109 Նազլեան, *Արք. Նազլեանի Յուշերը*, 199-200:

110 Sarafian, *United States Official Records*, 145: Սարյան, «Ձեռագիր հուշ», I-92: Նազլեան, *Արք. Նազլեանի Յուշերը*, 200: Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 246-249:

111 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի,* 236: Սարյան, «Ձեռագիր հուշ», I-92: Նազլեան, *Արք.Նազլեանի Յուշերը*, 200:

112 Արտեմ Օհանջանյան, *Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին* (1915-1918, *փաստաթղթերի ժողովածու*) (Երևան, Նահապետ, 2004), 33-34:

113 Bryce, *The Treatment of Armenians*, 72; Sarafian, *United States Official Records*, 150.

114 Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 226:

115 Լինդոն Ս. Քրոուֆորդը (1852-1918 թթ.)՝ որպես Օտարերկրյա առաքելությունների ամերիկյան լիազորների խորհրդի (Ամերիկյան խորհուրդ/American Board of Commissioners for Foreign Missions) միսիոներ, Օսմանյան կայսրություն տեղափոխվել էր 1879 թ.: Արևմտաթուրքական առաքելության կազմում կնոջ հետ Տրապիզոնի կայան է տեղափոխվում 1903 թ. և մնում այնտեղ մինչև իր մահը՝ 1918 թ.: American Board of Commissioners for Foreign Missions, *The One Hundred and Sixth Annual Report of the American Board of Commissioners for Foreign Missions* (Boston: The Rumford Printing Co. Concord, NH, 1916), 74;Amerikan Bord Heyeti (American Board), Istanbul, "Memorial records for Lyndon S. Crawford," American Research Institute in Turkey, Istanbul Center Library, online in Digital Library for International Research Archive, Item #16810, http://www.dlir.org/archive/items/show/16810, դիտվել է՝ 07.10.2022:

116 Սարյան, «Ձեռագիր հուշ», 86-87:

տղաներին հանձնել թուրքերի կողմից հատկացված որբանոցներ[117]: Առաջին հայացքից մարդասիրական թվացող այդ քայլով Ջեմալ Ազմին մոլորեցնում էր քրիստոնյա բնակչությանը. իբր կառավարությունը մտահոգ է հայերի համար: Տրապիզոնում հունական համայնքի մետրոպոլիտ Խրիսանթոս սրբազանը վալի Ջեմալ Ազմիին խնդրում է որբացած հայ երեխաների համար որբանոց բացել, որի ծախսերը կհոգային մետրոպոլիտն ու Տրապիզոնի հունական համայնքը: Վալի Ջեմալ Ազմին համաձայնում է. վերջինիս նախագահությամբ հանձնախումբ է ստեղծվում որբանոց բացելու համար, և համապատասխան քայլեր են ձեռնարկվում: Հանձնախմբի անդամներն էին Խրիսանթոս մետրոպոլիտը, երեք քրիստոնյա և երեք մուսուլման: Ըստ Տրապիզոնում ԱՄՆ հյուպատոս Օսկար Հայզերի՝ թուրքերի կողմից «որբանոց» կոչված այդ տներում պահվում էր մոտ 3 000 հայ երեխա. նրանց խնամում էին երիտասարդ հայ կանայք և աղջիկներ: Որբանոցների տնօրենները թուրք էին, և դրանք հսկվում էին ժանդարմների կողմից[118]: Հայ որբերի համար որբանոց բացելու հարցում Ջեմալ Ազմիի «մարդասիրական» վերաբերմունքն իրականում միայն մեկ նպատակ էր հետապնդում՝ թուրքացնել հայ երեխաներին: Հարկ է նշել, որ ցեղասպանության տարիներին հայերի թուրքացման երևույթն իթթիհաթականների քաղաքականության մաս էր: Այն ծրագրված էր, կիրառվում և վերահսկվում էր կենտրոնական իշխանությունների կողմից:[119] Տասը օր հետո երիտթուրքերի Կենտրոնական կոմիտեի Տրապիզոնի ներկայացուցիչ Նաիլ բեյի նախաձեռնությամբ «որբանոցը» փակվում է: Որբերի մի մասին տեղավորում են թուրքական որբանոցներում, Կարմիր մահիկի հիվանդանոցում, որտեղ նրանց թունավորում են, մի մասին էլ խեղդամահ անում Սև ծովում[120]: Տրապիզոնի ոճրագործների դատավարության 13-րդ նիստի ժամանակ Վիրջին Օդաբաշյանը վկայում է, որ ամերիկյան դպրոցում իր խնամքի տակ գտնվում էին 30-40 երկուսից չորս տարեկան տղաներ, որոնց բժիշկ Սաիբի հրամանով տեղավորում են երկու մեծ՞ կողովների մեջ ու նետում Սև ծովը[121]: Գեղեցկադեմ աղջիկներին տեղավորում են թուրք ընտանիքներում, հասարակաց տներում[122], մյուսներին՝ Կարմիր մահիկի հիվանդանոցում և թունավորում[123]: Ցեղասպանությունը վերապրած Գոհար Սարյանը, որը տեղահանության օրերին գտնվում էր Կարմիր

117 Sarafian, *United States Official Records*, 687.

118 Նույն տեղում, Յովակիմեան: *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 232:

119 Հարցի շուրջ մանրամասն տե՛ս Էդիտա Գզոյան, Ռեգինա Գալուստյան, Շուշան Խաչատրյան, Էլինա Միրզոյան *Հայ երեխաների թուրքացումը Հայոց ցեղասպանության տարիներին* (Երևան, ՀՑԹԻ, 2022):

120 Յովակիմեան: *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 232: Kévorkian, *The Armenian Genocide*, 471-473: Սարյան, «Ձեռագիր հուշ», 88-89:

121 «Տրապիզոնի ջարդարարների դատավարութիւնը: «Ծծկեր տղաները խամսի փուկի պես սթիֆ ըրած ծով կը թափեն», *Ճակատամարտ*, 20 ապրիլ 1919, 2:

122 «Հայ աղջիկներ՝ իբրեւ ընծայ իթթիհադի կենտրոնին», *Ճակատամարտ*, 9 ապրիլի 1919, 2: Sarafian, *United States Official Records*, 687:

123 «Հայերը ինչպէս կը թունաւորէին թուրք հիւանդանոցին մէջ», *Ճակատամարտ*, 2 ապրիլի 1919, 2: Սարյան, ձեռագիր հուշ, I-76-77:

մահիկի հիվանդանոցում, իր հուշագրության մեջ նշում է, որ 85 հայ տղա երեխաների՝ երեք ամսականից մինչև վեց տարեկան, խլելով մայրերից, տեղավորում են հիվանդանոցում, իսկ մայրերին սպանում: Հաջորդ օրը թուրք կանայք են գնում հիվանդանոց, ընտրում են առողջ երեխաների ու տանում իրենց հետ: Բժիշկ Ալի Սաիբի հրամանով՝ մնացած երեխաներին կեսգիշերին թունավորում են[124]: Իսկ երբ թունավորման դեպքերը բացահայտվում են, բոլոր հայ հիվանդներին Ալի Սաիբի հրամանով դուրս են բերում հիվանդանոցից՝ ծովը նետելու[125]:

Տրապիզոնում ամերիկյան դպրոցի տնօրեն դոկտոր Քրոուֆորդը և նրա կինը դպրոցում իրենց խնամքի ներքո են ընդունում շուրջ 300 երեխայի, ի պահ են վերցնում նաև որոշ հայերի կողմից գումար և զարդեր՝ չենթարկվելով կառավարության հրամանին[126]: Ըստ ժամանակակիցների՝ այդ հնարքը պատճառ է դառնում, որ թուրք իշխանություններն ավելի դաժան վարվեն հայերի նկատմամբ[127]: Կառավարությունը պահանջում է հանձնել այդ երեխաներին և հայերի կողմից ի պահ թողնված ունեցվածքը: ԱՄՆ հյուպատոսին գրած նամակում դոկտոր Քրոուֆորդը նշում է, որ մինչ իրենք կհասցնեին հաշվել և արձանագրել հայերի՝ իրենց մոտ պահ թողնված գումարները, թուրքական ոստիկանությունը և կառավարության կողմից ստեղծված հանձնախումբն առգրավում է այդ գումարները[128]: Վալին մերժում է նաև մի խումբ հայ երեխաների՝ ամերիկյան հյուպատոսության պաշտպանությանը հանձնելու՝ Ավստրիայի հյուպատոսի միջնորդությունը[129]:

Տեղահանությունը սկսվում է հրամանն արձակելու հինգերորդ օրը: Պատկերը նույնն էր ինչպես Տրապիզոն քաղաքում, այնպես էլ նահանգի մյուս վայրերում: Դեպքերի ականատես Ղազար Մակունցի վկայությամբ՝ ոստիկանական ջոկատները դուրս էին հանում ժողովրդին իրենց տներից ու քշում դեպի համախմբման վայրեր: Շատերն ընդդիմանում էին հրամանին՝ փորձելով դիմել ինքնապաշտպանության[130]:

Տրապիզոն քաղաքի հայ բնակչությունն աքսորվում է մի քանի քարավանով: Առաջին քարավանը, զինված ժանդարմների հսկողությամբ, քաղաքից դուրս է գալիս 1915 թ. հուլիսի 1-ին[131]: Շուրջ 2 000 հայի՝ փոքր խմբերով քաղաքից քշում են Դեյիրմենդերե, այնտեղից էլ՝ Գյումուշխանե[132]: Նմանօրինակ երեք խմբեր՝ միասին 6 000 հոգի, աքսորվում են առաջին երեք օրվա ընթացքում: Նրանց շարքերում

---

124 Սարյան, ձեռագիր հուշ, 82-85, 90-91:

125 Ցեղասպանությունը վերապրած Ազնիվի վկայությունը Տրապիզոնի ոճրագործների դատավարության երրորդ նիստի ժամանակ, *Ճակատամարտ* (Պոլիս, 2 ապրիլի 1919 թ.), 2:

126 Sarafian, United States Official Records, 150. Սարյան, ձեռագիր հուշ, I-86-87:

127 *Յուշամատեան Մեծ Եղեռնի*, 1915-1965, Գ հրատարակութիւն, խմբ.՝ Գերսամ Ահարոնեան (Պէյրութ, «Զարթօնք», 1967), 471:

128 Sarafian, *United States Official Records*, 150.

129 Լեփսիուս, *Գերմանիան և Հայաստանը*, 159:

130 Մակունց, Տրապիզոնի Հայոց տեղահանութիւնը, 68: Մարտիկ Թահմազեան, *Գրութուն մէր անցյալնէրի մասին*, ՀՅԹԻ թանգարանային ֆոնդեր, բժ. 8, ակտ № 6699, թպ. 159:

131 Sarafian, *United States Official Records*, 178.

132 Kévorkian, *The Armenian Genocide*, 480.

էին հոգևորականներ, առևտրականներ, բանկային ոլորտի աշխատողներ, իրավաբաններ և այլ մասնագիտություն ունեցող հայեր[133]: Քարավանները ձևավորվում էին Տրապիզոնից ոչ հեռու գտնվող Դեյիմենդերե գետակի ափին, որը դարձել էր աքսորականների հավաքատեղի: Այստեղ առանձնացնում էին կանանց, տղամարդկանց, գեղեցիկ աղջիկներին ու երեխաներին: Աղջիկներին վերադարձնում են Տրապիզոն, ամուսնացնում թուրք տղամարդկանց հետ, իսկ ովքեր ընդդիմանում էին, կրկին ուղարկվում էին աքսորի: Մնացած տեղահանվածներին ուղարկում են նահանգի հարավային սահմաններ, դեպի Երզնկա՝ Արևմտյան Եփրատի հոսանքով դեպի հարավ[134]: Քաղաքում մնում են Օսմանյան դրամատան ծառայողներ, Ծխախոտի ընկերության պաշտոնյաներ, հյուպատոսարանների հայ ծառայողներ, միայնակ կանայք: Որոշ ժամանակ անց նրանց նույնպես քաղաքից վտարում են և սպանում[135]:

1915 թ. հուլիսի 6-ին Տրապիզոնի հայերի շուրջ 1 000 տուն դատարկված էր, իսկ բնակիչները՝ տարագրված[136]:

Այնուհետև սկսվում է հայերի տների թալանը: Այստեղ հարկ է նշել, որ, ի տարբերություն մյուս նահանգների, տեղահանությունից առաջ Տրապիզոնում հայ բնակչությանը չէր թույլատրվում վաճառել ունեցվածքն ու անշարժ գույքը: Այդ մասին նշվում էր տեղահանության հրամանի երկրորդ կետում, որտեղ մասնավորապես ասվում էր, որ արգելված է վաճառել կալվածքներն ու հողերը կամ ի պահ հանձնել ծանոթներին. դրանք պետք է պահվեն կառավարության հսկողության տակ գտնվող շենքերում և վերադարձից հետո հանձնվեն տերերին, իսկ ովքեր չենթարկվեին՝ պետք է դատվեին պատերազմական ատյանով: Արտոնվում էր միայն կառավարությանը վաճառել այն ամենը, ինչ հնարավոր կլիներ գործածել բանակի կարիքների համար[137]: Տեղահանության հրամանի այս կետը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ Տրապիզոնի հայերն ունևոր էին, և իթթիհաթականները, տեղյակ լինելով դրան, քայլեր էին ձեռնարկում հայերի ունեցվածքը յուրացնելու ուղղությամբ: Այդ մասին են վկայում Երրորդ զորաբանակի հրամանատար Վեհիբ փաշան և Տրապիզոնի նախկին ոստիկանապետ Նուրին Տրապիզոնի ոճրագործների դատավարության երկրորդ[138] և վեցերորդ[139] նիստերի ժամանակ: Ըստ Վեհիբ փաշայի վկայության՝ Տրապիզոնի հայերի գույքի մեկ երրորդը յուրացրել են իթթիհաթականները:[140] Նախ-

133 Sarafian, *United States Official Records*, 178.

134 Նույն տեղում, 70:

135 Լեփսիուս, *Գերմանիան և Հայաստանը*, 202: Յովակիմեան, *Պատմութիւն հայկական Պոնտոսի*, 245:

136 Sarafian, United States Official Documents, 179.

137 Նույն տեղում:

138 «Տրապիզոնի ջարդարարներուն Դատավարութիւնը. Վեհիպ փաշա կ'ամբաստանէ», *Ճակատամարտ*, 30 մարտ 1919, 3:

139 «Տրապիզոնի ջարդարարներուն Դատավարութիւնը. Հողին տակ պահուած դրամները», *Ճակատամարտ*, 17 ապրիլ 1919, 3:

140 «Տրապիզոնի ջարդարարներուն Դատավարութիւնը. Վեհիպ փաշա կ'ամբաստանէ», *Ճակատամարտ*, 30 մարտ 1919 թ., 3:

կին ոստիկանապետ Նուրին Տրապիզոնի ոճրագործների դատավարության վեցերորդ նիստի ժամանակ դոկտոր Ալի Սաիբի դեմ վկայության մեջ նշում է, որ վերջինս Գյումուշխանեից հեռագրում է՝ խնդրելով սպանված հայ Հաջի Մինասի ծովեզերքի տունն ամեն գնով իր համար պահել: Ոստիկանապետ Նուրին պարզաբանում է, որ Հաջի Մինասի տունը ոչ միայն թանկարժեք կահույքով էր կահավորված, այլ նաև տան պարտեզում թաքցրած զարդեր կային, ինչի մասին պատմել էին Հաջի Մինասի երեխաները: Ներքին պայմանավորվածությամբ՝ տան գույքը յուրացնում է Ալի Սաիբը, իսկ պարտեզում թաքցրած զարդերը՝ ոստիկանապետ Նուրին:[141] Հարկ է նշել նաև, որ նահանգի հայերի ունեցվածքը աճուրդով վաճառվեց առաջին հերթին իթթիհաթականներին:[142]

Տեղահանությունից հետո, կառավարության հրահանգով, ոստիկանությունը տներից հանում էր կահույքն ու թանկարժեք իրերը, դրանք առանց դասակարգելու ու գույքագրելու տեղափոխում քաղաքի մոտակայքում գտնվող ընդարձակ շինություններ: Ոստիկանության ներկայացուցիչները և մահմեդական կանայք ու երեխաներ լցվում էին այդ շինությունները և դուրս գալիս այն ամենով, ինչ տեղավորվում էր ձեռքերի մեջ: Հայզերը նշում էր, որ հայերի տները դատարկելուց հետո հերթը նրանց խանութներին էր հասնելու: Հայերի ունեցվածքը հանվում է աճուրդի: Քաղաքի հույներին նույնպես իրավունք է տրվում մասնակցելու այդ գնումներին, սակայն մետրոպոլիտն արգելում է մասնակցություն ունենալ այդ ամենին:[143] Ջեմալ Ազմիի հրամանով ստեղծվում է հանձնախումբ, որը պետք է զբաղվեր հայերի ունեցվածքը տնօրինելու ու վաճառելու հարցերով՝ վճարելու համար հայերի պարտքերը:[144]

1915-1923 թթ. Տրապիզոնի նահանգի հայությունը ևս ենթարկվեց տեղահանության, կոտորածների ու իսլամացման: Մինչև ցեղասպանության ծրագրի իրագործումը 1909-1914 թթ. Տրապիզոնում տարվում էր հակահայ բացահայտ քարոզչություն, անցկացվում էին հակահայկական միջոցառումներ, որոնց նպատակը հայ բնակչության դիրքերի թուլացումն էր: Հակահայ քարոզչությունն ու միջոցառումներն ամենատարբեր դրսևորումներն էին ստանում՝ սկսած քաղաքի հայ և թուրք բնակիչների կենցաղային վեճերը իթթիհաթական պաշտոնաթերթում լուսաբանելուց մինչև հանրային հավաքներ: Երբ Տրապիզոն է գալիս երիտթուրքական կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ, Հատուկ կազմակերպության նախագահ Բեհաեդդին Շաքիրը, նահանգի հայերի ցեղասպանության իրագործման ծրագիրը մտնում է ակտիվացման փուլ:

---

141 «Տրապիզոնի ջարդարարներուն Դատավարութիւնը. Հողին տակ պահուած դրամները», *Ճակատամարտ*, 17 ապրիլ 1919, 3:

142 Անրի Բարբի, *Սարսափի Երկրին մէջ: Նահատակ Հայաստան*, Բ հրատարակութիւն (Հալէպ, Արեւելք, 2010), 47:

143 Նույն տեղում, 47:

144 Sarafian, *United States Official Records*, 201.

IN PREPARATION FOR THE ARMENIAN GENOCIDE IN TRAPIZON: EARLY PHASE AND ACTIVATION

Lusine Y. Abrahamyan
Armenian Genocide Museum-Insitute Foundation

Summary

The article examines the anti-Armenian policy of the Young Turks' government in the province of Trapizon after the 1908 revolution. A series of anti-Armenian activities and anti-Armenian propaganda were carried out by the government and local Muslim fanatics, that had a negative impact on both the social and economic life of Trapizon Armenians. Based on the primary sources, the paper discusses some elements of persecutions against the Armenian population of Trapizon, those related to planning, organization, implementation, and the involvement of the state. The Armenian Genocide was the logical continuation of that policy, which entered the activation phase when Behaeddin Shakir, a member of the Central Committee of the Young Turks' party, the president of the Special Organization, arrived in Trapizon.

Key words: The Armenian Genocide, Trapizon, anti-Armenian policy, trading boycott, deportations, Islamization, abandoned property.

ПОДГОТОВКА К ИСПОЛНЕНИЮ ГЕНОЦИДА АРМЯН В ТРАПИЗОНЕ: РАННЯЯ ФАЗА И АКТИВАЦИЯ

Лусине Ю. Абраамян
Фонд "Музей-Институт Геноцида армян," Армения

Резюме

В статье рассматриваеться антиармянская политика, проводимая после переворота младотурецким правительством против армянского населения провинции Трапизон. Она осуществлялась путем антиармянской пропаганды, которая отрицательно влияла как на общественную жизнь, так и на экономическое положение армян.
Основываясь на сообщениях различных первоисточников, в статье представлены многочисленные примеры антиармянской политики, осуществляемой в Трапизоне в 1908-1914 гг., рассматриваются гонения на армян, некоторые подробности их организации и осуществления, а также вопрос вовлеченности правительства.
Логическим продолжением четко и целенаправленно проводимой полити стал Геноцида

армян, активной фазой которого стал приезд в Трапизон члена центрального комитета младотурецкой партии, председателя Специальной организации Бехаэддина Шакира.

Ключевые слова: Геноцид армян, Трапезон, антиармянская политика, торговый бойкот, депортация, исламизация, брошенное имущество.

REFERENCES

«Առեւտրական պոյքոթը եւ մեծ վաճառականները» [The Trading Boycott and the Big Merchants]. *Azatamart* (Constantinople), 23 February/3 March 1914;

«Առեւտրական պոյքոթը հայերու դէմ» [The Anti-Armenian Trading Boycott]. *Azatamart*, 2/15 March 1914;

«Առեւտրական պոյքոթը» [The Trading Boycott]. *Azatamart*, 10/23 January 1914;

«Թիւրքական պատերազմի շուրջը» [About the Turkish War]. *Mshak* (Tiflis), 13 November 1914;

«Իթթիհադական պետերու դատավարութիւնը» [The Trial of the Ittihadist Chiefs]. Jakatamart (Constantinople), 9 May 1919;

«Հակաքրիստոնէական պոյքոթը» [Anti-Christian Boycott]. *Azatamart*, 8/21 February 1914;

«Օրը Օրին. Յարութիւն Շահրիկեան» [From Day to Day: Harutyun Shahrikyan]. *Hayrenik* (Constantinople), 7/20 July 1909;

Ճակատամարտ [Jakatamart]. Constantinople, 17 April, May 1919;

Մշակ [Mshak]. Tiflis, March, November, December 1914;

Aharonyan, Gersam. *Յուշամատեան Մեծ Եղեռնի 1915-1965* [Almanach of Mets Yegher'n, 1915-1965]. Beirut: Zartonk Publishing House, 1967;

Alpoyajian, Arshak. *Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց* [History of the Armenian Evdokia]. Cairo: Nor Astgh Publishing House, 1952;

Bablumyan, Arpine. *Արևմտյան Հայաստանի Խարբերդի նահանգի հայ բնակչությունը XIX դարի վերջերին - XX դարի սկզբներին (Պատմաժողովրդագրական ուսումնասիրություն)* [Armenian Population of the Kharberd Vilayet of Western Armenia in the late XIX - early XX centuries (Historical-Demographic Study)]. Yerevan: Institute of History, 2017;

Gabikian, Karapet. *Եղեռնապատում Փոքուն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ* [The History of the Catastrophe of Armenia Minor and its Great Capital Sebastia]. Boston: Hayrenik Publishing House, 1924;

Georgiants, Vardan. *«Ազգային խրտուիլակներ»* [The National Scarecrows]. Pontos periodical, Trapizon, 5 July 1910, nos. 6-7-8-9;

Ghazarian, Haykazn. *Ցեղասպան թուրքը* [The Genocidal Turk]. Beirut: Hamazgayin Publishing House, 1968;

Gzoyan, Edita, Regina Galustyan, Shushan Khachatryan and Elina Mirzoyan. *Turkification of Armenian Children during the Armenian Genocide.*Yerevan: AGMI, 2021.

Hovakimian, Hovakim (Arshakouni). *Պատմութիւն հայկական Պոնտոսի* [The History of the Armenian Pontus]. Beirut: Mshak, 1967;

Kirakosian, John. *Առաջին Համաշխարհային պատերազմը և Արևմտահայությունը* [WWI and Western Armenians]. Yerevan: Hayastan, 1965;

Kotikian, Arakel (comp.). *Տրապիզոն* [Trebizond]. Nubarian Library, 56-Trébizonde;

Kotikian, Arman. *Դպրոցա-թատերական կյանքը Տրապիզոնում* (1815-1915) [The School and Theatre Life in Trapizon in 1815-1915]. Yerevan: Publishing House of the Natioanal Academy of Sciences of the Armenian SSR, 1962;

Makunts, Ghazar. *Տրապիզոնի Հայոց տեղահանութիւնը. Յուշագրական էջեր* [The Deportation of the Trapizon Armenians: Memoir Pages]. Tehran: Aliq Publishing House, 1963;

Minakhorian, Vahan. *1915 թուականը. Արհաւիրքի Օրեր* [1915, Days of Disaster]. Venice - St. Lazarus: Omar Khayam, 1949;

Nazlian, Arch. Hovhannes. *Տրապիզոնի Թեմին Վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի Յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914-1928 Շրջանի Քաղաքական-կրոնական Դեպքերուն Մասին* [The Momoirs of Hovhannes Nazlian, Bishop of Trabzon Diocese, on the Political and Religious Events in 1914-1928]. Beirut-Lebanon: Hay Katoghike, 1960;

Ohanjanian, Artem. *Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին* (1915-1918, փաստաթղթերի ժողովածու) [The Reports of Austria-Hungarian Diplomats on the Armenian Genocide (1915-1918, collection of documents). Yerevan: Nahapet, 2004;

Qilimjian, Gevorg. *Թուրք-հունական հարաբերությունները 1908-1914 թվականներին* [Turkish-Greek Relations in 1908-1914]. Yerevan: YSU Publishing House, 1988;

Sarian, Gohar. *Ձեռագիր հուշ տրապիզոնցի Սարյան ընտանիքի* [A Hand-written Memoir about the Sarian Family]. *AGMI Collection*, section 8, folder 11819, no 299;

Stepanian, Stepan. *Германские источники о геноциде армян, Период Первой Мировой Войны,* т.1 [The German Sources on the Armenian Genocide. The period of WWI, vol. 1]. Yerevan: Hayastan, 1991;

Tahmazean, Martik. *Գրութուն մէր անցյալնէրի մասին 1850 թվից 1924 թվերը* [A Note about Our Past from 1850 to 1924]. *AGMI Collection*, AGMI archives, section 8, filder 6699, no 159;

Torlakian, Missak. *Օրերուս հետ* [With my Days]. Beirut: HAYK – Gemmeizeh - Beirut, 1963.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Լուսինե Յու. Աբրահամյանը «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի հայցորդ է, Հայոց ցեղասպանության զոհերի ու վերապրողների փաստագրման և ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ, ՀՑԹԻ հինադրամի թանգարանային աշխատանքների գծով փոխտնօրեն:

Ուսումնասիրության ոլորտը՝ Տրապիզոնի հայ բնակչության բնաջնջումը Հայոց ցեղասպանության տարիներին:

Էլ. փոստի հասցե՝ abrahamyan.lousine@gmail.com

Lusine Y. Abrahamyan, is a PhD student of the Armenian Genocide Museum-Institute foundation, senior laboratory technician at the Department of the Armenian Genocide Victims Docomumentation and Data Collection, deputy director on museum affairs of AGMI foundation.

Research field: Extermination of the Armenian population of Trebizond during the Armenian Genocide.

E-mail: abrahamyan.lousine@gmail.com

Лусине Ю. Абраамян, аспирант фонда «Музей-институт Геноцида армян», старший лаборант отдела сбора данных и документирования жертв Геноцида армян, заместитель директора по музейным вопросам фонда МИГА.

Область исследования: истребление армян Трапезунда в годы Геноцида армян.

Эл.почта: abrahamyan.lousine@gmail.

Ցեղասպանագիտական հանդես 10 (2), 2022
https://doi.org/10.51442/jgs.0028

ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ԱՂԵՏԻՆ ԶՈՀ ԳՆԱՑԱԾ ՀԱՅԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ռոբերտ Ա. Թաթոյան
Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ հիմնադրամ, Հայաստան

Հոդվածում հայկական և օտար բազմաթիվ աղբյուրների տվյալների համեմատական վերլուծության հիման վրա փորձ է արվում հաշվարկել 1922 թ. Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թիվը: Նշված նպատակով.

ա) անդրադարձ է կատարվում հարցի պատմագրությանը,

բ) ներկայացվում և վերլուծության են ենթարկվում հույն, հայ և այլ քրիստոնեադավան զոհերի ընդհանուր թվաքանակի վերաբերյալ հիմնական աղբյուրների տվյալները, որոնց հիման վրա տրվում է զոհերի, մեր կարծիքով, առավել հավանական ընդհանուր թիվը,

գ) անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության նախօրյակի դրությամբ Զմյուռնիա քաղաքի և նահանգի հայ բնակչության և նախքան քեմալականների կողմից քաղաքի գրավումը՝ 1922-ի սեպտեմբերի դրությամբ Զմյուռնիա քաղաքում և շրջակայքում կենտրոնացած հայերի թվաքանակի հարցին,

դ) ներկայացվում և վերլուծության են ենթարկվում Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի վերաբերյալ տարբեր վավերագրերից քաղված այլ տվյալներ,

ե) ներկայացվում և վերլուծության են ենթարկվում Զմյուռնիայի աղետից մազապուրծ եղած, Զմյուռնիայից ու շրջակայքից տարհանված և Հունաստանում ու այլ երկրներում ապաստան ստացած հայ փախստականների թվաքանակի վերաբերյալ տվյալները, դրանք համեմատվում են նախքան աղետը՝ 1921-ի դրությամբ Փոքր Ասիայի արևմտյան շրջանների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալների հետ,

զ) առանձին անդրադարձ է կատարվում Զմյուռնիայից և շրջակայքից կալանավորված և Թուրքիայի ներքին շրջաններ աքսորված զինվորական տարիքի հայ տղամարդկանց կորստի հարցին:

Համաձայն վերոնշյալ հարցերի շրջանակի քննության հիման վրա մեր հաշվարկի՝ Զմյուռնիայի աղետին զոհ է գնացել մոտ 5 000-5 500 հայ, որից մոտ 4 000-ը զոհվել է հրդեհի, դրան նախորդած և հաջորդած կոտորածների և զանգվածային սպանությունների հետևանքով, իսկ մոտ 1 000-1 500-ը՝ 15-45 տարեկան տղամարդիկ, գերության և աքսորի ընթացքում: Հայ զոհերը կազմել են զոհերի ընդհանուր թվի (20-22 հազար) մոտ մեկ քառորդը:

Բանալի բառեր՝ Զմյուռնիայի աղետ, Զմյուռնիայի հայ բնակչություն, Հայոց ցեղասպանություն, փախստականներ, վիճակագրություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 10.08.2022: Ընդունվել է տպագրության՝ 16.09.2022:
The article was submitted on 10.08.2022 and accepted for publication on 16.09.2022.
Статья поступила 10.08.2022 и была принята к публикации 16.09.2022.

Ինչպես հղել՝ Ռոբերտ Ա. Թաթոյան, «Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի հարցի շուրջ», *Ցեղասպանագիտական հանդես* 10, No. 2 (2022), 49-73:
How to cite: Robert A. Tatoyan, “On the Question of the Armenian Death Toll as a Result of Smyrna

Catastrophe," *Ts'eghaspanagitakan handes* 10, no. 2 (2022): 49-73.
Как ссылаться: Роберт А. Татоян, "К вопросу о численности армян, погибших в результате смирнской катастрофы," *Цехаспанагитакан андес* 10, no. 2 (2022): 49-73.

Ա. Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի հարցը պատմագիտության մեջ

Զմյուռնիայի աղետը՝ 1922 թ. սեպտեմբերին քաղաքի քրիստոնեաբնակ թաղամասերի հրդեհումը, քաղաքի և շրջակայքի քրիստոնյա ազգաբնակչության համակարգված ջարդն ու զանգվածային սպանություններն[1] ընդունված է համարել Օսմանյան Թուրքիայում հայերի և հույների ցեղասպանության՝ Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայում հայկական և հունական ներկայության ոչնչացման եզրափակիչ արար: Դրանից ելնելով՝ Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի հարցը կարելի է և պետք է դիտարկել որպես Հայոց ցեղասպանության հետևանքով զոհված հայերի թվաքանակի հարցի ուսումնասիրության կարևոր բաղադրիչ ենթահարցերից մեկը:

Հարցի վերաբերյալ առանձին ուսումնասիրություն գոյություն չունի: 1922 թ. սեպտեմբերի իրադարձություններին հույների ցեղասպանության, հույն և հայ՝ միասին, կամ քրիստոնյաների բնաջնջման քաղաքականության պատմության ուսումնասիրության համատեքստում անդրադարձ կատարած հույն, հայ[2] և այլ ուսումնասիրողների հիմ-

---

1 Հետևելով 1913-16 թթ. Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան և 1923-28 թթ. հույն փախստականների կարգավորման հարցերով Ազգերի լիգայի հանձնաժողովի նախագահ Հենրի Մորգենթաուին՝ կարելի է առանձնացնել Զմյուռնիայի աղետի հետևյալ հիմնական տարրերը, որոնք հանգեցրել են զանգվածային մահերի. 1) Զմյուռնիայի քրիստոնյա թաղամասերի հրդեհումը, 2) զինվորական տարիքի հույն և հայ տղամարդկանց կանոնավոր ջարդը, 3) տների և համայնքային շինությունների կանոնավոր թալանը, 4) կանանց և աղջիկների կանոնավոր բռնաբարություններն ու առևանգումները, 5) զինվորական տարիքի հույն և հայ տղամարդկանց առանձնացումը և տեղափոխումը երկրի ներքին շրջաններ՝ աշխատանքային գումարտակներում հարկադիր ծառայությամբ, 6) մնացած կանանց, երեխաների և տարեցների արտաքսումը Հունաստան (տե՛ս Henry Morgenthau, *I was sent to Athens* (New York: Doubleday, Doran&Company, 1929), 47):
Զմյուռնիայի աղետի զոհերի թվի մեջ ներառում ենք անմիջականորեն վերոնշյալ գործողությունների ընթացքում և դրա հետևանքով ուղղակի զոհվածներին: Տեղահանությունից հետո անցած առաջին մի քանի ամիսների ընթացքում Հունաստանում և այլ երկրներում հանգրվանած փախստականների շրջանում թերսնման և համաճարակների հետևանքով գրանցված մահերը, որոնք քիչ չեն եղել, կարող են դառնալ առանձին ուսումնասիրության առարկա (Զմյուռնիայից հույն փախստականների վիճակի մասին տե՛ս օրինակ Onur Yildirim, *Diplomacy and Displacement: Reconsidering the Turco-Greek Exchange of Populations, 1922–1934* (New York&London: Routledge, 2012), 90: Հայ գաղթականների մասին տե՛ս Պետրոս Կոկինոս, *Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927)* (Երևան, ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտ, 1965), 30-35):

2 Տե՛ս հատկապես Գևորգ Վարդանյանի, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923)* (Երևան, ՀՑԹԻ, 2012): Տե՛ս նաև Մկրտիչ Ներսիսյան, «Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թվականի ողբերգության մասին (Զմյուռնիայի հայ և հույն բնակչության ջարդերի 70-ամյակի առթիվ)», *Պատմա-բանասիրական հանդես 2-3* (1992), 87-92: Թեհմինէ Մարտոյեան, «1922 սեպտեմբեր. Զմիւռնիայի հայերի եւ յոյների բնաջնջումը եւ քրիստոնեաբնակ թաղամասերի հրկիզումը», *Հայկազեան Հայագիտական Հանդէս* 41 (2021), 199-234: Tehmine Martoyan, "The Destruction of Smyrna in 1922: An Armenian and Greek Shared Tragedy," *in Genocide in*

նական մասը զոհվածների թվաքանակի հարցը ներկայացրել է հպանցիկ՝ շատ դեպքերում հաղորդելով միայն հույն կամ էլ առանց էթնիկական պատկանելության առանձնացման՝ ընդհանուր քրիստոնյա զոհերի թիվը:

Հայ պատմագիտական գրականության մեջ որպես Զմյուռնիայի աղետին, ներառյալ զոհվածների թվաքանակի հարցին առաջին անդրադարձներից կարելի է առանձնացնել 1961 թ. «Մեր Զմիւռնիա» ժողովածուում հրատարակված Արամայիս Կույումջյանի «Զմյուռնիայի մարտիրոսագրությունը» ակնարկը (անգլերեն): Հեղինակը նշում է, որ թեև կոտորածի ենթարկված քրիստոնյաների ճշգրիտ թիվը հաշվել դժվար է, սակայն «համաձայն որոշակի արժանահավատ տեղեկությունների», հայ բնակչությունը տվել է ընդհանուր առմամբ 15 000 զոհ, իսկ թուրքական սրից կարողացել է փրկվել հազիվ 2 500-ը[3]:

Խորհրդահայ և ներկայիս հայաստանյան պատմագիտական գրականության մեջ Զմյուռնիայի աղետի հայ զոհերի թիվն ընդունված է տեղակայել 20-30 000-ի սահմաններում: Այսպես, Ալբերտ Խառատյանը զոհերի ընդհանուր թիվը հաշվում է 100 000, որից հայեր՝ շուրջ 20-25 000՝ ավելացնելով, որ աղետին նախորդող շրջանում Զմյուռնիա էին լցվել նաև շրջակա բնակավայրերի հայ բնակիչները, ինչպես նաև բազմաթիվ փախստականներ Կիլիկիայից[4]:

Անվանի պատմաբան Մկրտիչ Ներսիսյանն իր «Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թվականի ողբերգության մասին» հոդվածում խոսում է «տասնյակ հազարավոր» հայազգի զոհերի մասին[5]՝ հղելով ըստ էության երկրորդական աղբյուրի՝ պոլսահայ, հետագայում՝ հայրենադարձ հայաստանաբնակ մշակութային գործիչ Վաղինակ Բյուրատի հուշերի վրա, որը հայ զոհերի թիվը հաշվում է 35 000[6]:

---

the Ottoman Empire. Armenians, Assyrians, and Greeks, 1913-1923, ed. George N. Shirinian (New York: Berghahn Books, 2017), 227-249: Օսմանյան Թուրքիայում հույների ցեղասպանության պատմությանն իրենց աշխատանքներում անդրադարձած հայ ուսումնասիրողների մասին տե՛ս նաև Թեհմինե Մարտոյան, «Հույների ցեղասպանության պատմության հիմնահարցը հայ պատմագրության մեջ», *Ցեղասպանագիտական հանդես* 7, թիվ 1 (2019), 116-125:

3 Տե՛ս Aramais Kouyoumdjian, "The Martyrdom of Smyrna," *Մեր Զմիւռնիան եւ շրջակայ քաղաքները* (Նիւ Եորք, հրատարակութիւն Զմիւռնահայ միութեան, 1960), 199:

4 Զոհերի թվաքանակի իր այս տվյալի համար հիմք ծառայած որևէ աղբյուր ուսումնասիրողը չի նշում (տե՛ս Ալբերտ Խառատյան, «Զմյուռնիա», *Հայոց պատմություն: Հատոր III. Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.): Գիրք երկրորդ (1901-1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին)*, խմբ.՝ Աշոտ Մելքոնյան և ուրիշ. (Երևան, «Զանգակ», 2015), 318)): Հետաքրքիր է, որ ուսումնասիրողի՝ Զմյուռնիայի հայ գաղթօջախին նվիրված մեկ այլ հոդվածում, նույնպես առանց աղբյուր նշվելու, հայ զոհերի թիվը բարձրացված է մինչև 30 հազարի (տե՛ս Ալբերտ Խառատյան, «Զմյուռնիայի հայ գաղթօջախը (XVIII դ. 2-րդ կես – 1922)», *Լրաբեր հասարակական գիտությունների* 1, no. 1 (2013), 97):

5 Ներսիսյան, «Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թվականի ողբերգության մասին», 92:

6 Վաղինակ Բյուրատի հուշերը 1999 թ. հրատարակվել են (տե՛ս Վաղինակ Բյուրատ, *Իմ կյանքի հուշերից* (Երևան, Գրականության և արվեստի թանգարանի հրատարակչություն, 1999), հղվող տվյալը տե՛ս նույն տեղում, էջ 74): Կարելի է ենթադրել, որ Բյուրատի տվյալի հիմքը Պոլսի՝ օրվա մամուլի տեղեկություններն են: Այսպես, օրինակ, «Ճակատամարտ» օրաթերթի 1922 թ. սեպտեմբերի 28-ի համարում կարելի է գտնել ոմն Սեդրակ Գոհարունու՝ Աթենքից ստացված թղթակցությունը, որտեղ որպես աղետին զոհ գնացած հայերի թիվ նշվում է 35-40 հազարը (տե՛ս Սեդրակ Գոհարունի,

Գևորգ Վարդանյանն իր մենագրության մեջ, հղում կատարելով աղետի օրերին Զմյուռնիայում ամերիկյան հյուպատոս Ջորջ Հորթոնի տվյալների վրա, նշում է, որ աղետին զոհ գնացածների ընդհանուր թիվը կազմում է 100-120 հազար, իսկ միայն հայերից ոչնչացվել է 25 հազար մարդ[7] (Ջ. Հորթոնի տվյալներին մենք կանդրադառնանք հաջորդիվ):

Զոհերի նույն՝ 25 000 թիվը սեփական հաշվարկով փորձում է հիմնավորել իր «Հայերը Օսմանյան Թուրքիայում, 1914» աշխատությունում սփյուռքահայ ուսումնասիրող Սարգիս Կարայանը: Հիմնվելով մամուլի հրապարակումների վրա՝ նա գտնում է, որ աղետի նախօրյակին Զմյուռնիայում կենտրոնացել էր մոտ 50 հազար հայ: Հիմք ընդունելով մամուլից քաղված մի վկայություն՝ ուսումնասիրողը նշում է, որ աղետից հետո հինգ նավով Կոստանդնուպոլիս էր տարհանվել 10 հազարը, մնացած 40 հազարից որոշ մասը նավերով տեղափոխվել է Հունաստան, սակայն ճնշող մեծամասնությունը զոհվել է Զմյուռնիայում հրդեհի և ջարդերի ընթացքում[8]: Ուսումնասիրողի հաշվարկի հիմքերը խնդրահարույց են. 50 հազարը աղետի նախօրյակին Զմյուռնիայում կենտրոնացած հայերի՝ աղբյուրներում հանդիպող ամենաբարձր թիվն է, սակայն համաձայն առավել իրատեսական հաշվարկների՝ նշված ժամանակաշրջանում քաղաքում հանգրվանել էր մոտ 30-40 000 հայ (մանրամասն տե՛ս հաջորդիվ): Բացի դրանից, Զմյուռնիայից Պոլիս տեղափոխված 10 000 հայ գաղթականների մասին այլ աղբյուրներ տեղեկություններ չեն հաղորդում. ինչպես հայտնի է, աղետը վերապրած հայերի մեծ մասը տարհանվել էր Հունաստանի տարածք[9]:

Բ. Զմյուռնիայի աղետին զոհ գնացածների ընդհանուր թիվը

Զմյուռնիայի աղետի հետևանքով զոհված հայերի թվաքանակի հարցի ուսումնասիրության համար կարևոր է զոհերի ընդհանուր թվաքանակի վերաբերյալ հիմնական սկզբնաղբյուրների տվյալների ներկայացումն ու վերլուծությունը, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, սկզբնաղբյուրներից շատերը և դրանք իրենց հաշվարկներում օգտագործած ուսումնասիրողները զոհերի տարանջատում ըստ էթնիկական պատկանելության չեն տալիս, այլ հաղորդում են քրիստոնյա կամ հավաքական հույն և հայ զոհերի ընդհանուր թիվ:

Անմիջապես 1922 թ. սեպտեմբերի իրադարձություններից հետո որևէ պատկան մարմնի, այն է՝ Զմյուռնիային տեր դարձած քեմալական իշխանություններ, Հունաստանի իշխանություններ, իսկ հայ զոհերի պարագայում՝ Պոլսո հայոց պատ-

---

«Իզմիրի սարսափները», *Ճակատամարտ օրաթերթ* (Կ.Պոլիս), 28 սեպտեմբեր 1922, թիւ 1179 (3000), 4):

7 Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում*, 129:

8 Sarkis Y. Karayan, M.D., *Armenians in Ottoman Turkey, 1914. A Geographic and Demographic Gazetteer* (London: Gomidas Institute, 2018), 58.

9 Կարելի է ենթադրել, որ այստեղ մենք գործ ունենք պարզ տպագրական վրիպակի հետ և, գուցե, խոսքը Կ.Պոլիս տեղափոխված թվով հազար փախստականի մասին է:

րիարքարան և Հունաստանում հայկական եկեղեցական-թեմական կառույցներ, զոհվածների կանոնավոր հաշվառման ձեռնարկի մասին մեզ հասու աղբյուրներն ու գրականությունը տեղեկություններ չեն հաղորդում[10]: Սկզբնաղբյուրի արժեք ունեցող տվյալները, որոնք շրջանառվում են մասնագիտական գրականությունում, իրենցից ըստ էության ներկայացնում են իրադարձություններին անմիջական ականատեսների՝ օտարազգի լրագրողներ, զինվորականներ, դիվանագետներ, նպաստամատույց կազմակերպությունների ներկայացուցիչներ, հույն և հայ վերապրած փախստականներ և այլն, քիչ թե շատ հիմնավոր գնահատական-հաշվարկներ: Դրան համապատասխան՝ թվերի միջև տարբերությունը հասնում է տասնյակ անգամների, և հարցին անդրադարձած գրեթե բոլոր հետազոտողները խուսափում են միանշանակ պնդումներից՝ նշելով, որ Զմյուռնիայի աղետի հետևանքով զոհվածների ճշգրիտ թիվը հնարավոր չէ ներկայացնել[11]:

Սկզբնաղբյուրների քննությունը վկայում է, որ Զմյուռնիայի հրդեհի մարումից անմիջապես հետո ի հայտ են եկել և մամուլում ու այլ աղբյուրներում սկսել են շրջանառվել զոհվածների թվաքանակի վերաբերյալ իրարից էականորեն տարբեր երկու խումբ տվյալներ: Առաջին խումբ տվյալները կոտորածի և հրդեհի հետևանքով զոհվածների թիվը հաշվել 1000-ից 3000 մարդ, երկրորդ խումբ տվյալների համաձայն զոհվել էր 100 հազարից 120 հազար մարդ:

Այսպես, 1922 թ. սեպտեմբերի 16-17-ին «Նյու-Յորք թայմս» ամերիկյան պարբերականը Զմյուռնիայի աղետին անդրադարձել է մի քանի հոդվածներով, որոնցում ներկայացրել է այս երկու խումբ տվյալները: Մասնավորապես, հղում կատարելով սեփական թղթակցին, թերթը հաղորդում էր, որ «ամերիկյան ականատեսների գնահատմամբ առնվազն 1000 մարդ է զրկվել կյանքից հրդեհին նախորդած կոտորածների ընթացքում, սակայն դա կարող է համարվել իրականից ցածր գնահատական, քանի որ սպանությունները շարունակվել են ամբողջ գիշերվա ընթացքում հրդեհին զուգահեռաբար: Մեծ թվով քրիստոնյաներ, ենթադրվում է, զոհվել են հրդեհի ընթացքում»[12]:

Մեկ այլ թղթակցության մեջ կարդում ենք. «1000-ից 2000 քրիստոնյա է կոտորածի ենթարկվել Զմյուռնիայում թուրքերի կողմից նախքան հրդեհը, որը տարածվել է Փոքր Ասիայի ծովափնյա քաղաքի հայկական և այլ թաղամասերով»[13]:

---

10 Դրան հակառակ՝ բավականին շատ են ինչպես կոնկրետ Զմյուռնիայից, այնպես էլ Փոքր Ասիայի այլ շրջաններից և Արևելյան Թրակիայից (Եվրոպական Թուրքիա) տարհանված և Հունաստանում ապաստան գտած հույն և հայ փախստականների հաշվառման տվյալները: Դրանից ելնելով՝ հարցին անդրադարձած որոշ ուսումնասիրողներ փորձել են պարզել Զմյուռնիայի աղետին զոհ գնացածների թիվը դեպքերից առաջ և հետո Զմյուռնիա քաղաքում և շրջակայքում քրիստոնյաների թիվը համեմատելու միջոցով: Այդ հաշվարկներին անդրադարձ կլինի հետագա շարադրանքում:

11 Տե՛ս օրինակ Norman M. Naimark, *Fires of Hatred: Ethnic Cleansing in Twentieth-Century Europe* (Cambridge, MA: Harvard University Press, 2002), 52.

12 “Many Slain in the Night,” *The New York Times*, 16 September, 1922, մեջբերվում է ըստ *The Armenian Genocide. Prelude and Aftermath. As reported in the U.S. Press. The New York Times. Volume 2 (1915-1922)*, comp. and ed. Rev. Vahan Ohanian, Ara Ketibian (Mekhitarist publication, 2018), 1769:

13 “Threat to Bombard Turkish Quarters”, մեջբերվում է ըստ *The Armenian Genocide. Prelude and Aftermath,* 1771:

«Նյու Յորք թայմս»-ը նաև ներկայացնում էր «Ասոշեյթեդ փրես» լրատվական գործակալության հաղորդագրությունը, որտեղ նշվում էր հետևյալը. «Ավելի քան 2 000 մարդ է զոհվել Զմյուռնիայի մեծ հրդեհում, 2 500 շենք ոչնչացվել է»[14]:

Դրա հետ մեկտեղ «Նյու Յորք թայմս»-ը ներկայացրել է բրիտանական «Թայմս» պարբերականից արտատպված հաղորդագրությունը, որտեղ զոհվածների թվաքանակի վերաբերյալ հաղորդվում է հետևյալը. «Կոտորածի ենթարկվածների թվաքանակի վերաբերյալ գնահատական տալն անհնարին է, սակայն մենք կարող ենք վկայակոչել Ամերիկյան նպաստամատույց կոմիտեից Ջոն Մանոլայի կարծիքը, որի համաձայն հինգշաբթի [սեպտեմբերի 14 – Ռ.Թ.] առավոտի դրությամբ զոհերի թիվն առնվազն 120 000 էր»[15]:

«Նյու Յորք թայմս»-ը հաջորդիվ հետևյալ կերպ էր փորձում հաշտեցնել զոհվածների թվաքանակի վերաբերյալ իրարամերժ այս տվյալները. «Զմյուռնիայի կոտորածի ընթացքում սպանվածների թվաքանակի հաշվարկները մեծապես տատանվում են: Աթենքից ստացված մի հաղորդագրության մեջ մեջբերվում է ամերիկացի մարդասիրական կազմակերպության աշխատակցից [խոսքը Ջոն Մանոլայի մասին է - Ռ.Թ.], որը հայտարարել է, որ հինգշաբթի առավոտյան դրությամբ կար 120 000 զոհ: Ենթադրվում է, որ այս թվի մեջ ներառված են նաև վիրավորները, քանի որ նախորդ հաղորդագրությունները տեղակայում են մահացածների թիվը 1 000-ից մինչև 2 000»[16]:

«Նյու Յորք թայմս»-ի օրինակով՝ զոհվածների թվաքանակի վերաբերյալ իրարից էականորեն տարբերվող տվյալներ են հրատարակել նաև այլ ամերիկյան և արևմտյան պարբերականները[17]:

---

14 "Plague Breaks out among Refugees," մեջբերվում է ըստ *The Armenian Genocide. Prelude and Aftermath*, 1775:

15 "Puts the "Victims" at 120 000", *The New York Times*, 16 September 1922, մեջբերվում է ըստ *The Armenian Genocide. Prelude and Aftermath*, 1770:

16 "Wouldn't Let Allied Marines land," *The New York Times*, 17 September 1922, մեջբերվում է ըստ *The Armenian Genocide. Prelude and Aftermath*, 1774:

17 Տե՛ս, օրինակ, «Վաշինգտոն փոստ»-ի 1922-ի սեպտեմբերի 16-ի համարը, որտեղ հաղորդվում է. «Զմյուռնիայում թուրքերը 1 000-2 000 քրիստոնյայի կոտորածի են ենթարկել, մինչ կրակը սրբել է Փոքր Ասիայի ծովափնյա այլ քաղաքի հայկական և մյուս թաղամասերը»: ("Between 1000 and 2000 Killed in Smyrna Massacre," The Washington Post, 16 September 1922, մեջբերվում է ըստ The Armenian Genocide. Prelude and Aftermath, 1533): Մամուլի վկայությունների ծաղկաքաղը կարելի է գտնել Լոնդոնի Քինգս քոլեջի դասախոս Լիսիմախոս Օեկոնոմոսի՝ արդեն 1923 թ.՝ իրադարձությունների թարմ հետքերով լույս տեսած «Զմյուռնիայի և Արևելյան քրիստոնեության նահատակությունը. Փոքր Ասիայում թուրքերի չարագործությունները դատապարտող և Զմյուռնիայի սարսափների համար նրանց պատասխանատվությունը ցույց տվող ճնշող ապացույցների թղթապանակ» աշխատությունում (տե՛ս *The Tragedy of the Christian Near East: A File of Overwhelming Evidence Denouncing the Misdeeds of the Turks in Asia Minor and showing their Responsibility for the Horrors of Smyrna,* Compiled and prefaced by Lysimachos Oeconomos (London: Anglo-Hellenic League, 1923)), ինչպես նաև Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կազմակերպության գործադիր քարտուղար Էդվարդ Բերսթադտի «Մեծ դավաճանություն. Մերձավոր Արևելքի խնդրի քննություն» աշխատությունում (տե՛ս Edward Hale Bierstadt, The Great Betrayal: A Survey of the Near East Problem (New York: Robert M. McBride and Company, 1924)): Բերսթադտը, հիմնվելով մամուլից քաղված տեղեկությունների վրա, հաղորդում է, որ կոտորվել է մոտ 100 000 մարդ, 280 000-ը մղվել է դեպի Զմյուռնիայի քարափ, իսկ 160 000-ը թուրքերի կողմից տեղահանվել է դեպի երկրի խորքերը (նույն տեղում, 36):

Զմյուռնիայի դեպքերին անմիջականորեն հետևել և վկայություններ են թողել 1919-1927 թթ. Կ. Պոլսում ԱՄՆ գերագույն հանձնակատար ծովակալ Մարկ Բրիսթոլը և 1911-1917 և 1919-1922 թթ. Զմյուռնիայում ԱՄՆ հյուպատոս Ջորջ Հորթոնը:

Զմյուռնիայի աղետի վերաբերյալ առավել հեղինակավոր ուսումնասիրություններից մեկի՝ «Զմյուռնիա 1922. քաղաքի կործանումը» գրքի հեղինակ Մարջորի Հուսեփյան-Դոբկինը բնութագրում է այդ երկու գործիչներին որպես ԱՄՆ քաղաքականության մեջ երկու հակադիր ուժերի՝ պրագմատիզմի (Բրիսթոլ) և խղճի (Հորթոն) մարմնավորումներ[18]՝ ըստ այդմ հակադրելով նաև Զմյուռնիայի աղետի հետևանքով զոհվածների թվաքանակի վերաբերյալ երկուսի վկայությունները:

Այսպես, ուսումնասիրողը ներկայացնում է Մ. Բրիսթոլի՝ ԱՄՆ պետքարտուղարություն ուղարկած սեպտեմբերի 22-ի հեռագիրը, որտեղ ծովակալը զոհվածների թվաքանակի վերաբերյալ տալիս է հետևյալ վկայությունը. «Անհնարին է որևէ գնահատականի հանգել սպանությունների, հրդեհի և մահապատիժների հետևանքով մահերի թվաքանակի վերաբերյալ, սակայն ընդհանուր թիվը, ենթադրաբար, չի գերազանցում 2000-ը»[19]:

Իր հերթին, Ջ. Հորթոնն իր «Ասիայի կործանումը» գրքում Զմյուռնիայի աղետի հետևանքով զոհվածների թվի հարցին առանձին գլուխ է նվիրել, որը կրում է «Մահվան ենթարկվածների թիվը» (Number Done to Death) վերնագիրը[20]: Քանի որ Հորթոնի վկայությունը օգտագործվել է որպես բազմաթիվ հաշվարկների համար աղբյուր, ճիշտ ենք համարում ներկայացնել գրքից զոհերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ պարունակող կոնկրետ հատվածները.

«Քանիսն են կոտորածի ենթարկվել Զմյուռնիայում և նրան ենթակա քաղաքներում և գյուղերում: Անհնար է տալ ճշգրիտ թիվ, սակայն այն նվազեցնելու ջանքերը պետք է հենց սկզբից որպես ոչ վստահելի ընկալվեն: Պաշտոնական վիճակագրությունը Զմյուռնիայի հայ բնակչությունը քսանհինգ հազար է հաշվում, և հաստատ է, որ հայ համայնքի տղամարդկանց մեծ մասը մահվան է ենթարկվել, բացի դրանից՝ մեծ թվով կանայք ու աղջիկներ, ինչպես նաև մեծ թվով հույներ»[21]:

Այնուհետև ամերիկացի հյուպատոսը ներկայացնում է մամուլից քաղված տե-

---

18 Marjorie Housepian Dobkin, "George Horton and Mark L. Bristol: Opposing Forces in U. S. Foreign Policy, 1919-1923," (Athens, 1983), 131.

19 Marjorie Housepian Dobkin, *Smyrna 1922: The Destruction of a City* (New York: Newmark Press, 1998), 201. Ծովակալ Բրիսթոլի այս հաշվարկը, ըստ երևույթին, հիմնված է Թուրքիայում ամերիկյան ռազմածովային ուժերի շտաբի պետ, կապիտան Արթուր Հեփբերնի տվյալների վրա, որին ծովակալը հանձնարարել էր անձամբ շրջել Զմյուռնիայի փողոցներով և հաշվել դիակները (տե՛ս նույն տեղում, 145): Մարկ Բրիսթոլը մեկ այլ վկայության մեջ, որը թվագրվում է 1922-ի դեկտեմբերի 7-ով, զոհվածների թիվը բարձրացնում է մինչև 3 000-ի՝ դրա հետ մեկտեղ նշելով, որ տարբեր հաղորդագրություններում կորուստները «խիստ ուռճացված են» ներկայացված (տե՛ս Benny Morris, Dror Ze'evi, *The Thirty-Year Genocide: Turkey's Destruction of Its Christian Minorities, 1894–1924* (Cambridge, Mass, Harvard University Press, 2019), 449):

20 George Horton, *The Blight of Asia. An Account of the Systematic Extermination of Christian Populations by Mohammedans and of the Culpability of Certain Great Powers, with the True Story of the Burning of Smyrna* (Indianapolis, 1926), 173-176.

21 Նույն տեղում, 173:

ղեկություններ. «1922-ի սեպտեմբերի 18-ի «Լոնդոն Դեյլի Քրոնիքըլ» թերթի հաղորդագրությունում ասվում է. «Զոհվածների ամենացածր թիվը, որը տալիս են փախստականները, հարյուր քսան հազար է»[22]:

«Ռոյթերս» գործակալությունը նույն օրվա հաղորդագրության մեջ փաստում է հետևյալը. «Ոչ մի վկայությունից հնարավոր չէ զոհվածների ստույգ թիվ տալ, սակայն մտավախություն կա, որ այն կարող է անցնել հարյուր հազարից»[23]:

Մամուլից քաղված այս և այլ վկայություններ ներկայացնելուց հետո Հորթոնը եզրակացնում է. «Կասկածից վեր է, որ Զմյուռնիայի և շրջակայքի **բազմահազար** [թավագրումը մերն է – Ռ.Թ. (անգլ.՝ many thousands)] անպաշտպան բնակիչներ սպանվել են թուրքերի կողմից: Կոտորածի օրերին փաստացի սպանվածների թվին պետք է ավելացնել տեղահանության հետևանքով զոհված հույներին, մարդկանց, որոնք մահացել են կրակի մեջ կամ կյանքից զրկվել պատերի փլուզման հետևանքով, նրանց, որոնք հոգին են ավանդել նավամատույցում և նրանց, որոնք հետագայում մահացել են կարիքից, ստացած վերքերից կամ վշտից»[24]:

Վերոնշյալը հիմք է տվել Մարջորի Հուսեփյան-Դոբկինին պնդելու, որ Հորթոնը, իբր, հաշվում է 100 հազարից ավել զոհ[25]: Սակայն, ինչպես կարելի է տեսնել, 100-120 հազար զոհերի թիվը ներկայացված է մամուլից մեջբերումներում, ամերիկացի հյուպատոսն իր ուղղակի խոսքում հաղորդում է թուրքերի կողմից սպանված «բազմաթիվ հազար անպաշտպան բնակիչների» մասին: Այն, որ մենք գործ չունենք շփոթի հետ, փաստում է նաև այն հանգամանքը, որ իր գրքի վերջաբանում ևս, Հորթոնը, թվարկելով երկրի քրիստոնյա հպատակների դեմ թուրքական իշխանությունների գործած ոճիրները, Զմյուռնիայի աղետի կապակցությամբ նորից նշում է քաղաքի բազմաթիվ *հազարավոր* (անգլերեն՝ thousands) բնակիչների կոտորածի ենթարկվելու մասին[26]: Վերոնշյալից պարզ է դառնում, որ Զմյուռնիայի աղետին զոհ գնացածների թվաքանակի՝ ծովակալ Մ. Բրիսթոլի և Ջ. Հորթոնի գնահատականներն իրար էականորեն չեն հակասում՝ երկուսն էլ խոսում են հազարավոր զոհերի մասին, թեև Հորթոնն, անշուշտ, հակված է ավելի բարձր տվյալի:

Ջ. Հորթոնի գրքում նաև որևէ խոսք չկա 25 հազար ոչնչացված հայերի մասին. համաձայն նրա՝ 25 հազարը Զմյուռնիայի և գավառի հայ բնակչության ընդհանուր թիվն էր:

Զոհերի՝ վերոնշյալ սկզբնաղբյուրներում շրջանառվող մի կողմից 2 000-3 000, մյուս կողմից՝ 100-120 000 թվերի միջև տարբերությունը ստիպել է հարցին անդրադարձած որոշ հեղինակների իրենց հաշվարկներում ներգրավել այլ աղբյուրներ: Այսպես, հեղինակավոր հույն ուսումնասիրող Դմիտրի Պենձոպուլոսն իր «Փոք-

---

22 Նույն տեղում:

23 Նույն տեղում:

24 Նույն տեղում, 174:

25 Housepian Dobkin, Smyrna 1922, 201. Հուսեփյանի այս շփոթմունքը նկատել են նաև հրեա ուսումնասիրողներ Բենի Մորիսը և Դրոր Զեևը (տե՛ս Morris, Ze›evi, *The Thirty-Year Genocide*, 610):

26 Horton, *The Blight of Asia*, 281-282.

ռամասնությունների բալկանյան փոխանակումը և Հունաստանի վրա դրա ազդեցությունը» գրքում Զմյուռնիայի հրդեհի հետևանքով զոհվածների թիվը հաշվում է 12 000[27]: Այս տվյալը վերցված է բրիտանացի անվանի պատմաբան Քարլայլ Այլմեր Մըքարթնիի՝ իրադարձությունների թարմ հետքերով՝ 1931-ին լույս տեսած «Փախստականներ: Ազգերի լիգայի աշխատանքը» ուսումնասիրությունից[28]:

Ք. Մըքարթնիի հաշվարկին մոտ է դեպքերի ականատես, ամերիկացի լրագրող Մելվիլ Չաթերի տվյալը, որը Զմյուռնիայի աղետից երեք տարի անց՝ 1925 թ. գրված «Պատմության մեծագույն գաղթը» ակնարկում աղետի հետևանքով զոհվածների թիվը հաշվում է 10 հազար մարդ[29]: Ո՛չ Մըքարթնին, ո՛չ էլ Չաթերը չեն հաղորդում, թե ինչ աղբյուրներից են քաղել իրենց տվյալները, սակայն կարելի է ենթադրել, որ ուսումնասիրողներն օգտագործել են Մերձավոր Արևելքի Նպաստամատույց կազմակերպության (Near East Relief) տեղեկությունները: Մասնավորապես, զոհերի՝ 10 հազար թիվը հիշատակվում է Կոստանդնուպոլսում այդ կառույցի ներկայացուցչի՝ 1922 թ. սեպտեմբերի 19-ով թվագրվող հեռագրում[30]:

Պատմագիտական գրականության մեջ լայնորեն շրջանառվում է մեկ այլ բրիտանացի պատմաբան՝ Ռիչարդ Քլոգի «Ժամանակակից Հունաստանի հակիրճ պատմություն» գրքում ներկայացված Զմյուռնիայի աղետի զոհերի՝ 30 հազար թիվը[31]: Ցավոք, ուսումնասիրողը չի նշում իր այս տվյալի համար որևէ աղբյուր, ինչը թույլ չի տալիս կարծիք կազմել դրա հավաստիության աստիճանի վերաբերյալ:

Թուրքական զորքերի՝ Զմյուռնիա մտնելուց հետո 30 օրվա ընթացքում առնվազն

---

27 Dimitri Pentzopoulos, *The Balkan Exchange of Minorities and Its Impact Upon Greece* (London: Hurst & Company, 2002 (First published in 1962)), 47, Պենձոպուլոսի միջոցով նույն թիվը՝ Naimark, *Fires of Hatred*, 210:

28 C. A. Macartney, Refugees. *The Work of the League* (London: League Of Nations Union, 1931), 78-79.

29 Melville Chater, "History's Greatest Trek," *National Geographic Magazine* XLVIII, no. 5 (1925): 533-590, տվյալը մեջբերվում է ըստ *American Accounts Documenting the Destruction of Smyrna by the Kemalist Turkish Forces, September 1922*, ed. Constantine G. Hatzimitriou (New York & Athens: Melissa International Ltd., 2005), 175:

30 Հեռագրում հաղորդվում է մասնավորապես հետևյալը. «Թուրքական գրավումից հետո վեց օրվա ընթացքում հավաքվել և կալանավորվել են հազարավոր հույներ և հայեր: Նախքան հրդեհը տներում սպանվածների թիվը հայտնի չէ: Դրանից բացի՝ հազարավոր մարդկանց թույլ չի տրվել փախչել: Զոհերի ընդհանուր թիվը, ենթադրաբար, 10 հազար է: Հրդեհից հետո մարդկանց մեծ խմբեր քշվել են երկրի խորքեր» [Six days following Turkish occupation thousands of Greek and Armenian were collected and marched under guard and jailed. Unknown number dead in houses before the fire. Thousands additional prevented from escaping. Total loss possibly 10,000. Large groups seen marching towards interior immediately following fire.] (տե՛ս *The New Near East* VII, no.11 (1922): 23):

31 Richard Clogg, *A Short History of Modern Greece* (Cambridge: Cambridge University Press 1979), 118 (Turkish occupation of the city was relatively orderly but on the evening of the 9th outbreaks of killing and looting began. This was followed by a full-scale massacre of the Christian population, in which the Armenians suffered the greatest casualties. Some 30,000 Christians perished, and in the great fire that ensued the Armenian, Greek and Frankish quarters were very largely destroyed): Քլոգի թիվը տե՛ս Nikolaos Hlamides, "The Smyrna Holocaust: The Final Phase of the Greek Genocide" in *The Genocide of the Ottoman Greeks: Studies on the State-Sponsored Campaign of Extermination of the Christians of Asia Minor (1912-1922) and Its Aftermath: History, Law, Memory*, ed. Matthias Bjornlund, Vasileios Meichanetsidis (New York & Athens: published by Aristide D. Caratzas, 2011), 220.

50 000 հույն և հայ զոհերի մասին է հաղորդում հույն ուսումնասիրող Հարի Փսոմիադեսը[32], ինչպես նաև նրան հետևող այլ հեղինակներ[33]: Թեև այդ տվյալի սկզբնաղբյուրը ուսումնասիրողը չի ներկայացնում, սակայն կարելի է ենթադրել, որ այն վերցված է Ազգերի լիգայի փաստաթղթերից, մասնավորապես՝ հունական պատվիրակության ղեկավար Գեորգիոս Սթրեյթի՝ Ազգերի լիգայի քարտուղարին ուղղված 1922 սեպտեմբերի 27-ի նամակից[34] և այլ գրություններից: Ըստ երևույթին, այս թիվն արտացոլում էր աղետի թարմ հետքերով հունական կառավարության կողմից արված հաշվարկը:

Հարցին անդրադարձած հրեա ուսումնասիրողներ Բենի Մորիսը և Դրոր Զեեվին գտնում են, որ 100 հազար զոհի մասին Հորթոնի գրքում բերվող տվյալը չափազանցված է, դրա հետ մեկտեղ, ներկայացնում են դեպքերին ականատես, բրիտանական մարդասիրական կազմակերպություններից մեկի աշխատակից լեյտենանտ Հադքինսոնի տվյալը, որի համաձայն մոտ 25 հազար զոհ է արձանագրվել միայն սեպտեմբերի 13-ի լույս 14-ի գիշերը, երբ, ըստ ականատեսի, թուրք զինվորներն ու տեղացի թուրքերը խոչընդոտում էին հայերին ու հույներին հասնել քարափ[35]:

Վերոնշյալ տվյալները մեզ թույլ են տալիս փաստելու, որ անմիջականորեն Զմյուռնիայի կոտորածին և հրդեհին զոհ գնացածների 100-120 հազար թիվն արտացոլված չէ առավել արժանահավատ սկզբնաղբյուրներում. այն վերցված է ժամանակից մամուլից և հիմնված է քաղաքից մազապուրծ եղած փախստականների չափազանցված պատումների և գնահատականների վրա, և, հետևաբար, այդ տվյալի նկատմամբ պետք է որոշակի զգուշավորություն ցուցաբերել: Մյուս կողմից, նույնքան զգուշավորությամբ պետք է վերաբերվել ծովակալ Բրիսթոլի տվյալին (2 000 զոհ), քանի որ այն հիմնված է զուտ Զմյուռնիայի փողոցներում սփռված զոհերի աճյունների հաշվարկի վրա և դրանում հաշվի չեն առնված կոտորածի ու հրդեհի ժամանակ տների ներսում սպանվածներն ու զոհվածները, ինչպես նաև հրդեհի ժամանակ նավահանգստում հանգրվանածներից զոհերը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ իրականությանն առավել մոտ և իրատեսական կարելի է համարել այն տվյալները, որոնք տեղակայում են անմիջականորեն Զմյուռնիայի հրդեհի, դրան նախորդած և հաջորդած ջարդերի ու զանգվածային սպանությունների

---

32 Harry J. Psomiades, "The American Near East Relief (NER) and the Megali Catastrophe in 1922," *The Journal of Modern Hellenism* 19-20 (2002-3): 137: Տե՛ս նաև Harry J. Psomiades, "The American Near East Relief (NER) and the Megali Catastrophe in 1922," in *The Genocide of the Ottoman Greeks*, 267:

33 Տե՛ս օրինակ Թեոֆանիս Մալկիդիս, *Հույների ցեղասպանությունը: Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս* (Ալեքսանդրուպոլիս, 2014), 76:

34 United Nations Library&Archives Geneva, File R598/11/23798/17095, թերթ 13, առցանց՝ https://archives.ungeneva.org/relate-les-incendies-et-massacres-commis-par-larmee-turque-lors-de-la-reoccupation-des-territoires-danatolie-apres-la-retraite-de-larmee-hellenique-c-685-m-399-1922, դիտվել է՝ 24.06.2022 (The victims of the Smyrna massacre are estimated at over 50,000; hundreds of thousands have left their native land to take refuge in Greece or elsewhere):

35 Morris, Ze'evi, *The Thirty-Year Genocide*, 449. Կարելի է ենթադրել, որ Հադքինսոնի այս տվյալի հիմքը փախստականների հարցումներն են:

հետևանքով Զմյուռնիայում և շրջակայքում զոհվածների ընդհանուր թիվը 10-12 000 սահմաններում[36]:

Գ. Նախքան Զմյուռնիայի աղետը քաղաքում և գավառում հանգրվանած հայերի թիվը

Զմյուռնիայի աղետի հետևանքով այս 10-12 հազար զոհվածների մեջ որքա՞ն հայ կար: Հարցը համապարփակ ուսումնասիրության ենթարկելու համար անհրաժեշտ ենք գտնում նախ ներկայացնել նախքան աղետը Զմյուռնիա քաղաքի և գավառի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներ:

Համաձայն օսմանյան կառավարության տվյալների՝ Այդընի (Իզմիր) նահանգում 1914 թ. բնակվում էր 20 766 հայ (կաթոլիկ և բողոքական հայերը ներառյալ), որից 11 127-ը Զմյուռնիա քաղաքում[37]: Այս տվյալները երկրորդվել են Զմյուռնիայի թեմի եկեղեցական իշխանությունների կողմից: Այսպես, համաձայն Կ.Պոլսի Հայոց պատրի-

---

36 Որոշ ուսումնասիրողներ զոհերի՝ 100 000 թիվը փորձում են հիմնավորել նաև նախքան աղետը Զմյուռնիայում կենտրոնացած 400 հազար տեղացի և փախստական քրիստոնյա ազգաբնակչության և 1922 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Զմյուռնիայից տարհանվածների թվի (219 480) տարբերության հաշվարկով (տե՛ս Housepian Dobkin, *Smyrna 1922*, 201 և 265, Հուսեփյանին հետևելով՝ Biray Kolluoğlu Kirli, "Forgetting the Smyrna Fire," *History Workshop Journal* 60 (2005): 31. Hlamides, "The Smyrna Holocaust," 220): Այս փաստարկը խնդրահարույց է հետևյալ երկու հիմնական նկատառումներից ելնելով. առաջին՝ նախքան աղետը Զմյուռնիայում կենտրոնացած փախստականների թիվը 250-300 000 հաշվելու հիմքը հյուպատոս Ջորջ Հորթոնի՝ ԱՄՆ պետքարտուղարություն հղված հաղորդագրությունն է. այդ թիվը խիստ մոտավոր է և պարզ չէ, թե ինչ տվյալների հիման վրա է հեղինակը հանգել դրան, և երկրորդ՝ Զմյուռնիայից քրիստոնյաների տարհանման ակտիվ գործընթացը շարունակվել է նաև 1922 թ. հոկտեմբերի 1-ից հետո, ինչպես հայտնի է, ընդառաջելով Անտանտի տերությունների խնդրանքին, քեմալական կառավարությունը, ըստ երևույթին, համարելով Զմյուռնիայում և լայն առումով Փոքր Ասիայի արևմտյան հատվածում հույների և հայերի ներկայության հարցը ռազմավարական առումով լուծված, երկարաձգել էր տարհանման ժամկետները սկզբից մինչև հոկտեմբերի 7-ը, այնուհետև ևս մեկ շաբաթով, ինչը թույլ է տվել փրկել ավելի մեծ թվով մարդ: Համաձայն ԱՄՆ ծովային ուժերի ավագ ծառայող պաշտոնյա Հելսի Փովելի (Halsey Powell) ծովակալ Բրիսթոլին ուղղված 1922 թ. հոկտեմբերի 20-ին թվագրվող տեղեկագրի տվյալների՝ Զմյուռնիայից և շրջակայքից տարհանվել էր 262 587 մարդ (տե՛ս U.S. Department of State, *Papers Relating to the Foreign Relations of the United States, 1922*, Volume II (Washington, D.C.: US Government Printing Office, 1938), 446, առցանց՝ https://history.state.gov/historicaldocuments/frus1922v02/d364, դիտվել է՝ 01.07.2022)): Զմյուռնիայից և շրջակա գավառներից հույն և հայ ազգաբնակչության տեղափոխումը դեպի Հունաստան և այլ երկրներ շարունակվել է նաև հետագա տարիներին. այսպես, Թուրքիայից հույն և Հունաստանից թուրք ազգաբնակչությունների փոխանակման ուղղությամբ Լոզանի կոնֆերանսում ձեռք բերված հույն-թուրքական պայմանավորվածությունների (հույն և թուրք ազգաբնակչությունների փոխանակման 1923 թ. հունվարի 30-ի համաձայնագիր) շրջանակներում՝ 1923-24 թթ. Զմյուռնիայից տարհանվել էր 2 500 հույն (տե՛ս Stephen P. Ladas, *The Exchange of Minorities: Bulgaria, Greece and Turkey* (New York: The Macmillan company, 1932), 438): Հույն փախստականների կարգավորման հարցերով Ազգերի լիգայի հանձնաժողովի փոխնախագահ սըր Ջոն Հոուփ Սիմփսոնի տվյալներով՝ ընդհանուր առմամբ 1922 թ. սեպտեմբերին Զմյուռնիայի անկումից հետո մազապուրծ է եղել և ծովով Հունաստանի և հունական կղզիների տարբեր նավահանգիստներ է տեղափոխվել կես միլիոնից ավելի մարդ (տե՛ս John Hope Simpson, "The Work of the Greek Refugee Settlement Commission," *Journal of the Royal Institute of International Affairs* 8, no. 6 (1929): 584):

37 *Tableaux indiquant le nombre des divers éléments de la population dans l'Empire Ottoman au 1er mars 1330 (14 mars 1914)* (Constantinople, 1919), 6; Kemal Karpat, *Ottoman population 1830-1914: Demographic and social characteristics* (Wisconsin: The University of Wisconsin Press, 1985), 174:

արքարանի հրահանգով 1919 թ. իրականացված հայ բնակչության հաշվառման տվյալների («1919 թ. վիճակացոյց»)՝ Իզմիրի թեմում նախքան տեղահանությունը բնակվում էր 19 110 առաքելական հայ, որից 10 205-ը՝ Զմյուռնիա քաղաքում[38]:

Հայկական և արևմտյան աղբյուրները ցեղասպանության նախօրյակին Զմյուռնիայի և նահանգի հայ բնակչության թիվը հաշվում են 25-27 000 սահմաններում: Այսպես, Մաղաքիա Օրմանյանի «Հայոց եկեղեցին» գրքում զետեղված վիճակագրությամբ՝ թեմի տարածքում XX դարի սկզբներին ապրում էր 27 200 հայ (այդ թվում՝ 2 000 կաթոլիկ և 200 բողոքական)[39]: Համաձայն Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության Աշխարհագրական բաժնի՝ 1919 թ. պատրաստած վիճակագրության՝ Զմյուռնիայի նահանգի հայ բնակչության թիվը 27 000 էր, որից Զմյուռնիայում և շրջակայքում՝ 18 000[40]:

Կարևոր ենք համարում նաև Թեոդիկի «Ամէնուն տարեցոյց»ում ներկայացված տվյալը, որի համաձայն Զմյուռնիայի աղետի նախօրյակին Զմյուռնիայի նահանգի բուն հայ բնակչության թիվը 30 հազար էր, որից 15 հազարը՝ Զմյուռնիա քաղաքում[41]:

Հաշվի առնելով օսմանյան վիճակագրական համակարգի կողմից ամբողջ և, հատկապես, հայ բնակչության թերհաշվառման գործոնը, որը փոքրասիական շրջանների պարագայում, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի նահանգների համեմատ, նվազ արտահայտված էր, սակայն այնուամենայնիվ առկա էր, ինչպես նաև Զմյուռնիայում բազմաթիվ չհաշվառված պանդուխտների բնակվելու փաստը, մենք հակված ենք տեղակայել 1915 թ. դրությամբ նահանգի հայ բնակչության թիվը 25-30 հազարի սահմաններում, որից կեսը՝ Զմյուռնիա քաղաքի հայ բնակչությունն էր[42]:

---

38 Ռոբերտ Թաթոյան, «Մեծ եղեռնի ընթացքում արևմտահայության կրած մարդկային և նյութական կորուստները վիճակագրելու Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի փորձերը 1919-1920 թվականներին (ըստ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվի նյութերի) (Մաս 2)», *Էջմիածին* Ե (2019), 60: 1912 թ. Հայոց պատրիարքարանի վիճակագրության համաձայն՝ Այդընի (Իզմիր) նահանգն ուներ 11 000 հայ բնակչություն՝ թիվ, որն ըստ երևույթին արտացոլում է միայն քաղաքի հայ բնակչությունը (տե՛ս «Բաղդատական վիճակագրութիւն հայ բնակչութեան Օսմ. կայսրութեան մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ (Պատրաստուած 1 ապրիլ 1921ին)», Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը, ԺԶ. տարի, 1922* (Կ.Պոլիս, 1921), 262): Ֆրանսահայ ուսումնասիրողներ Ռայմոն Գևորգյանի և Փոլ Փաբուջյանի հաշվարկով՝ Մեծ եղեռնի նախօրյակին Զմյուռնիայի նահանգում կար 21 145 հայ բնակչություն: Այս հաշվարկի համար ուսումնասիրողներն օգտագործել են 1914 թ. օսմանյան վիճակագրությունը՝ լրացված հայկական տարբեր աղբյուրներից քաղված տեղեկություններով (տե՛ս Raymond H. Kevorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman à la veille du Génocide* (Paris: Editions d'Art et d'Histoire ARHIS, 1992), 57, 161):

39 Մաղաքիա արք. Օրմանեան, *Հայոց Եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը* (Կ.Պոլիս, հրատ.՝ Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1911), 260: Ըստ սփյուռքահայ ուսումնասիրող Սարգիս Ծոցիկյանի՝ նախքան Մեծ եղեռնը Զմյուռնիայի նահանգի հայ բնակչության թիվը 25 000 շունչ էր (տե՛ս Սարգիս Ծոցիկեան, *Արեւմտահայ աշխարհ* (New York, տպ. Ա.Յ. Էյլէկեան, 1947), 208):

40 Meir Zamir, "Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919," *Middle Eastern studies* 17, no. 1 (1981): 103.

41 Թէոդիկ, *Ամէնուն տարեցոյցը, ԺԸ. տարի, 1924* (Փարիզ, տպագրութիւն Յ.Բ. Թիւրապեան, 1923), 148-149: Այս տվյալը երկրորդվում է զմյուռնիացի հայ այլ ականատես-հեղինակների կողմից (տե՛ս օրինակ՝ Գուժկան, «Իզմիրի ջարդը և հրդեհը», *Հայաստանի կոչնակ* (Նիւ Եորք), ԻԲ. տարի, թիւ 47, 25 նոյեմբեր 1922, 1524):

42 Հիմք ընդունելով թերհաշվառման գործոնը՝ Այդընի (Զմյուռնիա) նահանգում՝ 25 231 հայ, այսինքն՝

Համաձայն աղբյուրների վկայությունների՝ անմիջապես Զմյուռնիայի աղետի նախօրյակին, բացի Զմյուռնիա քաղաքի բուն հայ բնակչությունից (12-15 000), այնտեղ էր կենտրոնացել մոտ 20-25 հազար հայ փախստական՝ նահանջող հույն բանակին հետևած Զմյուռնիայի նահանգի հայաբնակ այլ վայրերի և Փոքր Ասիայի արևմտյան շրջանների հայ բնակչության խլյակները, ինչպես նաև ֆրանսիական զորքերի նահանջից հետո Կիլիկիայից տեղափոխված հայեր, այսինքն, տարբեր հաշվարկներով, 1922 թ. սեպտեմբերին քաղաքում և շրջակայքում կենտրոնացած հայերի ընդհանուր թիվը 30-40 000 էր[43]:

Դ. Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թիվը

Զմյուռնիայի աղետից անմիջապես հետո հայկական մամուլը ողողվեց դեպքերի նկարագրություններով, որոնք անդրադարձ են պարունակում նաև հայ զոհերի և տուժածների թվաքանակի հարցին: Դրանք առավելապես եվրոպական և ամերիկյան թերթերից վերատպումներ էին, սակայն առկա է նաև հայկական աղբյուրներից սերվող լրատվություն՝ Զմյուռնիայի աղետի հայ ականատես վերապրածների վկայություններ և եկեղեցական կառույցների տրամադրած տեղեկություններ: Նման վկայությունները շատ չեն[44] (Արևելյան հարցի շուրջ արագ ծավալվող իրադարձությունները՝ չեզոք գոտու վրա քեմալականների գրոհները և, դրա հետ կապված, Կոստանդնուպոլսի ճակատագրի վերաբերյալ մտահոգությունները, Մուդանիայի զինադադարը, Լոզանի խաղաղության վեհաժողովի նախապատրաստական աշխատանքները և այլն, համեմատաբար արագ դուրս մղեցին Զմյուռնիայի աղետի մասին լուրերն

օսմանյան վիճակագրության համեմատ մոտ 20% բարձր հայ բնակչություն է հաշվում նաև Հայոց ցեղասպանության վերաբերյալ իր ժխտողական հայացքներով հայտնի ամերիկացի ուսումնասիրող Ջասթին Մըք-Քարթին (տե՛ս Justin McCarthy, *Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia at the End of the Empire* (New York and London: New York University Press, 1983), 80): Հայ ուսումնասիրող Սարգիս Կարայանի հաշվարկով՝ 1914 թ. Զմյուռնիայի նահանգում կար 46 905 հայ, ինչն ակնհայտ ուռճացված թիվ է, որի հիմքում ընկած են աղբյուրների թյուրըմբռնված տվյալներ (տե՛ս Karayan, *Armenians in Ottoman Turkey, 1914*, 475-484):

43 Գրիգոր Գալուստյան՝ 30 000 ավելի՝ «նկատի առնելով 1921ին Հելլեն կառավարութեան Կիլիկիայէն Իզմիր եւ շրջակաները փոխադրած հայ գաղթականներուն թիւը» (տե՛ս Տօքթ. Գրիգոր Գալուստեան, «Զմիւռնիա եւ Զմիւռնիոյ հայ գաղութը», *Յունահայ տարեգիրք: Բ. տարի*, (Աթէնք, հրատարակութիւն «Նոր օր»ի, 1928), 299) Պետրոս Սիմոնյան (հղելով Գ. Օ. Գալուստյանին)՝ ավելի քան 30 000 (Պետրոս Սիմոնեան, *Յուշամատեան: Հայկական Զմիւռնիան* (Փարիզ, տպարան «Արաքս», 1936), 12-13), Թեոդիկ (Թեոդորոս Լափչինճյան)՝ 35 000 հայ, որից 20 000՝ փախստականներ (տե՛ս Թէոդիկ, *Ամէնուն տարեցոյցը, 1924*, 148-149), տե՛ս նաև Գուժկան, «Իզմիրի ջարդը և հրդեհը», 1525, տե՛ս նաև «Իզմիրի ողբերգութիւնը II», *Հայրենիք, օրաթերթ ազգային, գրական, քաղաքական, հասարակագիտական* (Պոսթըն), 16 դեկտեմբեր 1922, թիւ 3232, 1: Որոշ հեղինակներ Զմյուռնիայի աղետի նախօրյակին քաղաքում կենտրոնացած հայերի թիվը հասցնում են մինչև 50 000 (տե՛ս «Իզմիրի աղէտը», *Հայաստանի կոչնակ* (Նիւ Եորք), 23 սեպտեմբեր 1922, թիւ 38, 1228): Վերջին թիվը, մեր կարծիքով, ներառում է նաև ամբողջ գավառի հայ ազգաբնակչությունը:

44 Դեռևս 1922 թ. դեկտեմբերի 15-ին Բոստոնում հրատարակվող «Հայրենիք» թերթում արձանագրվում էր, որ «Իզմիրի աղէտի մասին համեմատաբար շատ քիչ նկարագրութիւններ եղան մեր մամուլի մէջ» (տե՛ս «Իզմիրի ողբերգութիւնը I», *Հայրենիք, օրաթերթ ազգային, գրական, քաղաքական, հասարակագիտական* (Պոսթըն), 15 դեկտեմբեր 1922, թիւ 3231, 1):

ու արձագանքները լրահոսից), սակայն օժտված են կարևոր աղբյուրագիտական նշանակությամբ: Հայ զոհերի թվաքանակի հարցի ուսումնասիրության համար հատկապես արժեքավոր տեղեկություններ են պարունակում Զմյուռնիայում հրատարակվող «Արևելյան մամուլ» թերթի տնօրեն-խմբագրապետ Հրանտ Մամուրյանի և զմյուռնաբնակ ականատես-վերապրող, բժիշկ և մտավորական Գարեգին Ամատյանի վկայությունները:

Այսպես, Հրանտ Մամուրյանը, որը աղետից հետո հանգրվանել էր Աթենքում, իր 1922 թ. սեպտեմբերի 21-ով թվագրվող Զմյուռնիայի աղետի մասին համառոտ տեղեկագրում հաղորդում էր հետևյալը. «Սպաննուածներու և կորսուածներու ճշգրիտ թիւը ըսել առայժմ կարելի չէ, եթէ ընդունինք թէ Իզմիրի մէջ հաւաքուած բոլոր հայութիւնը 35-40 հազար էր, անոնցմէ հազիւ հազ 10 հազար մը կրցած է փրկուիլ...: Մեռելներու թիւը 5-6 հազար կ'ենթադրուի, իսկ տուներու մէջ ածխացածներուն թիւը որոշ չէ: Երեկ լուր եկաւ Իզմիրէն թէ 5000 ածխացած դիակ գտնուած է»[45]:

1922 թ. սեպտեմբերի 29-ով թվագրված Հ. Մամուրյանի մեկ այլ թղթակցությունում զոհերի թվաքանակի վերաբերյալ հաղորդվում էր հետևյալը. «Հայոց կողմէ անհամար է մեռեալներու թիւը: Առ այժմ կարելիութիւն չկայ որոշապէս ճշդելու մեռեալներու թիւը, սակայն 8000է աւելի է»[46]:

Զմյուռնիայի աղետի զոհերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ է պարունակում Ալեքսանդրիա քաղաքում տպագրվող «Արև» օրաթերթի հոկտեմբերի 13-ի համարում զետեղված Գարեգին Ամատյանի տեղեկագիրը. «Իզմիր, գաւառներէն եկող Հայերով միասին դէպքերու միջոցին 30էն 35 հազար հայութիւն մը կը պարունակեր: Այս թիւէն հազիւ 10 հազարը կրցաւ փախչիլ ու ազատիլ: Ջարդուածներու, այրուածներու, կորսուածներու ևն թիւը, մեր կարծիքով հինգ հազարէն տասը հազարի կը հասնի»[47]:

Հայաստանի ազգային արխիվի «Հայ ազգային պատվիրակության» ֆոնդում է պահվում աղետի հետևանքով Զմյուռնիայի հայ գաղութի կրած մարդկային և նյութական կորուստների՝ Հրանտ Մամուրյանի կազմած ցուցակը, որը թվագրվում է 1922 թ. նոյեմբերի 5-ով: Համաձայն ցուցակի՝ ընդամենը հայ բնակչության «ֆիզիքական և բարոյական» կորուստը կազմել է 13 500 մարդ, որից սպանված հայեր՝ 4 000, առևանգված կիներ՝ 1 500 և անհետացածներ և կորսվածներ՝ 8 000[48]: Հեղինակը չի մանրամասնում, թե կոնկրետ ում է հաշվում անհետացածների և կորսվածների մեջ, սակայն կարելի է ենթադրել, այդ թվից նշանակալի մասը կազմում էին Էգեյան ծովի կղզիներ, Պոլիս և Բուլղարիա տարհանվածները, որոնց վերաբերյալ Մամուրյանն ու Աթենքի հայկական եկեղեցական-թեմական իշխանությունները փաս-

---

45 Հ. Մամուրեան, «Իզմիրի աղէտը», *Արեւ* (Աղեքսանդրիա), 27 սեպտեմբեր 1922, թիւ 65 (1128), 1:

46 Հ. Մամուրեան, «Իզմիրի եղեռնը եւ Աթէնքի դէպքերը», *Ապագայ, քաղաքական եւ հասարակական շաբաթաթերթ* (Բարիզ), 21 հոկտեմբեր 1922, 3:

47 Գ. Ամատեան, «Իզմիրի աղէտը: Ի՞նչպէս կործանեցաւ Իզմիրը», *Արեւ* (Աղեքսանդրիա), 13 հոկտեմբեր 1922, թիւ 72 (1135), 2:

48 Հայաստանի ազգային արխիվ, ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 745, թերթ 33: Տե՛ս նաև Մարո Ավետիսյան, «Երկու փաստաթուղթ Իզմիրի աղետի և հայ բնակչության կորուստների մասին», *Բանբեր Հայաստանի արխիվների* 116, no. 2 (2010), 105-112:

տաթղթի կազմման պահին տվյալներ չունեին, ինչպես նաև զինվորական տարիքի կալանավորված հայ տղամարդիկ:

Այսպիսով, համաձայն զմյուռնիաբնակ ականատես-վերապրածներ Հրանտ Մամուրյանի և Գարեգին Ամատեանի տվյալների՝ զոհերի թիվը տատանվել է 4-ից 10 հազարի միջակայքում: Ցավոք, մեզ հասու չեն Զմյուռնիայի աղետի հետևանքով հայ զոհերի՝ հայկական եկեղեցական-թեմական իշխանությունների հաշվարկները: Պարզ չէ, թե արդյո՞ք նման հաշվարկներ կատարվել են, թեև չի կարելի բացառել, որ Հ. Մամուրյանն ու Գ. Ամատյանը իրենց հաշվարկներում և գնահատականներում դրանց վրա են հենվել. 1922 թ. սեպտեմբերի դրությամբ Զմյուռնիայի թեմի առաջնորդ, Զմյուռնիայից մազապուրծ եղած և Աթենքում հանգրվանած Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանի՝ աղետին անդրադարձները, որոնք ներկայացված են ժամանակի մամուլում, զոհերի թվաքանակի վերաբերյալ որևէ տվյալ չեն պարունակում[49]:

Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի հարցի վրա հնարավոր է լույս սփռել աղետի հետևանքով Զմյուռնիայից և շրջակայքից, հետագայում նաև Փոքր Ասիայի արևմտյան այլ շրջաններից, ինչպես նաև Եվրոպական Թուրքիայի տարածքից տարհանված և Հունաստանում, Բուլղարիայում և այլ երկրներում ապաստանած հայերի թվաքանակի վերաբերյալ տվյալների միջոցով: Փախստական հայերի հաշվառմամբ կազմված վիճակագրությունները, ի տարբերություն զոհերի թվաքանակի հաշվարկների, բավականին մանրամասն, ստույգ և հավաստի են, ինչը պայմանավորված էր հիմնականում այն հանգամանքով, որ հայ փախստականներին ընդունած Հունաստանի և այլ երկրների իշխանությունները, հայկական եկեղեցական կառույցները, միջազգային մարդասիրական կազմակերպությունները կարիք ունեին հնարավորինս ճշգրիտ տվյալների՝ օգնության գործը կազմակերպելու համար:

Այսպես, համաձայն 1922 թ. դեկտեմբերի սկզբներին Աթենքի հայկական թեմական իշխանությունների պատրաստած վիճակագրության՝ Հունաստանի տարածքում (ներառյալ Էգեյան ծովի կղզիներ) ապաստան էին ստացել Իզմիրից տարհանված մոտ 40 հազար իզմիրցի և «անատոլուցի» (այսինքն՝ Փոքր Ասիայի այլ շրջաններից) գաղթականներ: Վիճակագրության մեջ հատուկ շեշտվում է, որ այդ թվի մեջ ներառված չեն Նիկոմիդիայից և Կիլիկիայից հայ գաղթականները[50]: Ինչպես հայտնի

---

49 Ղեւոնդ եպս. Դուրեան, «Զմյուռնիոյ աղէտին շուրջ համառօտ տեղեկագիր», *Սիոն, պաշտօնաթերթ պատրիարքութեան Հայոց Երուսաղէմի* 3-4-5 (1982), 92-96: Սիոն, 6-7-8 (1982), 136-139): Ամենայն հավանականությամբ Ղևոնդ եպիսկոպոսի գրչին է պատկանում «Հայրենիք» օրաթերթի դեկտեմբերի 15-ի և 16-ի համարներում «Իզմիրի ողբերգությունը» վերտառությամբ տեղեկագիրը (տե՛ս «Իզմիրի ողբերգութիւնը I», *Հայրենիք*, 15 դեկտեմբեր 1922, թիւ 3231, 1-2: «Իզմիրի ողբերգութիւնը II», *Հայրենիք*, 16 դեկտեմբեր 1922, թիւ 3232, 1-2), որտեղ նույնպես հայ զոհերի թվաքանակի հարցին որևէ անդրադարձ չկա:

50 «Գաղթականները Յունաստանի մէջ», *Ապագայ, քաղաքական եւ հասարակական շաբաթաթերթ* (Բարիզ), 23 դեկտեմբեր, 1922, 3 (տրված է նաև հայ գաղթականների բաշխումն ըստ Հունաստանի շրջանների): Նույն՝ 40 հազար թիվն առկա է նաև Հայոց ազգային պատվիրակության փաստաթղթերում (տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Մեծ եղեռնի որբերի թվաքանակի վերաբերյալ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1919-1922 թվականներին կազմած վիճակագրությունները», *Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.*, միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, խմբ.՝ Հարություն Մարության, Նարինե Մարգարյան (Երևան, «Հայոց ցեղասպանության թանգարան-

է, Զմյուռնիայից քրիստոնյա ազգաբնակչության տարհանման գործողությունների տևողությունը (մոտ 20-25 օր) թույլ է տվել տարհանել նաև այն հայերին, որոնք աղետի օրերին ֆիզիկապես չեն գտնվել Զմյուռնիայում և շրջակայքում, սակայն անգամ հաշվի առնելով այդ հանգամանքը, միևնույնն է, Հունաստանում հաշվառված հայ փախստականների վերոնշյալ տվյալը գալիս է վկայելու, որ Հրանտ Մամուրյանի և Գարեգին Ամատյանի տեղեկություններն առ այն, որ աղետից հաջողվել է փրկվել միայն մոտ 10 հազար զմյուռնահայի, հիմնված էին խիստ նախնական հաշվարկների և գնահատականների վրա[51]:

Զմյուռնիայի աղետի և դրան հաջորդած իրադարձությունների հետևանքով Զմյուռնիայից, Փոքր Ասիայի արևմտյան շրջաններից և Արևելյան Թրակիայից գաղթած հայերի թվաքանակի և գաղթական հայերի՝ երկրների բաշխման վերաբերյալ առավել ամբողջական տեղեկություններ է պարունակում Լոզանի կոնֆերանսի համար Հայ ազգային պատվիրակության՝ 1922 թ. դեկտեմբերի վերջերին պատրաստած «Հայաստանը և Հայկական հարցը պատերազմից առաջ, պատերազմի ընթացքին և պատերազմից հետո» վերտառությամբ տեղեկագիրը: Համաձայն տեղեկագրի տվյալների՝ գաղթական հայերի թիվը՝ 73 700 էր, որից Հունաստանում՝ 60 000 (Արևմտյան Թրակիա և Մակեդոնիա՝ 30 000, Սալոնիկ՝ 5000, Քիոս և Միտիլինի կղզիներ՝ 7 000, Կրետե՝ 2 000, Սամոս՝ 1 000, Աթենք և Պիրեա՝ 15 000), Բուլղարիայում՝ 10 000 (այս երկրում էին ապաստանել նաև 25 000 հայ Արևելյան Թրակիայից[52]), Ալժիրում, Թունիսում և Եգիպտոսում՝ 1 500, Ֆրանսիայում՝ 1 350, Իտալիայում՝ 850[53]:

Հայ ազգային պատվիրակության այս տվյալը համահունչ է հունական կառավարության՝ 1924 թ. հունիսի 12-ին Ազգերի լիգա ներկայացված տեղեկագրի տվյալներին, որոնց համաձայն Զմյուռնիայի աղետից անմիջապես հետո և աղետի հետևանքով Հունաստանում էր ապաստանել մոտ 65 000 հայ փախստական, որոնք եկել էին. ա) Փոքր Ասիայի այն մասից, որը ժամանակավորապես գրավել էր հունական բանակը 1919-1922 թթ. թուրք-հունական պատերազմի ընթացքում, բ) Սևծովյան առափնյա շրջաններից, գ) Կիլիկիայից (արդեն նշել էինք, որ մեծ թվով կիլիկիահայեր 1921 թ. վերջերին Կիլիկիայից ֆրանսիական զորքերի դուրսբերումից հետո տեղա-

---

ինստիտուտ» հիմնադրամ, 2020), 331-332):

51 Կարելի է ենթադրել, որ 10 000 թիվն արտացոլում էր սկզբնական շրջանում զուտ Աթենքում և Պիրեայում ապաստանած հայ փախստականներին:

52 James L. Barton, *Story of Near East relief (1915-1930)* (New York: Macmillan, 1930), 157.

53 Délégation de la République Arménienne, *L'Arménie et la question arménienne, avant, pendant et depuis la guerre* (Paris: H. Turabian, editeur, 1922), 70-71: Տեղեկագրից քաղված վիճակագրությունը տե՛ս «Հայութեան թիւը», Հայաստանի կոչնակ (Նիւ Եորք), 20 յունուար 1923, XXIII, № 3, 85-86: Տեղեկագրում նաև նշվում էր, որ նախքան աղետը հունական բանակի գրաված թուրքական վիլայեթների տարածքում հայ բնակչության թիվը հասնում էր 100 000-ի, սակայն նրանցից շատերը զոհվել են Զմյուռնիայում, ուրիշները կոտորվել Բալըքեսիրի (Բուրսա) և Բիղայի (Դարդանել) մեջ՝ քեմալական բանակի մուտքից հետո (Délégation de la République Arménienne, *L'Arménie et la question arménienne*, 70): Այսինքն, Հայ ազգային պատվիրակության հաշվարկով, 1922-ի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին քեմալական բանակի բոլոր գործողությունների հետևանքով հայերի կորուստները կազմել են մոտ 26 000 մարդ:

փոխվել էին Զմյուռնիա՝ 1922 թ. սեպտեմբերին դառնալով աղետի ականատես և տարհանվելով Հունաստան)[54]:

Այսպիսով, վերոնշյալ տվյալները վկայում են, որ Զմյուռնիայի աղետից հետո առ

54 United Nations Library&Archives Geneva, File R1756/48/36414/23548, թերթեր 119-120, առցանց՝ https://archives.ungeneva.org/situation-des-refugies-du-proche-orient-secretariat-soumet-au-conseil-le-rapport-du-dr-fridtjof-nansen-a-ce-sujet, դիտվել է 24.06.2022: Այստեղ անհրաժեշտ է արձանագրել, որ Թուրքիայից դեպի Հունաստան հայերի և հույների գաղթը շարունակվել է և 1923-24 թթ. ընթացքում, և Հունաստանում հայերի թիվը հասել է ընդհուպ մինչև 100-120 հազարի: Այսպես, ըստ 1923-ի հոկտեմբերին Ազգերի լիգայի համար պատրաստված «Հունաստանում փախստականների վիճակը» վերտառությամբ տեղեկագրի տվյալների՝ Հունաստանում ապաստան ստացած հայազգի փախստականների թիվը 100 հազար էր: Նույն փաստաթղթում հաղորդվում էր, որ 1923 թ. մայիսի 26-ի դրությամբ Թուրքիայի նավահանգիստներից (Կ.Պոլիս, սևծովյան նավահանգիստներ, Մերսին, Սիրիա) դեպի Հունաստան տարհանման էր սպասում մոտ 64 000 փախստական: Նշվում էր նաև, որ Փոքր Ասիայի ներքին շրջաններում դեռևս մնում է մոտ 150 000 հույն և հայ, որոնք պատրաստ են թողնել երկիրը (տե՛ս United Nations Library & Archives Geneva, File R1757/48/40543/23735, թերթ 7, առցանց՝ https://archives.ungeneva.org/asia-minor-refugees-collaboration-of-the-european-student-relief-worlds-student-christian-federation-geneva, դիտվել է՝ 24.06.2022): 1923-24 թթ. Հունաստանում հայ գաղթականների՝ 100 000 թիվը նշող այլ աղբյուրներից տե՛ս Կոկինոս, *Հունահայ գաղութի պատմությունից*, 26-27: Ազգերի լիգայի արխիվում պահվող Ֆրիտյոֆ Նանսենի տեղեկագրի տվյալների համաձայն Հունաստանում ապաստանած արևմտահայ փախստականների թիվը 1924 թ. սկզբների դրությամբ մոտ 120 000 էր (տե՛ս United Nations Library&Archives Geneva, File R1756/48/36414/23548, թերթեր 116, 122): Որոշ աղբյուրներում հաղորդվում է 1920-ական թթ. առաջին կեսերին Հունաստանի տարածքում ապաստանած 150, անգամ՝ 200 հազար հայ փախստականների մասին, ինչը չափազանցություն է (տե՛ս Աշոտ Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, հատոր Բ (Երևան, Հայաստան, 1967), 105): Հունաստանում հայ փախստականների թվի այս տատանումները չպետք է զարմանալի թվան: Ինչպես պատկերավոր նկարագրում է ուսումնասիրող Հովիկ Մելիքսեթյանը՝ 1920-ական թթ. սկզբներին Հունաստանում հայերի թիվը խիստ հարափոփոխ ու անկայուն էր. «օրվա հացի կարոտ, ցնցոտիների մեջ ծայր թշվառության մատնված, տեղի ունեցած սարսափների արհավիրքները վերապրող ու վաղվա անստույգ վիճակի մղձավանջից տանջվող անտուն պանդուխտները խիստ անկայուն վիճակի մեջ էին Հունաստանում, ուստի այնտեղ երկար չէին մնում: Մինչ մի կողմից գաղթականների նորանոր խմբեր էին ապաստանում Հունաստան, նույն ժամանակ նախկիններից հազարավորները այնտեղից մեկնում էին Ամերիկա, Ֆրանսիա և այլ երկրներ՝ հուսալով գտնել ավելի բարվոք պայմաններ» (տե՛ս Հովիկ Մելիքսեթյան, *Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980)* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1985), 52): Հունական կառավարությունը, ի վիճակի չլինելով հոգալ հույն և հայ գաղթականների հոծ զանգվածների օթևանի և սննդի կարիքները, փորձում էր լուծում գտնել՝ ամեն կերպ խրախուսելով հայ գաղթականների Հունաստանից տեղափոխումը այլ երկրներ: Մասնավորապես, ծրագրեր էին մշակվում Հունաստանում ապաստանած հայ փախստականնե-րի ՝ Ազգերի լիգայի համապատասխան կառույցների օժանդակությամբ Խորհրդային Հայաստան հայրենադարձելու ուղղությամբ (այդ հարցով Ազգերի լիգայի փախստականների կոմիտեի համապատասխան նամակագրությունը տե՛ս United Nations Library&Archives Geneva, File C1124/20/N1 - Nansen Office for Refugees - Outgoing Correspondence, առցանց՝ https://archives.ungeneva.org/nansen-office-for-refugees-outgoing-correspondence): Վերոնշյալ գործընթացների հետևանքով արդեն 1924 թ. դեկտեմբերին Հունաստանի տարածքում մնացել էր մոտ 50 000 հայ փախստական (տե՛ս Հայ փախստականների օգնության՝ Լոնդոնի լորդ քաղաքագլխի հիմնադրամի քարտուղար Հարոլդ Բաքսթոնի՝ 1924 թ. դեկտեմբերի 15-ով թվագրվող նամակը՝ United Nations Library & Archives Geneva, File C1124/20/N1, թերթ 24, առցանց՝ https://archives.ungeneva.org/nansen-office-for-refugees-outgoing-correspondence): Փախստականների արտահոսքը Հունաստանից շարունակվել է և հետագա տարիներին. համաձայն 1928 թ. Հունաստանում անցկացված մարդահամարի տվյալների՝ հայերի թիվը երկրում արդեն 35 հազար էր (տե՛ս A. A. Pallis, “The Greek Census of 1928,” *The Geographical Journal* 73, No. 6 (Jun., 1929), 546, տե՛ս նաև Stephen P. Ladas, *The Exchange of Minorities: Bulgaria, Greece and Turkey* (New York: The Macmillan company, 1932), 702):

1922 թ. ավարտ Զմյուռնիայից, Փոքր Ասիայի արևմտյան շրջաններից, ինչպես նաև Եվրոպական Թուրքիայի տարածքից տարհանվել էր մոտ 100 000 հայ, որից մոտ 62 հազարը ապաստանել էր Հունաստանում, 35 հազարը՝ Բուլղարիայում և 3 000-3 500-ը՝ այլ երկրներում: Համաձայն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի վիճակագրության՝ 1921 թ. ապրիլի դրությամբ վերոնշյալ տարածքի (Զմյուռնիա, Փոքր Ասիայի այլ արևմտյան շրջաններ, ինչպես նաև Եվրոպական Թուրքիա (բացառությամբ Կ.Պոլիսը)) բուն հայ բնակչությունը կազմում էր 92 700 շունչ[55]: Անգամ եթե հաշվի առնենք 1921 թ. վիճակագրությունում առկա թերհաշվառման գործոնը, նախքան Զմյուռնիայի աղետը վերոնշյալ շրջանների հայ բնակչության և Զմյուռնիայի աղետից հետո հայ փախստականների թվաքանակի վերաբերյալ տվյալների համեմատությունը ցույց չի տալիս էական տարբերություններ, որոնք, անշուշտ առկա կլինեին Զմյուռնիայի աղետին զոհ գնացած 20-30 հազար հայերի պարագայում:

Վերոնշյալը մեզ հիմք է տալիս Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի մեր հաշվարկում որպես առավել արժանահավատ և իրականությանը մոտ ընդունել Հրանտ Մամուրյանի՝ 1922 թ. նոյեմբերի 5-ի տեղեկագրում նշված թիվը՝ 4 000: Նշված եզրահանգմանը եկել ենք՝ ելնելով նաև այն նկատառումներից, որ Մամուրյանի հաշվարկը կատարվել է դեպքերից մոտ 50 օր և Զմյուռնիայում կենտրոնացած հույների և հայերի տարհանման գործողության ամբողջական ավարտից մոտ 20 օր անց, այսինքն՝ առկա էր որոշակի ժամանակամիջոց վերապրած-փախստականներին հարցաքննելու և հաշվառելու, և այդ տվյալների հիման վրա կորուստների առավել ճշգրիտ ու հիմնավոր հաշվարկ կատարելու համար: Արժանահիշատակ է, որ զոհվածների մեջ նշանակալի մաս են կազմել Զմյուռնիայում ապաստանած կիլիկիահայ փախստականները, որոնք հատկապես թիրախավորվել են հրդեհին նախորդած ջարդի ժամանակ: Ըստ որոշ վկայությունների՝ զոհված կիլիկիահայերի թիվը կարող էր հասնել 2 000-ի[56]:

Ե. Զմյուռնիայից և շրջակայքից կալանավորված և աքսորված հայ տղամարդկանց կորուստը. հաշվարկի ամփոփում

Զմյուռնայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի հաշվարկի համատեքստում անհրաժեշտ ենք համարում առանձին անդրադառնալ Զմյուռնիայից և շրջակայքից

---

55 Այդ թվում՝ Ադրիանապոլսի (Էդիրնե) վիլայեթ՝ 6 000, Նիկոմիդիայի անկախ սանջակ՝ 20 000, Հուդավենդիգյարի վիլայեթի Բրուսայի սանջակ՝ 11 000 և Բիլեջիկի սանջակ՝ 4 500, Կալե Սուլթանիե անկախ սանջակ (Գալիպոլի)՝ 900, Կարասիի անկախ սանջակ (Բանդըրմա և Բալըքեսիր)՝ 5 800, Աֆիոն Գարահիսար և Քյոթահիա՝ 7 000, Այդընի (Իզմիրի) վիլայեթ՝ 10 000, Կասթեմունիի վիլայեթ և Բոլուլի անկախ սանջակ՝ 8000, Անգորայի գավառ (Էնկյուրի)՝ 5 500, Կեսարիայի գավառ՝ 4 000, Կոնիայի վիլայեթ՝ 10 000 (տե՛ս «Թուրքիոյ Հայոց վիճակացոյցը. պատրաստուած 1921 թ. սկիզբը», *Ազգ, պաշտօնաթերթ Ազգային Ռամկավարական կուսակցութեան* (Պոսթոն), 7 ապրիլ 1921, 1: Նույն վիճակագրությունը որոշ ոչ մեծ տարբերություններով տե՛ս «Բաղդատական վիճակագրութիւն հայ բնակչութեան Օսմ. կայսրութեան մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ (Պատրաստուած 1 ապրիլ 1921ին)», Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը, ԺԶ. տարի, 1922* (Կ.Պոլիս, 1921), 261-265):

56 “Les réfugiés de Smyrne à Marseille. Émouvants récits de l’incendie,” *Le Petit Parisien*, 21 septembre 1922, 3 (զմյուռնահայ ականատես-վերապրած Օնիկ Զաքյանի տվյալը):

կալանավորված և Թուրքիայի ներքին շրջաններ աքսորված զինվորական տարիքի հայ տղամարդկանց շրջանում կորուստների թվի հարցին: Մեր ունեցած աղբյուրները, այդ թվում՝ հայկական, հաղորդում են միայն ընդհանուր՝ առանց ազգային պատկանելության առանձնացման տվյալներ կալանավորված տղամարդկանց թվաքանակի վերաբերյալ: Հայ ազգային պատվիրակության՝ արդեն հիշատակված 1922 թ. դեկտեմբերի տեղեկագրում նշվում էր, որ քեմալական բանակի թիկունքի սպասարկության, աշխատանքային գումարտակներում և կենտրոնացման ճամբարներում գտնվող 18-ից մինչև 45 տարեկան հայ տղամարդկանց թիվը ստուգել անկարելի է[57]:

Բրիտանացի պատմաբան Քարլայլ Մըքարթնին հաղորդում է, որ կալանավորված և Թուրքիայի ներքին շրջաններ՝ «աշխատանքային գումարտակներում» ընդգրկվելու համար տեղափոխված զինվորական տարիքի տղամարդկանց ընդհանուր թիվը մոտ 25 հազար էր, որից մեկ տարի անց ողջ էր մնացել 15 հազարը[58]: Ուսումնասիրողն իր այս տվյալի համար որպես աղբյուր է օգտագործել Ազգերի լիգայի Հունաստանի փախստականների կարգավորման հարցերով հանձնաժողովի նախագահ, ամերիկացի Չարլզ Փրենիտիս Հոլանդի 1926 թ. գրված «Հունաստանը և նրա փախստականները» հոդվածը[59], ինչը այդ տվյալի արժանահավատության մասին վկայող լրացուցիչ փաստարկ է:

Ըստ հայ ականատես-վերապրածներից մեկի վկայության՝ Զմյուռնիայի աղետի օրերին միայն Զմյուռնիա քաղաքից ձերբակալվել էր զինվորական տարիքի 30 000-ի չափ հույն և հայ, որոնց քշել են քաղաքից մոտ երեք ժամ հեռավորության վրա գտնվող Փունար Բաշի բնակավայր: Հետագայում բաց են թողնվել 50 տարեկանից բարձր մոտ 5 000 մարդ, մնացած 25 հազարը քշվել են ներքին գավառներ որպես ռազմագերի[60]:

Հույն և հայ ռազմագերիների նույն՝ 25 000 թիվը առկա է նաև Թեոդիկի 1924 թ. «Ամենուն տարեցույցի» ՝ Զմյուռնիայի աղետի նկարագրությանը նվիրված ակնարկում[61]:

Վերապրածների վկայություններում և պատմագիտական գրականության մեջ հնչեցվել են ձերբակալված և Փոքր Ասիայի խորքեր աքսորված հույն և հայ տղամարդկանց թվաքանակի վերաբերյալ նաև այլ՝ ավելի բարձր տվյալներ: Այսպես, Զմյուռնիայի աղետի օրերին թեմի առաջնորդ, դեպքերի ականատես-վերապրող Ղևոնդ եպիսկոպոս Դուրյանը 1922 թ. հոկտեմբերի 13-ով թվագրված իր տեղեկագրում հաշվում էր սկզբնապես գերված հույն և հայ տղամարդկանց թիվը՝ 70-80 հազար,

57 Délégation de la République arménienne, *L'Arménie et la question arménienne*, 69.

58 Macartney, *Refugees*, 78-79.

59 Charles P. Howland, "Greece and Her Refugees," Foreign Affairs (1926): 615: Նույն տվյալը տե՛ս նաև Eliot G. Mears, *Greece Today: The Aftermath of the Refugee Impact* (Stanford: Stanford University Press, 1929), 50, առցանց՝ https://www.foreignaffairs.com/articles/greece/1926-07-01/greece-and-her-refugees, դիտվել է՝ 12.07.2022):

60 Գուժկան, «Իզմիրի ջարդը և հրդեհը», *Հայաստանի կոչնակ* (Նիւ Եորք), 2 դեկտեմբեր 1922, թիւ 48, 1552:

61 Թեոդիկ, *Ամէնուն տարեցոյցը, ԺԸ. տարի, 1924* (Փարիզ, տպագրութիւն Յ.Բ. Թիւրապեան, 1923), 154-155:

որից՝ 8-10 հազար հայ[62]: Ըստ հունական կառավարության ներկայացուցիչ Ա. Վուրոսի՝ ԱՄՆ պետքարտուղարություն ներկայացված 1922 թ. հոկտեմբերի 10-ով թվագրվող գրության՝ Փոքր Ասիայի ներքին շրջաններ էր արտաքսվել ավելի քան 100 հազար տղամարդ[63] (ըստ երևույթին, նշված թիվը, եթե այն համապատասխանում է իրականությանը, արտացոլում է ոչ միայն Զմյուռնիայից, այլ նաև Փոքր Ասիայի այլ շրջաններից հավաքված տղամարդկանց և հույն բանակի ռազմագերիների ընդհանուր թիվը[64]):

Վերոնշյալից, մեր կարծիքով, առավել արժանահավատ են Ազգերի լիգայի Հունաստանի փախստականների կարգավորման հարցերով հանձնաժողովի նախագահ Չարլզ Փրենիտիս Հոլանդի և նրան հետևող ուսումնասիրողների տվյալները, որոնց համաձայն՝ Զմյուռնիայի աղետի օրերին անմիջականորեն Զմյուռնիայից և շրջակայքից կալանավորվել և Փոքր Ասիայի խորքեր է ուղարկվել մոտ 25 հազար հույն և հայ տղամարդ, որից զոհվել է մոտ 10 հազարը: Աղբյուրների վկայությամբ՝ աղետի նախօրյակին Զմյուռնիայում կենտրոնացած հայ և հույն ազգաբնակչության մոտավոր հարաբերակցությունը մեկը յոթիմեկը ութի սահմաններում էր, և կարելի է ենթադրել, որ նույն հարաբերակցությունը պահպանվել է կալանավորված տղամարդկանց պարագայում, այսինքն՝ կալանավորված հայ տղամարդկանց թիվը եղել է 3-3,5 հազարի սահմաններում: Ենթադրելով որ հայ տղամարդկանց կորուստը եղել է ընդհանուր կորստի նույն հարաբերակցությամբ՝ 40%, կարծում ենք, որ զոհվել է մոտ 1 000-1 500 հայ ռազմագերի:

Այսպիսով, համաձայն մեր հաշվարկի, Զմյուռնիայի աղետին զոհ է գնացել մոտ 5 000-5 500 հայ, որից մոտ 4 000-ը զոհվել է հրդեհի, դրան նախորդած և հաջորդած կոտորածների և զանգվածային սպանությունների հետևանքով, իսկ 1 000-1 500-ը՝ 15-45 տարեկան տղամարդիկ, գերության և աքսորի ընթացքում: Հայ զոհերը կազմել են զոհերի ընդհանուր թվի (20-22 հազար) մոտ մեկ քառորդը:

ON THE QUESTION OF THE ARMENIAN DEATH TOLL AS A RESULT OF SMYRNA CATASTROPHE

Robert A. Tatoyan
Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

---

62 Ղեւոնդ եպս. Դուրեան, «Զմյուռնիոյ աղէտին շուրջ համառօտ տեղեկագիր», *Սիոն*, ԾԶ. տարի, թիւ 6-7-8, 138):

63 U.S. Department of State, *Papers Relating to the Foreign Relations*, 941:

64 Զմյուռնիայի գրավմանը նախորդած ռազմական գործողությունների հետևանքով քեմալականները գերի էին վերցրել, ըստ տարբեր հաշվարկների, 35 000-ից (տե՛ս Micheal Clodfelter, *Warfare and Armed Conflicts: A Statistical Encyclopedia of Casualty and Other Figures, 1492-2015* (Jefferson, Noth Carolina: McFarland & Company, 2017), 346) մինչև 50 000 (տե՛ս A. J. Hobbins, "Paradise lost: the merchant princes and the destruction of Smyrna, 1922," *Fontanus 11* (2003), 100) հույն զինվոր:

SUMMARY

This article attempts to calculate the Armenian death toll because of the 1922 Smyrna catastrophe, based on a comparative analysis of data from the main Armenian and foreign sources. For this aim the article presents and analyses:

a) Historiography related to the studied question;

b) Data from the most important sources on the total death toll (Greeks, Armenians and representatives of other Christian denominations), on the basis of which conclusions are made about the most probable, in our opinion, total death toll;

c) Data on the numbers of the Armenian population of the city of Smyrna and its environs on the eve of the Armenian Genocide; as well as on the numbers of Armenians gathered in Smyrna on the eve of the capture of the city by the Kemalists in September 1922;

d) Data on the numbers of Armenians who died because of the Smyrna catastrophe;

e) Data on the numbers of Armenian refugees evacuated from Smyrna and its environs and received asylum in Greece and other countries; these data are compared with data on the numbers of the Armenian population of the western regions of Asia Minor before the Smyrna catastrophe, as of 1921;

f) Question of losses among Armenians of military age, detained in Smyrna and its environs and deported to the hinterland of Turkey.

According to our calculations, about 5,000-5,500 Armenians died because of the Smyrna catastrophe, of which about 4,000 died because of fire and massacres, and about 1,000-1,500 (15-45 years old men) lost their lives in captivity and exile.

Armenian victims accounted for about a quarter of the total death toll (20-22,000).

Key words: Smyrna catastrophe, the Armenian population of Smyrna, Armenian Genocide, refugees, statistics.

К ВОПРОСУ О ЧИСЛЕННОСТИ АРМЯН, ПОГИБШИХ В РЕЗУЛЬТАТЕ СМИРНСКОЙ КАТАСТРОФЫ

Роберт А. Татоян
Фонд “Музей-Институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

В статье на основе сравнительного анализа данных основных армянских и зарубежных источников предпринята попытка подсчёта численности армян, погибших в результате Смирнской катастрофы 1922 года. Для указанной цели:

а) освещается историография вопроса;

б) приводятся и анализируются данные важнейших источников об общей численности погибших (греки, армяне и представители других христианских конфессий), на основании которых делаются выводы о наиболее вероятном, на наш взгляд, общем числе всех смертей;

в) освещается вопрос о численности армянского населения города Смирна и области накануне Геноцида армян и количестве армян, сосредоточенных в городе Смирне и его окрестностях по состоянию на сентябрь 1922 г. – накануне взятия города кемалистами;

г) приводятся и анализируются данные основных источников о численности армян, погибших в результате Смирнской катастрофы;

д) приводятся и анализируются данные о количестве армянских беженцев, эвакуированных из Смирны и её окрестностей и получивших убежище в Греции и других странах, эти данные сопоставляются с данными о численности армянского населения западных районов Малой Азии до Смирнской катастрофы, по состоянию на 1921 год;

е) освещается вопрос о потерях среди армян призывного возраста, арестованных из Смирны и её окрестностей и депортированных во внутренние районы Турции.

Согласно нашим подсчётам, основанным на рассмотрении комплекса вышеуказанных вопросов, в результате Смирнской катастрофе погибло около 5,000-5,500 армян, из которых около 4000 погибли в результате пожара и массовых убийств, а около 1,000-1,500 (мужчины 15-45 лет) потеряли жизнь в плену и ссылке.

Армянские жертвы составили около четверти от общего числа погибших (20-22 тысячи).

Ключевые слова: Смирнская катастрофа, армянское население Смирны, Геноцид армян, беженцы, статистика.

REFERENCES

«Գաղթականները Յունաստանի մէջ» [Refugees in Greece]. *Apaga* (Paris), 23 December 1922;

«Թուրքիոյ Հայոց վիճակագոյցը. Պատրաստուած 1921-ի սկիզբը» [Statistics of Armenians in Turkey. Prepared at the beginning of 1921]. *Azg* (Boston), 7 April 1921.

«Իզմիրի ողբերգութիւնը I» [The Tragedy of Izmir I]. *Hayrenik* (Boston), 15 December 1922;

«Իզմիրի աղէտը» [Izmir Disaster]. *Hayastani kochnak* (New York), 23 September 1922;

«Հայութեան թիւը» [The Numbers of Armenians]. *Hayastani kochnak,* 20 January 1923;

Abrahamyan, Ashot. *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հատոր Բ* [A Brief Outline of the History of the Armenian Settlements. Volume II]. Yerevan: Armenia, 1967;

Amatean, G. «Իզմիրի աղէտը: Ինչպէս կործանեցաւ Իզմիրը» [Izmir Disaster. How Ismir was Destroyed]. *Arev* (Alexandria), 13 October 1922;

Avetisyan, Maro. «Երկու փաստաթուղթ Իզմիրի աղետի և հայ բնակչության կորուստների մասին» [Two Documents about the Disaster of Izmir and the Losses of the Armenian Population]. *Banber Hayastani Arkhivneri* 116, no. 2 (2010): 105-112;

Byurat, Vaghinak. *Իմ կյանքի հուշերից* [From the Memories of My Life]. Yerevan: Institute of Literature and Art, 1999;

Durean, Ghevond. «Զմյուռնիոյ աղէտին շուրջ համառօտ տեղեկագիր» [A Brief Report on the Smyrna Disaster]. *Sion* 56, nos. 3-4-5 (1982): 92-96;

Durean, Ghevond. «Զմյուռնիոյ աղէտին շուրջ համառօտ տեղեկագիր» [A Brief Report on the Smyrna Disaster]. *Sion* 56, nos. 6-7-8 (1982): 136-139;

Galustean, G. O. «Զմիւռնիա և Զմիւռնիոյ հայ գաղութը» *Յունահայ տարեգիրք: Բ. Տարի* ["Smyrna and the Armenian Community of Smyrna," in *Yearbook of the Armenians of Greece: Second Year*]. Athens: Nor Or, 1928;

Goharuni, Sedrak. «Իզմիրի սարսափները» [The Horrors of Smyrna], *Jakatamart* (Constantinople), 28 September 1922;

Guzhkan. «Իզմիրի ջարդը և հրդեհը» [Izmir Massacre and Fire]. *Hayastani kochnak*, 25 November 1922;

Kharatyan, Albert. «Զմյուռնիա», *Հայոց պատմություն: Հատոր III. Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես – 1918 թ.): Գիրք երկրորդ (1901-1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին)*, խմբագրակազմ՝ Ա. Մելքոնյան և ուրիշ. ["Smyrna," in *History of Armenia. Vol 3. New period (Second Half of the 17th century - 1918). Book 2 (1901-1918: Armenian Settlements, Periodical Press and Culture in the 19th and Early 20th Centuries)*]. Yerevan: Zangak, 2015;

Kharatyan, Albert. «Զմյուռնիայի հայ գաղթօջախը (XVIII դ. 2-րդ կես – 1922)» ["The Armenian Colony of Smyrna (Second Half of the 18th Century - 1922)]. *Lraber Hasarakakan Gitutyunneri* 1, no. 1 (2013): 85-98;

Kokinos, P. *Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927)* [From the History of the Armenian Community in Greece]. Yerevan: Institute of History, Academy of Sciences of ASSR, 1965;

Malkidis, Theofanis. *Հույների ցեղասպանությունը: Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս* [The Genocide of the Greeks. Thrace, Asia Minor, Pontos]. Alexandrupolis, 2014;

Mamurean, H. «Իզմիրի աղէտը» [Izmir Disaster]. *Arev* (Alexandria), 27 September 1922;

Mamurean, H. «Իզմիրի եղեռնը և Աթէնքի դէպքերը» [Calamity of Izmir and the Events in Athens]. *Apaga* (Paris), 21 October 1922;

Martoyan, Tehmine. «1922 սեպտեմբեր. Զմիւռնիայի հայերի եւ յոյների բնաջնջումը եւ քրիստոնեաբնակ թաղամասերի հրկիզումը» [The Annihilation of the Armenians and Greeks in Smyrna and the Arson in the Christian Quarters of Smyrna (September 1922)]. *Haigazian Armenological Review* 41(2021): 199-220;

Martoyan, Tehmine. «Հույների ցեղասպանության պատմության հիմնահարցը հայ պատմագրության մեջ» [The Question of the Genocide of the Greeks in the Armenian Historiography]. *Ts'eghaspanagitakan handes* 7, no. 1 (2019): 116-125;

Meliqsetyan, Hovik. *Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը (1920-1980)* [Homeland-Diaspora Relations and Repatriation (1920-1980)]. Yerevan: Yerevan University, 1985;

Nersisyan, Mkrtich. «Մի բանավեճ Զմյուռնիայի 1922 թվականի ողբերգության մասին (Զմյուռնիայի հայ և հույն բնակչության ջարդերի 70-ամյակի առթիվ)» [A Debate on the Smyrna Tragedy of 1922 (on the Occasion of the 70th Anniversary of the Massacre of the Armenian and Greek Populations of Smyrna)]. *Patmabanasirakan Handes* 2-3 (1992): 87-92;

Ormanean, Maghakia. Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, վարչութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը ու ներկայ կացութիւնը [The Church of Armenia: Her History, Doctrine, Rule, Discipline, Liturgy, Literature and Present Condition]. Constantinople: V. ev H. Ter-Nersesian, 1911;

Simonean, Petros. *Յուշամատեան: Հայկական Զմիւռնիան* [Memory Book: The Armenian Smyrna]. Paris: Araks, 1936;

Tatoyan, Robert. «Մեծ եղեռնի ընթացքում արևմտահայության կրած մարդկային և նյութական կորուստները վիճակագրելու Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի փորձերը 1919-1920 թվականներին (ըստ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվի նյութերի) (Մաս 2)» [Efforts (Made in 1919-1920) of the Armenian Patriarchate of Constantinople to Gather Statistics of Human and Material Losses Suffered by the Western Armenians during the Armenian Genocide (According to the Archives of the Armenian Patriarchate of Jerusalem) (Part 2)]. *Etchmiadzin* 76, no. 5 (2019): 53-86;

Tatoyan, Robert. «Մեծ եղեռնի որբերի թվաքանակի վերաբերյալ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1919-1922 թթ. կազմած վիճակագրությունները», *Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.,* միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, խմբ.՝ Հարություն Մարության, Նարինե Մարգարյան ["Statistics on the Armenian Genocide Orphans Compiled by the Armenian Patriarchate of Constantinople in 1919-1922," in *The Rescue of Armenians in the Middle East in 1915-1923. International Conference Proceedings, November 8–9, 2019*, eds. Harutyun Marutyan, Narine Margaryan]. Yerevan: Armenian Genocide Museum-Institute Foundation, 2020, 323-348;

Teodik. *Ամէնուն տարեցոյցը, ԺԸ. տարի, 1924* [Calendar for Everyone]. Paris: T'yurapean, 1923;

Tsotsikian, Sargis. Արեւմտահայ աշխարհ [The World of Western Armenians]. New York: A. I. Leilekian, 1947;

Vardanyan, Gevorg. *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923)* [The Greek Population in The Ottoman Empire and Asia Minor Disaster (1914-1923)]. Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2012.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Ռոբերտ Ա. Թաթոյան, պատմ. գիտ. թեկն., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության վիճակագրություն և ժողովրդագրություն, արևմտահայ հասարակական, կրթական, մշակութային և կրոնական կյանք:

Էլ. փոստի հասցե՝ r.tatoyan@genocide-museum.am

Robert A. Tatoyan, PhD in History, Senior Researcher at the Department of the Armenian Genocide source studies, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – Western Armenian population statistics and demography on the eve of the Armenian Genocide, Western Armenian public, educational, cultural and religious life.

E-mail: r.tatoyan@genocide-museum.am

Роберт А. Татоян, канд. ист. наук, старший научный сотрудник Отдела источниковедческих исследований Геноцида армян Фонда «Музей-институт Геноцида армян».

Область исследований – статистика и демография западных армян накануне геноцида, общественная, образовательная, культурная и религиозная жизнь западных армян.

Эл. почта: r.tatoyan@genocide-museum.am

ԷՍԹԵՐ ՓՈԼ ԼԱՎՋՈՅ. ԱՄԵՐԻԿԱՑԻ ԲԺՇԿՈՒՀՈՒ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ԱՂԵՏԻ ԺԱՄԱՆԱԿ

Գոհար Վ. Խանումյան
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հոդվածում ներկայացվում է ամերիկացի բժշկուհի Էսթեր Փոլ Լավջոյի փորձառությունը Զմյուռնիայի աղետի օրերին. նա Զմյուռնիա է գնում իբրև «Ամերիկացի կանանց հոսպիտալներ» (այսուհետ՝ ԱԿՀ) ծառայության ներկայացուցիչ: Լավջոյի և նրա ղեկավարած ԱԿՀ ծառայության բժշկական նպաստամատույց գործունեության վերաբերալ հայ պատմագրության մեջ հիշատակումներ գրեթե չկան այն դեպքում, երբ այս հեղինակը բազմիցս հղվում է որպես սկզբնաղբյուր Զմյուռնիայի աղետի, հույն և հայ գաղթականներին բժշկական նպաստամատույց օգնության կազմակերպման վերաբերյալ օտարալեզու ուսումնասիրություններում և մասնագիտական գրականության մեջ:
Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև ԱԿՀ ծառայության ստեղծման պատմությանը և սկզբնական շրջանի գործունեությանը:

Բանալի բառեր՝ Զմյուռնիայի աղետ, Հայոց ցեղասպանություն, Ամերիկացի կանանց հոսպիտալներ, Ամերիկացի բուժաշխատող կանանց ազգային ասոցացիա, Հույն-թուրքական պատերազմ:

Հոդվածը ներկայացվել է՝ 01.08.2022: Ընդունվել է տպագրության՝ 13.10.2022:
The article was submitted on 01.08.2022 and accepted for publication on 13.10.2022.
Статья поступила 01.08.2022 и была принята к публикации 13.10.2022.

Ինչպես հղել՝ Գոհար Վ. Խանումյան, «Էսթեր Փոլ Լավջոյ. ամերիկացի բժշկուհու փորձառությունը Զմյուռնիայի աղետի ժամանակ», *Ցեղասպանագիտական հանդես* 10, no. 2 (2022), 74-89:
How to cite: Gohar V. Khanumyan, "Esther Pohl Lovejoy: The Experience of American Woman Physician during Smyrna Disaster," *Ts'eghaspanagitakan handes* 10, no. 2 (2022): 74-89.
Как ссылаться: Гоар В. Ханумян, "Эстер Поль Лавджой: опыт американского врача во время катастрофы в Смирне," *Цехаспанагитакан андес* 10, no. 2 (2022): 74-89.

Ներածություն

1922 թ. սեպտեմբերի 9-ին քեմալական բանակը, Մուսթաֆա Քեմալի հրամանատարությամբ, մտնում է Զմյուռնիա և իրագործում տեղի հայ և հույն բնակչության կոտորածը: Սեպտեմբերի 13-ին քեմալականները հրդեհում են քաղաքը: Փախչելով կոտորածից և հրդեհից՝ քրիստոնյա բնակչությունը հիմնականում ապաստան է գտնում քաղաքի նավամատույցում՝ հույս ունենալով այդկերպ գոնե տարհանվելու Էգեյան ծովում գտնվող օտարերկրյա նավերով: Քաղաքում գտնվող օտարեկրացիներից շատերը փորձում էին իրենց ուժերի հնարավորության սահմաններում օգնել աղետյալ քրիստոնյաներին: Նրանց շարքերում էր ամերիկացի բժշկուհի Էսթեր Փոլ Լավջոյը, որը, մեծ հաշվով, անհայտ է հայ գիտական հանրույթի համար:

20-րդ դարի սկզբին ԱՄՆ-ում Էսթեր Փոլ Լավջոյը նշանակալի դեր է ունեցել հանրային առողջության բարեփոխման, կանանց ընտրական իրավունքի[1] համար մղվող պայքարում և իր թեկնածությունն է առաջադրել Սենատի ընտրություններում: Առաջին աշխարհամարտից հետո նա մեծ ներդրում է ունեցել բժշկական միջազգային օգնության կազմակերպման ոլորտում՝ դառնալով դրա առանցքային դերակատարներից:

Էսթեր Քլեյսոն Փոլ Լավջոյ. կենսագրական ակնարկ

Էսթեր Քլեյսոնը ծնվել է 1869 թ. նոյեմբերի 16-ին Սիբեքում (Վաշինգտոնի նահանգ, ԱՄՆ): Նրա բրիտանացի ծնողները՝ Էդվարդ և Աննի Քլեյսոնները, վերջնականապես Պորտլենդ են տեղափոխվում 1883 թ.: 1890 թ. Էսթերն ընդունվում է Օրեգոնի համալսարանի բժշկական բաժինը, որի ուսման վարձը վաստակում է խանութներում գանձապահ աշխատելով[2]: Բժշկի մասնագիտությունն ընտրած կանայք ԱՄՆ-ում 19-րդ դարի վերջին դեռևս բացառություն էին կազմում, ուստի իր ժամանակակիցների շրջանում նա երկրորդ կինն էր, որն ավարտել էր Օրեգոնի համալսարանի բժշկական բաժինը: Էսթերը մասնագիտանում է մանկաբարձության և գինեկոլոգիայի ոլորտն-

1 *Women's suffrage*, կանանց ընտական իրավունք. 19-րդ դարի կեսերից սկսած՝ ԱՄՆ-ում և Եվրոպայում ստեղծվել են մի շարք կազմակերպություններ, որոնք պայքարում էին կանանց՝ տղամարդկանց հետ հավասար ընտրական իրավունք ստանալու համար: Այդ պայքարի մասնակիցները կոչվում էին սուֆրաժիստներ: Առաջին համաշխարհային պատերազմից հետո գրեթե բոլոր արևմտյան երկրներում կանայք ընտրական իրավունք ստացան: Բացառություն են կազմել Ֆրանսիան և Շվեյցարիան, որտեղ կանայք ընտրական գործընթացներին մասնակցել կարողացել են համապատասխանաբար 1944 և 1979 թթ.: Ամերիկյան սուֆրաժիստներից շատերն իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին Համիդյան կոտորածների և Հայոց ցեղասպանության ընթացքում: Այս մասին տե՛ս Peter Balakian, The Burning Tigris: *The Armenian Genocide and America's Response* (New York: Harper Collins publisher, 2003):

2 Kimberly Jensen, "Esther Clayson Pohl Lavejoy (1896-1967)," https://www.oregonencyclopedia.org/articles/lovejoy_esther_clayson_pohl_1869_1967_/#.Y2zrbegzaUk, դիտվել է՝ 08.07.2022:

երում[3]: Հետագայում մասնագիտական վերապատրաստումներ է անցնում Վիեննայում (1904) և Բեռլինում (1911)[4]:

Ավարտելուց անմիջապես հետո Էսթերն ամուսնանում է իր համակուրսեցու՝ Էմիլ Փոլի հետ: Նրա ընտանեկան կյանքը, սակայն, երջանիկ և խաղաղ չի ստացվում. միակ որդին՝ յոթնամյա Ֆրեդերիկը, մահանում է 1908 թ. պերիտոնիտից (որովայնամզի բորբոքում), իսկ 3 տարի անց՝ սիրելի ամուսինը՝ Ալյասկայում էնցեֆալիտի (գլխուղեղի բորբոքում) համաճարակից: 1912 թ. Էսթերը կրկին ամուսնանում է Պորտլենդում գործարար Ջորջ Լավջոյի հետ, սակայն 1920 թ. նրանք ամուսնալուծվում են[5]:

Չնայած անձնական կյանքում ունեցած դժբախտություններին և անհաջողություններին՝ Էսթերը մասնագիտական կյանքում բավականին հաջողակ էր: Նրա՝ բժշկի կարիերան սկսվում է 1905 թ., երբ Պորտլենդի քաղաքապետ՝ մասնագիտությամբ բժիշկ Հարրի Լեյնը[6] նրան նշանակում է առողջապահության հարցերով քաղաքային խորհրդի անդամ: 1907-1909 թթ. էսթեր Փոլը դառնում է Պորտլենդի սանիտարական բժիշկը. իր ժամանակակիցների շրջանում նա առաջին կինն էր, որ զբաղեցրել է այդպիսի պաշտոն ԱՄՆ-ի խոշոր քաղաքում[7]: Իր այս գործունեության ընթացքում նա կազմակերպում է քաղաքում մաքուր սննդի, ջրի և հատկապես մաքուր կաթի[8] օգտագործման միջոցառումները[9], կարգավորում է աղբահանության հարցը, դպրոցական երեխաների բժշկական ստուգումը՝ կանխարգելելու տարածված ինֆեկցիաները: Հենց նրա՛ հետևողական ջանքերի շնորհիվ է, որ Պորտլենդը 1907-1908 թթ. հաղթահարում է առնետներից տարածվող բուբոնային ժանտախտի համաճարակը[10]:

Մասնագիտական բուռն գործունեությունից բացի էսթեր Փոլը նաև 1906-1912 թթ. Օրեգոնում կանանց իրավունքների ակտիվ պաշտպան էր: Նա հիմնադրում է «Բո-

---

3 “Esther Pohl Lavejoy, papers, 1870-1995,” https://archiveswest.orbiscascade.org/ark:/80444/xv239989, դիտվել է՝ 08.07.2022:

4 “Celebrating America’s women’s physicians; Dr. Esther Clayson Pohl Lavejoy; biography,” https://cfmedicine.nlm.nih.gov/physicians/biography_205.html դիտվել է՝ 08.07.2022:

5 Kimberly Jensen, “Esther Clayson Pohl Lavejoy (1896-1967),” https://www.oregonencyclopedia.org/articles/lovejoy_esther_clayson_pohl_1869_1967_/#.Y2zrbegzaUk, դիտվել է՝ 08.07.2022:

6 *Հարրի Լեյն* (1855-1917), հասակարական-քաղաքական գործիչ, բժիշկ, ԱՄՆ սենատոր (1912): Երկու անգամ՝ 1905 թ. և 1907 թ., ընտրվել է Պորտլենդի քաղաքապետ:

7 Dr. Esther Clayson Pohl Lavejoy, Biography, https://cfmedicine.nlm.nih.gov/physicians/biography_205.html, դիտվել է՝ 07.08.2022:

8 Որդու մահից հետո՝ մոտավորապես 1910 թ., Էսթեր Փոլը զեկուցում է կազմում, որտեղ ներկայացնում է մանկական մահացության դեպքերը, պատճառները, քննարկում մաքուր կաթի օգտագործման եղանակները և այլն: Մանրամասն տե՛ս https://digitalcollections.ohsu.edu/concern/etds/dz010q33c, դիտվել է՝ 07.08.2022:

9 Ի դեպ, Էսթեր Փոլի որդու անժամանակ մահը հենց ոչ մաքուր կաթի օգտագործման հետևանք էր:

10 Այս մասին մանրամասն տե՛ս Law Steve, “Lovejoy’s city work shines in new light,” 17 October 2012, https://pamplinmedia.com/pt/9-news/121333-lovejoys-city-work-shines-in-new-light, դիտվել է՝ 07.07.2022: Տե՛ս նաև Lou Ureneck, *Smyrna, September 1922: The American mission to rescue victims of the 20th century’s first genocide* (New York: HarperCollins publishers, 2016), 352.

լորի համար հավասար ընտրական իրավունքի լիգան» (Everybody's Equal Suffrage League)[11]:

«Ամերիկացի կանանց հոսպիտալներ» ծառայության ստեղծումը և գործունեությունը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում բազմաթիվ կին բուժաշխատողներ իրենց մասնագիտական օգնությունն էին ցուցաբերում ինչպես զինծառայողներին՝ դաշտային հոսպիտալներում, այնպես էլ քաղաքացիական բնակչությանը, որոնք տուժել էին պատերազմի հետևանքով ստեղծված հումանիտար աղետից: Սակայն նրանց ծառայությունը, ի տարբերություն արական սեռի բժիշկների, զինվորական ծառայություն չէր համարվում, ինչը, արդարացիորեն, հարուցում էր կին բժիշկների դժգոհությունը[12], մինչդեռ արտասահմանում պատերազմին մասնակցող բժշկի աշխատանքը մեծ հնարավորություններ էր ընձեռնում պրոֆեսիոնալ աճի համար[13]: Այս կապակցությամբ Լավջոյը գրում է. «Մեր կառավարությունը նախատեսում էր բուժքույրերի զինվորագրում, սակայն՝ ոչ կին բժիշկների: Սա սխալ էր… Բժշկական մասնագիտության տղամարդիկ զորակոչվել են… Պետությունը պատրաստ էր տրամադրել տրանսպորտ, շինություններ, բժշկական և հոսպիտալային պարագաներ, չափաբաժիններ, կոչումներ, աշխատավարձ, ապահովագրություն… Բժշկական մասնագիտության կանայք չեն զորակոչվել, բայց նրանք որոշեցին ամեն դեպքում գնալ: Պատերազմական ծառայության կոմիտեներում տարբեր նահանգներում նշանակվեցին կին բժիշկների խմբեր՝ հոսպիտալային ստորաբաժանումների կազմակերպման համար»[14]: Ի թիվս այլ պատճառների՝ պատերազմում միևնույն մասնագիտություն ունեցող նաև սեռային խտրականությունը նպաստեց, որ 1915 թ. նոյեմբերին ամերիկացի բժշկուհի Բերթա Վան Հուսենը[15] հիմնադրի Ամերիկացի բուժաշխատող կանանց ազգային ասոցիացիան[16] (այսուհետ՝ ԱԲԿԱԱ) ԱՄՆ-ում[17]:

---

11 Kimberly Jensen, "Esther Clayson Pohl Lovejoy (1896-1967)," https://www.oregonencyclopedia.org/articles/lovejoy_esther_clayson_pohl_1869_1967_/#.Y2zrbegzaUk, դիտվել է՝ 07.07.2022:

12 Esther Pohl Lovejoy, *Certain Samaritans* (New York: The MacMillan company, 1927), 7.

13 Ellen More, "The American Medical Women's Association and the Role of the Woman Physician, 1915-1990," *Library Publications and Presentations* (1990): 165.
Նույն տեղում, 167:

14 Pohl Lovejoy, *Certain Samaritans*, 7.

15 *Բերթա Վան Հուսեն* (1863-1952), ամերիկացի բժիշկ, Ամերիկացի բուժաշխատող կանանց ազգային ասոցիացիայի առաջին նախագահ:

16 *American Medical Women National Association* (AMWA), Ամերիկացի բուժաշխատող կանանց ազգային ասոցիացիա (ԱԲԿԱԱ). նպատակն է առաջ մղել կանանց բժշկության ոլորտում՝ խթանելով նրանց կրթությանը, առաջնորդությանը, ինչպես նաև պաշտպանել նրանց շահերը և բարելավել կանանց առողջությունը բժշկական հետազոտությունների շնորհիվ: ԱԲԿԱԱ-ն առ այսօր ակտիվորեն գործում է: ԱԲԿԱԱ գործունեության պատմության, առաքելության մասին մանրամասն տե՛ս "AMWA advances women in medicine: Our history and our impact," https://www.amwa-doc.org/about-amwa/history//, դիտվել է՝ 07.08.2022:

17 Մանրամասն տե՛ս More, "The American Medical Women's Association," 165-180:

Նշենք, որ 1910-ական թթ. Միացյալ Նահանգներում կին բժիշկների թիվը զգալիորեն աճել էր 19-րդ դարավերջի տվյալների համեմատ՝ հասնելով շուրջ 9 000 պրակտիկ կին բժիշկների, որը կազմում էր բժշկական մասնագիտություն ունեցող անձանց մոտավորապես 5-6 %-ը[18]: Դեռ 1917 թ . հունիսին, երբ ԱՄՆ-ն արդեն մտել էր պատերազմի մեջ[19], Նյու Յորքում ԱԲԿԱԱ-ն որոշում է ստեղծել Պատերազմական դեպարտամենտ, որի առաջին նախագահն է դառնում Ռոզալի Սլութեր Մորթոնը[20]: Շաբաթներ անց Պատերազմական դեպարտամենտը վերանվանվում է Ամերիկացի կանանց հոսպիտալներ ծառայության[21]: Այդ ընթացքում Լավջոյը՝ որպես ԱԲԿԱԱ-ի պաշտոնական ներկայացուցիչ[22], մեկնում է ռազմաճակատի վերածված Ֆրանսիա՝ աշխատելով Ամերիկյան Կարմիր խաչի հոսպիտալում[23]: Պատերազմի ավարտից հետո վերադառնալով հայրենիք՝ նա մեկուկես տարի ԱՄՆ-ում դասախոսություններ էր կարդում Ֆրասիայում ունեցած իր փորձառության մասին, ինչը ներկայացնում է իր առաջին գրքում[24]:

Չնայած Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում ԱԿՀ-ն չկարողացավ գործուն մասնակցություն ունենալ, սակայն պատերազմի ավարտից անմիջապես հետո՝ 1918 թ. նոյեմբերին, գործարկեց բավականին հաջողված առաքելություն: Ստանալով Կարմիր խաչի աջակցությունը[25]՝ ԱԿՀ-ն արտասահման ուղարկեց կանանց հոսպիտալային ստորաբաժանումներ: Այդ նպատակի համար հանգանակություններից հավաքվեց շուրջ 300 000 դոլար[26]: Կարճ ժամանակահատվածում՝ մեկ տարվա ընթացքում, ավելի քան 1 000 բժշկուհի գրանցվեց ԱԿՀ-ին[27]: Ծառայության բոլոր աշխատակիցները կամավորներ էին և վարձատրվում էին միայն իրենց կարիքներին համապատասխան[28]: Նրանք կրում էին իրենց ծառայության հատուկ համազգեստը, որի վրա ամրացված էր ԱԿՀ-ի վենզելը՝ "AWH" գրությամբ: Լավջոյն իրավացիորեն գրում է, որ «Ամերիկացի կանանց հոպիտալները՝ որպես մարդասիրության ձեռքբերում,

---

18 Նույն տեղում, 165:

19 1917 թ. ապրիլի ապրիլի 2-ին ԱՄՆ-ը պատերազմ հայտարարեց Գերմանիային և խախտեց իր չեզոքությունը, որը որդեգրել էր պատերազմի սկզբից: Մանրամասն տե՛ս Կարեն Գասպարյան, *ԱՄՆ արտաքին քաղաքականությունը Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին. 1914-1917 թթ. դասախոսությունների նյութեր* (Երևան, ԵՊՀ, 2016):

20 *Ռոզալի Սլութեր Մորթոն* (1872-1968), ամերիկացի բժշկուհի, վիրաբույժ, Կոլումբիա համալսարանի առաջին կին պրոֆեսոր:

21 More, "The American Medical Women's Association," 167.

22 Pohl Lovejoy, *Certain Samaritans*, 8.

23 Նույն տեղում, 12: Տե՛ս նաև՝ Ureneck, *Smyrna, September 1922*, 353:

24 Esther Pohl Lovejoy, *The House of the Good Neighbor* (New York: The MacMillan company, 1919).

25 Pohl Lovejoy, *Certain Samaritans*, 9.

26 Նույն տեղում, 11:

27 Նույն տեղում, 10:

28 Նույն տեղում, 9:

ուրույն տեղ են զբաղեցնում օտարերկրյա օգնության/relief/[իրականացման] գործում»[29]: Իր գործունեության սահմաններում ԱԿՀ-ն հովանավորում էր հոսպիտալներին, որբանոցների մեկուսարաններին, ինչպես նաև, օրինակ, մինչև 1923 թ. վճարում էր Գյումրու հոսպիտալներում աշխատող բուժանձնակազմի աշխատավարձը, ովքեր բուժում էին տրախոմայով հիվանդ ավելի քան քսան հազար երեխայի[30]:

1919 թ. ԱԿՀ ծառայության ղեկավար է ընտրվում Էսթեր Փոլ Լավջոյը. նա, փոխարինելով նախորդին՝ Ռոզալի Սլութեր Մորթոնին, առաքելությունն ստանձնում է մինչև իր մահը՝ 1967 թ.: Լավջոյի ղեկավարության ընթացքում ԱԿՀ-ը մեծապես ընդլայնում է իր գործունեության տարածքը՝ ընդգրկելով նորանոր շրջաններ (Ֆրանսիա, Բալկաններ, Թուրքիա, Հայաստան և այլն): Ի դեպ, 1919 թ. հոկտեմբերին Լավջոյի ջանքերով հիմնադրվում է նաև Բժիշկ կանանց միջազգային ասոցիացիան (այսուհետ՝ ԲԿՄԱ)[31], որի առաջին նախագահ է ընտրվում միջազգային հեղինակություն վայելող 50-ամյա փորձառու բժշկուհին՝ Էսթեր Փոլ Լավջոյը[32]. փաստորեն, արդեն իսկ արտակարգ իրավիճակներում աշխատելու փորձառություն ունենալով, իրեն դրսևորում է իբրև բժշկական նպաստամատույց գործի հմուտ կազմակերպիչ:

Արդեն 1919 թ. մարտին ԱԿՀ-ի ութ աշխատակից ժամանում են Թուրքիա. Մարաշում, հետագայում՝ Իզմիթում, բժշկի իր առաքելությունն իրականացնում էր Մեյբլ Էլիոթը, Մալաթիայում՝ բժիշկ ՄըքԼեոդը, Տրապիզոնում՝ բժիշկ Նորթմանը[33]: Այստեղ ծառայությունն ակտիվորեն համագործակցում էր Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցի հետ[34]:

Իրավիճակը Օսմանյան կայսրությունում

Ռազմաքաղաքական իրավիճակը Թուրքիայում ծայրահեղ սրված էր: Լավջոյն այս առնչությամբ գրում է. «1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարի կնքումից հետո... խաղաղությունը հաստատվեց միայն թղթի վրա: Թուրքիան ջախջախված էր, իսկ հաղթանակած պետություններն ի վերջո ազատել էին Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակներին»[35]: Էսթեր Փոլ Լավջոյն իր գործունեության այս փուլը ներկայացնում է հեղինակային «Իրական սամարացիներ» (Certain Samaritans)

29 Նույն տեղում, 6:

30 Isabel Kaprielian-Churchill, *Sisters of Mercy and Survival: Armenian nurses, 1900-1930* (Antelias: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2012*)*, 269-270.

31 *Medical Women's International Association* (MWIA), Բժիշկ կանանց միջազգային ասոցիացիա (ԲԿՄԱ). 1919 թ. սեպտեմբերի 15-ից հոկտեմբերի 26-ը Նյու Յորքում ԱԲԿԱԱ-ի և ՀԿՀ-ի ջանքերով գումարվում է կին բժիշկների առաջին միջազգային համաժողովը, որին մասնակցում էին աշխարհի 16 երկրից 140 պատվիրակ. որոշում է ընդունվում հիմնել Բժիշկ կանանց միջազգային ասոցիացիան, որն առ այսօր ակտիվորեն գործում է:

32 More, "The American Medical Women's Association," 168.

33 Lovejoy, *Certain Samaritans,* 75.

34 Նույն տեղում, 81:

35 Նույն տեղում, 74:

գրքում: Այն պատմական կարևոր իրադարձությունների ականատեսի արժեքավոր սկզբնաղբյուր է՝ փաստերի գրագետ շարադրմամբ, նաև՝ վերլուծություններով:

Առաջին համաշխարհային պարերազմում պարտված, քայքայված և տարածքային կորուստներ կրած Օսմանյան կայսրությունն ամիսներ անց ներքաշվում է նոր՝ Հույն-թուրքական պատերազմի մեջ, երբ 1919 թ. մայիսի 15-ին հունական զորքերն իրենց հսկողության ներքո են վերցնում Զմյուռնիա քաղաքը[36]: Հունական զորքերի առաջխաղացմանը[37] զուգահեռ Թուրքիայում ազգայնական շարժումը՝ Մուսթաֆա Քեմալի գլխավորությանը, լայն թափ է ստանում: 1919 թ. սեպտեմբերին Սեբաստիայում տեղի ունեցած համաժողովից հետո Քեմալը, փաստորեն, իր ձեռքում է կենտրոնացնում իշխանությունը քեմալականների հսկողության ներքո գտնվող տարածքներում[38], իսկ 1920 թ. ապրիլի 23-ին տեղի է ունենում Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) անդրանիկ նիստը. Մուսթաֆա Քեմալն ընտրվում է նախագահ[39]:

Հույն-թուրքական պատերազմում բեկումնային եղավ 1921 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Սաքարիա գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, որն ավարտվեց քեմալականների հաղթանակով: Քեմալականների՝ Պոնտոսի հունաթափումից և հունական զորքի իրար հաջորդող մի քանի պարտություններից հետո թուրքական հաջորդ թիրախը Զմյուռնիան էր: Խուճապահար նահանջող հունական զորքի հետ բազմահազար հույն բնակիչներ՝ վախենալով քեմակալականների հաշվեհարդարից, սկսեցին զանգվածաբար լքել իրենց բնակավայրերը՝ նահանջելով Զմյուռնիա[40]: Արդեն 1922 թ. սեպտեմբերի 7-ին Զմյուռնիայի փողոցներում կար շուրջ 150 000 անօթևան գաղթական[41], որոնց շրջանում մոլեգնում էին սովն ու տարբեր համաճարակները[42]: Նշենք, որ նախքան քեմալականների գրավումը, որոշ տվյալներով, Զմյուռնիայում ապ-

---

36 Տե՛ս Գևորգ Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը (1914-1923թթ.)* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2012), 108-133:

37 1920 թ. հունիսին հունական զորքերն սկսեցին լայնածավալ հարձակում դեպի Փոքր Ասիայի խորքերը և գրավեցին Բուրսան, Ադրիանապոլիսը, իսկ 1921 թ. ամռանը, հակառակ քեմալականների մի շարք հաղթանակների, հունական բանակը հասավ ընդհուպ Անկարայի մատույցների մոտ: Այդ ծանր պայմաններում Քեմալը ԹԱՄԺ-ի կողմից նշանակվեց գերագույն հրամանատար՝ ստանալով անսահմանափակ լիազորություններ: Այս մասին տե՛ս Ռուբեն Սաֆրաստյան, Ռուբեն Մելքոնյան, Արթուր Դումանյան, Վահրամ Տեր-Մաթևոսյան, Հակոբ Զաքրյան, Անուշ Հովհաննիսյան, (պատ. խմբ.՝ Ռուբեն Սաֆրաստյան), *Թուրքիայի հանրապետության պատմություն, բուհական դասագիրք* (Երևան, ԵՊՀ, 2014), 32-33:

38 1919 թ. վերջին քեմալականները սկսեցին իրենց հակահայկական գործողությունները Կիլիկիայում՝ 1920-1921 թթ. ընթացքում հայաթափելով Մարաշը, Հաճընը, Այնթապը, Զեյթունը: Իսկ 1920 թ. սեպտեմբերի 23-ին Թուրքիան նվաճողական պատերազմ սկսեց Հայաստանի Հանրապետության դեմ:

39 Ռոբեն Սաֆրաստյան, Ռուբեն Մելքոնյան և ուրիշներ, *Թուրքիայի հանրապետության պատմություն*, 24-31:

40 Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում,* 126:

41 Giles Milton, *Paradise Lost: Smyrna 1922: The Destruction of a Christian City in the Islamic World* (New York: Basic Books, 2008), 236.

42 Lovejoy, *Certain Samaritans*, 84.

րում էր շուրջ 500 000 օսմանահպատակ քրիստոնյա[43]՝ գլխավորապես հայեր և հույներ: Դեռ 1920 թ. օգոստոսի 10-ին Օսմանյան Թուրքիայի և դաշնակիցների միջև ստորագրված Սևրի պայմանագրի համաձայն՝ Զմյուռնիան պետք է կառավարվեր Հունաստանի կողմից 5 տարով, սակայն նավահանգստում պետք է բարձրացված մնար սուլթանական դրոշը: Ժամկետի ավարտից հետո այն պետք է փոխանցվեր Հունաստանին, եթե տեղական խորհրդարանը կամ հանրաքվեն այդպես որոշեր[44]: 1922 թ. սեպտեմբերի 8-ին հունական բարձրագույն քաղաքացիական կառավարիչ Ստերդիադիսը Զմյուռնիայից հեռացել էր. մինչ այդ քաղաքը լքել էր նաև հունական զորքը[45]՝ այդպիսով անպաշտպան թողնելով Զմյուռնիայի քրիստոնյա բնակիչներին և այստեղ ապաստանած գաղթականներին քեմալական վերահաս հարձակումից:

Նախքան Զմյուռնիայի աղետը Լավջոյը 1922 թ. կարճատև աշխատանքային այցով լինում է նոր խորհրդայնացված Հայաստանում՝ Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի), Ջալալ-օղլիում (այժմ՝ Ստեփանավան) և Երևանում[46], ապա սեպտեմբերին իր գործընկեր բժիշկ Մեյբըլ Էլիոթի հետ մեկնում Ժնև՝ մասնակցելու Բուժաշխատող կանանց միջազգային ասոցիացիայի 2-րդ կոնֆերանսին[47]: Հենց այդ ընթացքում ստանալով Զմյուռնիայի աղետի մասին տեղեկությունը՝ նրանց ծրագրերը փոխվում են:[48] Այն ստիպեց Զմյուռնիայում նպաստամատույց կազմակերպություններին անհապաղ միավորել իրենց բոլոր միջոցները և գործել Աղետի նպաստամատույց կոմիտեի (Disaster Relief Committee) ներքո՝ ծովակալ Բրիստոլի[49] ղեկավարությամբ:[50] Հարկ է նշել, որ դեռ սեպտեմբերի 3-ին Զմյուռնիայում ԱՄՆ հյուպատոս Ջորջ Հորթոնը հեռագիր էր ուղարկել ծովակալ Բրիստոլին՝ խնդրելով, որ վերջինս դիմի Պետդեպարտամենտին, և ԱՄՆ միջամտությամբ կանխվի վերահաս աղետը, սակայն նրանից ստացել էր բացասական պատասխան[51]:

Սեպտեմբերի 9-ին քեմալական զորքը մտնում է անպաշտպան մնացած Զմյուռնիա[52]: Սեպտեմբերի 12-ից քեմալական զինվորականներն սկսում են ձերբակալել չա-

---

43 Marjorie Housepian Dobkin, *Smyrna 1922: The Destruction of the City* (USA: Newmark press, 1998), 265.

44 Մանրամասն տե՛ս Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում*, 116:

45 Նույն տեղում, 126: Տե՛ս նաև՝ George Horton, *The Blight of Asia* (Indianapolis: The Bobbs-Merril company, 1926), 121:

46 Այս ժամանակահավածում Ալեքսանդրապոլում, Ջալալօղլիում և Երևանում Էսթեր Փոլ Լավջոյի գործունեության մասին մանրամասն տե՛ս Lovejoy, *Certain Samaritans*, 99-130:

47 *The Armenian Genocide. Prelude and aftermath. As reported in the U. S. press. The New York Times (1915-1922),* vol. 2, comp. and ed. rev. Vahan Ohanian, Ara Ketibian (Mekhitarianist publication, 2018), 1796.

48 Lovejoy, *Certain Samaritans,* 132.

49 *Մարկ Լամբերտ Բրիստոլ* (1868-1939), ԱՄՆ նավատորմի ծովակալ. հայտնի էր հայերի և հույների նկատմամբ ոչ բարյացակամ վերաբերմունքով:

50 Lovejoy, *Certain Samaritans*, 132-133.

51 Վարդանյան, *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում*, 126:

52 Horton, *The Blight of Asia,* 127.

փահաս հայ տղամարդկանց, որը Հորթոնը բնութագրում է որպես «հայերի որս»: Սեպտեմբերի 13-ին քեմալականները հրկիզում են[53] քաղաքի պաշարված հայկական թաղերը: Զմյուռնիայի աղետի ականատես հայ բժիշկ Կարապետ Խաչերյանն իր օրագրության մեջ գրում է. «Հրդեհը կը տարածուի երկու թեւի վրա, մեկը եկեղեցին վերի մասը գտնուող Հայնոցի մասը, միւսը՝ Առաջնորդարանի եւ նորկերտ խանութներու դէմը գտնուող շէնքերը՝ մինչեւ Մէյխանէի պօղազը: Այս երկու թեւերն անջատ են եւ յայտնի է թէ հրդեհը դիտումնաւոր է եւ մէկէ աւելի տեղեր կրակ տրուած է միաժամանակ»[54]: Տարածվող հրդեհը, որն ավելի էր ուժգնանում հարավային քամուց, շրջափակման մեջ հայտնված քրիստոնյաների շրջանում անասելի խուճապ է առաջացնում: Իրա-վիճակն օրհասական է դառնում նաև այն պատճառով, որ քաղաքը գրավելուց հետո թուրքերն իրենց հսկողության տակ են վերցնում նավամատույցում գտնվող առագաստանավերն ու մակույկները, կոտրում դրանց թիակները, որպեսզի քրիստոնյաները հնարավորություն չունենան մոտենալ օտարերկրյա զրահանավերին և շոգենավերին[55]: «Երեք մահասարսուռ ազդակներու՝ հուրի, սուրի և ջուրի միջև կը գտնուինք: Մեր վիճակը բոլորովին յուսահատական է», – գրում է բժիշկ Խաչերյանն իր օրագրում[56]: Երբեմնի հարուստ ու հիանալի ճարտարապետությամբ, սակայն արդեն ավերված քաղաքում սկսվել էր թալան, կողոպուտ, անպաշտպան մնացած բնակչությունը ենթարկվում էր զանգվածային սպանությունների և բռնաբարությունների:[57] Փողոցները լիքն էին անթաղ մնացած դիակներով[58], ինչի հետևանքով օրեցօր վատթարանում էր սանիտարական և հումանիտար վիճակը[59]: Հրդեհի մարումից հետո ակնհայտ էր, որ անհրաժեշտ է անհապաղ կազմակերպել Զմյուռնիայում օրհասական վիճակի մեջ գտնվող դեռևս ողջ մնացած շուրջ 250 000 հայերի և հույների տարհանումը[60]: Իրավիճակը բարդանում էր նաև նրանով, որ քեմալականների՝ Զմյուռնիան լքելու քրիստոնյաներին տրված վերջնաժամկետը սեպտեմբերի 30-ն էր: Մինչ այդ՝ սեպտեմբերի 16-ին, հրապարակվել էր հրաման, ըստ որի 17-45 տարեկան բոլոր հայ և հույն տղամարդիկ համարվում էին ռազմագերի,

---

53 Քաղաքի հրկիզման կապակցությամբ 1924 թ. Լոնդոնում դատ է բացվում, որտեղ ականատես 42 հոգի վկայություն է տալիս՝ ապացուցելով, որ Զմյուռնիան միտումնավոր հրկիզել են թուրքերը: Վկաներից էր նաև հայազգի Արուսյակ Սիսլյանը: Մանրամասն տե՛ս Lou Ureneck, Smyrna, September 1922: *One American's Mission to Rescue Victims of the 20th Century's First Genocide* (New York: Ecco, 2016), 231: Թուրքերի կողմից Զմյուռնիայի հրկիզման վերաբերյալ տեղեկություններ է հաղորդում նաև ԱՄՆ հյուպատոս Ջորջ Հորթոնը: Տե՛ս Horton, The blight of Asia, 144-149:

54 Տոքթ. Կարապետ Խաչերեան, *Զմիւռնիական արկածներս* 1922-*ին*, կազմ. և թարգմ.՝ Դորա Սաքայեան (Մոնթրէալ, Arod books, 1995), 18:

55 Խաչերեան, *Զմիւռնիական արկածներս*, 20: Տե՛ս նաև՝ Lovejoy, *Certain Samaritans*, 142:

56 Խաչերեան, *Զմիւռնիական արկածներս*, 21:

57 Housepian Dobkin, *Smyrna 1922*, 189; Horton, *The Blight of Asia,* 153.

58 Զմյուռնայի կոտորածներում թուրքերի կողմից սպանված հայերի և հույների թիվը կազմում է շուրջ 100 000, իսկ Օսմանյան կայսրության ներքին շրջաններ աքսորվածների թիվը՝ մոտ 160 000. նրանցից շատերը անհետ կորել են: Այս մասին տե՛ս Milton, *Paradise Lost*, 372*:*

59 Նույն տեղում, 354:

60 Ureneck, *Smyrna,* 234.

և արգելվում էր նրանց ելքը Զմյուռնիայից. նրանք պետք է աքսորվեին Թուրքիայի ներքին շրջաններ:

Էսթեր Փոլ Լավջոյը՝ Զմյուռնիայի աղետի ականատես

Սեպտեմբերի 19-ին, երբ Լավջոյը «Դոչ» (Dotch) նավով[61] հասնում է Զմյուռնիայի նավահանգստի մատույցներին[62], քաղաքի 2/3-ը արդեն հրդեհից ոչնչացված էր (13 100 շինություն՝ բնակելի տներ, հիվանդանոցներ, դպրոցներ, եկեղեցիներ, ֆաբրիկաներ՝ ընդհանուր առմամբ՝ 250 միլիոն դոլար արժեքով[63]), իսկ թուրքական և փոքր հրեական թաղամասերը գրեթե անվնաս էին մնացել[64]:

Մոտենալով նավահանգստին՝ Լավջոյը նավից տեսնում է Էգեյան ծովում կանգնած ամերիկյան, բրիտանական, ֆրանսիական և իտալական ռազմանավեր, որոնք, պահպանելով չեզոքությունը, չէին միջամտում թուրքական բանակի կողմից իրագործվող կոտորածներին, Լավջոյի բնութագրմամբ՝ հոլոքոստին[65]: Աղետի նպաստամատույց կոմիտեն Զմյուռնիայում տեղակայվեց Ամերիկյան հյուպատոսարանի մոտ, որը գտնվում էր նավահանգստից ձախ:[66] Հյուպատոսարանի և Աղետի նպաստամատույց կոմիտե շենքերի վրա ծածանվում էին ամերիկյան դրոշներ, որոնք հուսահատ մարդկանց փրկության հույս էին ներշնչում: Շատ մայրեր իրենց և երեխաների ձեռքերին կապում էին կարմիր, սպիտակ և կապույտ գույներով կտորներ[67]: Այստեղ հանգրվանում է նաև Էսթեր Լավջոյը՝ որպես ԱՀԿ-ի ներկայացուցիչ: Նա Զմյուռնիայում մնում է մինչև սեպտեմբերի 29-ը, այսինքն՝ ընդամենը տասը օր ու այդ կարճ, բայց ողբերգական ժամանակահատվածն անվանում է «Էվակուացիայի շաբաթ»[68]: Քաղաքի այդ հատվածը համեմատաբար անվնաս էր մնացել: Աղետի նպաստամատույց կոմիտեն քաղաքի աղետյալ քրիստոնյա բնակիչների տարհանումը կազմակերպելու համար համագործակցում էր Հունաստանի կառավարության

61 Այդ նավը Կ.Պոլսում Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույցը վարձակալել էր Զմյուռնիայի աղետյալներին օգնություն հասցնելու և քրիստոնյաներին տարհանելու համար: Տե՛ս Ureneck, *Smyrna*, 352: Նավի անձնակազմը հույներից էր բաղկացած, բայց այն նավարկում էր Ռուսական կայսրության դրոշով, տե՛ս Lovejoy, *Certain Samaritans*, 133:

62 Ի դեպ, սա Լավջոյի առաջին այցը չէր Զմյուռնիա. 1904 թ. Երուսաղեմ ուխտագնացության գնալու ճանապարհին Էսթերն այցելել է Զմյուռնիա: Քաղաքն անջնջելի հետք է թողել նրա հիշողության մեջ: Նա գրում է. ««Արևելքի մետրոպոլիսը»» գերել էր իմ երևակայությունը ոչ միայն իր հիանալի նավահանգստով, լայն նավամատույցով, ծովեզերքի երկարությամբ մղոններով ձգվող հրապուրիչ շենքերով, բայց նաև նրա ռոմանտիկ կյանքով, անփոփոխ երիտասարդ և վաղ քրիստոնեական միություններով: Զմյուռիայի կրոնական պատմության մեջ ներշնչանք կար»: Տե՛ս Lovejoy, *Certain Samaritans,* 136-137:

63 Ureneck, *Smyrna*, 6.

64 Lovejoy, *Certain Samaritans*, 140; Ureneck, *Smyrna*, 6.

65 Նույն տեղում, 138-139:

66 Նույն տեղում, 141:

67 Նույն տեղում, 143-144:

68 Նույն տեղում, 141:

հետ[69]: Աղետի նպաստամատույց կոմիտեի միջնորդությամբ՝ հունական նավերը, առանց հունական բարձրացված դրոշների, իրավունք են ստանում մոտենալու նավահանգստին: Հունական կառավարությունը գրավոր երաշխավորագրերով, որ իրենց բեռնատար նավերը չեն առգրավվի թուրքերի կողմից, դրանք տրամադրում են կոմիտեին[70]. այդ նավերով մի քանի օրում Զմյուռնիայից պետք է տարհանվեին բազմահազար քրիստոնյաներ: Այս հարցում կարևոր ներդրում ունեցան նաև ամերիկացի և բրիտանացի նավաստիները:

Իր գրքում Լավջոյը վկայում է, որ Զմյուռնիայում ապրող բոլոր ամերիկացի կանայք սեպտեմբերի 13-ի գիշերը ԱՄՆ հյուպատոս Ջորջ Հորթոնի հետ լքել էին արդեն հրկիզվող քաղաքը՝ մեկնելով Հունաստան[71]: Նա գրում է. «Ավելի ուշ ես հասկացա, որ մեկ կամ մի քանի ամերիկացի բուժքույր նավերով եկան նպաստամատույց, բայց նրանք ցամաք չիջան: Միգուցե՛ նրանք սպասում էին վեսիկաների[72]: Ամեն դեպքում, ես միակ ամերիկացի կինն էի, ով ականատես եղավ Զմյուռնիայի տարհանման դաժան արարին 1922 թ. սեպտեմբերի վերջին շաբաթում» [73]:

Լավջոյն առանց ժամանակագրական խախտումների մանրամասն ներկայացնում է սեպտեմբերի 19-ից 29-ն ընկած ժամանակահատվածը՝ Զմյուռնիայում հումանիտար աղետի մանրամասները, գլխավորապես՝ նավահանգստում կատարվող իրադարձությունները, տարհանման կազմակերպման խնդիրները՝ իր բացահայտ հակակրական վերաբերմունքն արտահայտելով քեմալականների նկատմամբ, փոխարենը՝ ամենայն ակնածանքով խոսելով Օսմանյան կայսրության տարածքում ապրող հնագույն ազգերի՝ հայերի և հույների մասին:

Զմյուռնիայում նրա ժամանման ընթացքում շուրջ 300 000[74] մարդ ժողովվել էր նավահանգստի սալաքարերի վրա՝ մեծամասամբ հայեր ու հույներ: Մոտ տասն օր ու գիշեր հուսահատ մարդիկ կանգնած էին հերթում՝ ակնկալելով փրկություն ծովում գտնվող դաշնակիցների նավերից: Նրանց թիկունքում ծխացող քաղաքի ավերակներ էին, որտեղ վխտում էին հանցագործ հրոսակները, իսկ դիմացը՝ ծովը: Նա վկայում է, որ հերթում հավաքվածների մեջ շատ ավելի անգլախոս, բարձրագույն կրթություն ստացած մարդիկ կային, ավելին, քան ինքը տեսել էր Եվրոպայի փախստականների շրջանում[75]: Ամբոխի մեջ երբեմնի քաղաքաբնակ, ապահովված մադիկ, ըստ Լավջոյի, հայտնվել էին այնպիսի իրավիճակում, որն անգամ կենդանիներին հարիր

---

69 Lovejoy, *Certain Samaritans*, 141.

70 Նույն տեղում, 145:

71 Երբ թուրք զինվորները հրկիզում են Զմյուռնիան, ԱՄՆ հյուպատոս Ջորջ Հորթոնը ԱՄՆ քաղաքացիություն ունեցող շուրջ 300 քաղաքացիների հավաքում է Զմյուռնիայի թատրոնի շենքում, որտեղից նրանք ամերիկյան «Սիմսոն» հածանավով մեկնում են Հունաստան: Տե՛ս Horton, *The Blight of Asia*, 149:

72 *Vesika* (թուրք.՝ փաստաթուղթ), այս դեպքում՝ մուտքի թույլտվության փաստաթուղթ:

73 Lovejoy, *Certain Samaritans*, 142.

74 Lovejoy, *Certain Samaritans*, 142.

75 Նույն տեղում, 143:

չէ: Նրանք կեղտոտ էին, վախեցած ու անպաշտպան: Նա գրում է. «Օր օրի սարսափելի դեպքերը հաջորդում էին իրար: Երեխաները նավամատույցից ընկնում և ջրախեղդ էին լինում, երիտասարդ տղամարդիկ ինքնասպան էին լինում, ծերերը մահանում էին հյուծվածությունից, իսկ նավահանգստի վերջում, երբ միաժամանակ 2-3 նավ էր լցվում, երեխաներ էին կորչում, իսկ նրանց մայրերը վազում և մոլեռանդորեն գոռում էին՝ իրենց փոքրիկներին գտնելու համար, ու մեծագույն երջանկություն էր, երբ կորածները գտնվում էին»[76]:

Հերթի հրմշտոցի մեջ կային նաև հղի կանայք: Ինչպես նշել ենք, Լավջոյը մասնագիտությամբ մանկաբարձ-գինեկոլոգ էր: Այդ ծանր օրերին նա մի քանի անգամ ստիպված էր ծայրահեղ պայմաններում ծնունդ ընդունել: Նա գրում է. «Ամբոխի 3/4ը կանայք և երեխաներ էին. իսկ ես երբեք չէի տեսել երեխաներ գրկած այսքան շատ կանանց: Թվում էր, թե յուրաքանչյուր երկրորդ կին հղի է: Հրդեհը և իրավիճակը բազմաթիվ վաղաժամ ծննդաբերությունների պատճառ էին դարձել, և հազիվ պառկելու տեղ ունեցող նավահանգստում երեխաների մեծ մասը ծնվում էր առանց որևէ օգնության: Հինգ օրվա ընթացքում, ինչ ես այնտեղ էի, 200-ից ավելի այդպիսի ծննդաբերություն է պատահել»[77]: Բնականաբար, այդպիսի անմարդկային պայմաններում նորածին երեխաների ապրելու, փրկվելու հավանականությունը գրեթե զրոյական էր:

Աղետյալ քրիստոնյաների նավերով տարհանումը Զմյուռնիայից սկսվեց սեպտեմբերի 25-ին: Այդ օրը ութ նավ նավարկեց դեպի նավահագիստը[78], իսկ հաջորդ օրը՝ ևս 19 նավ[79]:

Սեպտեմբերի 29-ի գիշերը Լավջոյն ամերիկյան հածանավով լքեց Զմյուռնիան՝ իր հետ տանելով երբեմնի ծաղկուն քաղաքում կատարված սարսափելի մղձավանջը, որը, ինչպես ինքն է ասում, «անգամ Դանթեն չէր կարող նկարագրել Դժոխքում»[80]:

Ըստ Լավջոյի՝ Զմյուռնիան արդեն լքել էր 250 000 մարդ, իսկ մոտ 50 000-ը դեռ այնտեղ էին: Նա շտապում էր ԱՄՆ, որպեսզի հազարավոր կարիքավոր և հիվանդ փախստականների օգնության համար նյութական միջոցներ հայթայթի:[81] Փախստականների մի մասը նահանջող հույն զինվորների հետ ապաստանեց հունական կղզիներում, իսկ նրանց մեծագույն մասը՝ մոտ 200 000 մարդ, Միտիլինիում (Լեսբոս կղզու ամենամեծ քաղաքը) և Քիոս կղզում[82]:

Հունաստանում ԱԿՀ-ն ակտիվ գործունեություն ծավալեց՝ բժշկական օգնություն և սնունդ հատկացնելով հազարավոր անօթևան գաղթականների, որոնցից շատերը տառապում էին այդ ժամակահատվածում տարածված տարբեր վարակիչ հի-

76 Նույն տեղում, 162:

77 *The Armenian Genocide*, 1796.

78 Lovejoy, *Certain Samaritans*, 149.

79 Նույն տեղում, 151:

80 Նույն տեղում:

81 Նույն տեղում, 167:

82 Նույն տեղում, 171:

վանդություններով, ոմանք լուրջ առողջական խնդիրներ ունեին սովահարության, թերսնվածության հետևանքով, իսկ սեռական բռնության ենթարկված բազմաթիվ կանայք (այդ թվում՝ անչափահաս աղջիներ) տառապում էին տարբեր սեռական վարակիչ հիվանդություններով[83]: Հունաստանի տարբեր բնակավայրերում կազմակերպվեցին հոսպիտալային ծառայություններ, որտեղ աշխատում էին ԱԿՀ-ի աշխատակիցները՝ Հունաստանի կառավարության հետ համատեղ:

Ի երախտագիտություն նրա մարդասիրական գործունեության, մասնավորապես՝ հույն գաղթականների հանդեպ ցուցաբերած, Հունաստանի Նիկեա քաղաքում տեղադրվել է Էսթեր Փոլ Լավջոյի կիսանդրին:

Էսթեր Փոլ Լավջոյն ապրեց համեստ կյանքով՝ զօրուգիշեր աշխատելով: Մահվանից 4 տարի առաջ նա ճանապարհորդում է դեպի Ալյասկա, Տոկիո, Հոնկոնգ և Մանիլա: Իր հարազատ կրթօջախում՝ Օրեգոնի բժշկական դպրոցում, նա հիմնադրել է «Փոլ» հիշատակի կրթական հիմնադրամը՝ ի պատիվ իր առաջին ամուսնու և որդու:

Լավջոյը մահացել է 97 տարեկանում՝ երկար և հաջողակ կարիերայից հետո[84]:

Լավջոյի անձնական արխիվը՝ բաղկացած նամակներից, զեկույցներից, լուսանկարներից և այլ փաստաթղթերից, գտնվում է Օրեգոնի համալսարանում[85]: Իր երկարատև և արդյունավետ մասնագիտական գործունեության ընթացքում նա գրել է չորս մենագրություն, որոնցից առաջինը «Լավ հարևանի տունը» (Esther Pohl Lovejoy, *The House of the Good Neighbor* (New York: The MacMillan company, 1919) գրքում ներկայացնում է իր փորձառությունն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Երկրորդը՝ «Իրական սամարացիներ», գրքի մասին արդեն անդրադարձել ենք սույն հոդվածում: Երրորդ գրքում՝ «Կին բժիշկներն ու վիրաբույժները» (Esther Pohl Lovejoy, *Women Physicians and Surgeons: National and International Organizations* (Livingston Press, 1939), հեղինակը ներկայացնում է «Ամերիկացի կանանց հոսպիտալներ» կազմակերպության գործունեությունը՝ ընդգրկելով նամակներ, զեկուցագրեր, զեկույցներ: Նրա վերջին գործը՝ «Աշխարհի կին բժիշկները» (Esther Pohl Lovejoy, *Women Doctors of the World* (Macmillan, 1957) գիրքն է, որտեղ անդրադառնում է ամբողջ աշխարհում կին բժիշկների գործունեությանը:

Լավջոյը Զմյուռնիայում քրիստոնյաների հանդեպ կատարած ոճրագործության մեջ մեղադրում է նաև իբր չեզոքություն պահած քաղաքակիթ աշխարհին: «Նյու Յորք Թայմս» թերթում տպագրված իր հոդվածում նա գրում է. «Զմյուռնիայի սարսափը երևակայության և բառերի ուժի պատկերացումից վեր է: Սա մի հանցագործություն է, որի համար ողջ աշխարհն է պատասխանատու, քաղաքակիրթ տարիներին չունենալով որոշ միջոցներ՝ կանխարգելելու այնպիսի հրամանները, որոնք կատարվեցին:

83 ԱԿՀ-ի Հունաստանում ծավալած գործունեության մասին տե՛ս Lovejoy, *Certain Samaritans*, 171-302:

84 "Esther Pohl Lovejoy papers", http://centuryofaction.org/index.php/main_site/Collections/esther_pohl_lovejoy_papers, դիտվել է՝ 09.08.2022:

85 "Esther Pohl Lovejoy papers, 1870-1995," https://archiveswest.orbiscascade.org/ark:/80444/xv239989, դիտվել է՝ 09.08.2022:

Սա աշխարհի համար հանցագործություն է. կողքի կանգնած՝ [նա] չեզոքություն է պահպանել և թույլ տվել 200 000 կնոջ դեմ այս անարգանքը»[86]:

Այսպիսով, ամերիկացի բժիշկ, ԱԿՀ ծառայության երկարամյա ղեկավար, ԲԿՄԱ հիմնադիր Էսթեր Լավջոյը Զմյուռնիայի աղետի օրերին կատարեց ոչ միայն բժշկի իր մասնագիտական պարտքը՝ այդ ընթացքում լինելով քաղաքում գործող երեք բժիկներից մեկը, այլև «էվակուացիայի շաբաթվա» ընթացքում թողեց ականատեսի արժեքավոր վկայություններ, որոնք հատվածաբար տպագրվեցին նախ ժամանակի ամերիկյան մամուլում (The New York Times, The Washington Post), ապա՝ նրա «Իրական սամարացիներ» գիրքում: Կարևոր է նշել, որ Լավջոյը տալիս է դեպքերի (նաև մասնավոր) մանրակրկիտ նկարագրություն՝ չթաքցնելով իր դժգոհությունը, որոշ դեպքերում անհանդուրժողականությունը քեմալականների ոճրագործությունների, քրիստոնյա բնակչության դեմ զինվորական ղեկավարության՝ Մուսթաֆա Քեմալի կողմից ուղղորդվող հանցագործությունների վերաբերյալ: Լավջոյը Զմյուռնի-այի աղետը ներկայացնում է «Հոլոքոստը Զմյուռնիայում» եզրույթով: Նա նշում է, որ «Զմյուռնիայի Հոլոքոստը սկզբնավորում է Թուրքիայի բոլոր մասերից քրիստոնյա բնակչության ելքը» [87]:

Զմյուռնիան սեպտեմբերի 30-ին գրեթե ամբողջովին զրկվում է քաղաքի մեծամասնությունը կազմող հայ և հույն ազգաբնակչությունից: Զմյուռնիայի աղետը, ըստ էության, Հայոց ցեղասպանության վերջին արարն է, որն իրագործվեց Մուսթաֆա Քեմալի հրամանով:

ESTHER POHL LOVEJOY: THE EXPERIENCE OF AN AMERICAN WOMAN PHYSICIAN DURING THE DISASTER OF SMYRNA

Gohar V. Khanumyan
Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

During the Armenian Genocide, physicians played a major role to rescue Armenians who were on the verge of annihilation. Some of them arrived in the Ottoman Empire to save the civilian population from humanitarian disaster. Among them was Esther Paul Lovejoy, a successful physician from the USA, a suffragist. After WWI, Lovejoy, as the head of the American Women's Hospital Service and her like-minded colleagues organized extensive medical relief in France, in the Balkans, in the Ottoman Empire, and in Armenia.
Adhering to her Hippocratic Oath, Lovejoy rushed to Smyrna to rescue the besieged Christians in September, 1922. During her 10 days in Smyrna, Lovejoy, being the only

86 *The Armenian Genocide* 1797.

87 Lovejoy, *Certain Samaritans*, 178.

American woman and one of the 3 doctors working in the city, provided medical care in extreme conditions and participated in the evacuation of about 250,000 Armenians and Greeks. She wrote and published her eyewitness accounts of the Smyrna disaster in her book, "Certain Samaritans" in 1927.
Key words: Smyrna disaster, Armenian Genocide, American Women's Hospitals, American Medical Women National Association, Greco-Turkish War.

ЭСТЕР ПОЛ ЛАВДЖОЙ: ОПЫТ АМЕРИКАНКИ-ВРАЧА ВО ВРЕМЯ КАТАСТРОФЫ СМИРНЫ

Гоар В. Ханумян
Фонд "Музей-институт Геноцида армян," Армения

РЕЗЮМЕ

Во время Геноцида (1915-1923) большую роль в спасении армян, оказавшихся на грани уничтожения, сыграли врачи. Некоторые из них прибыли в Османскую империю для спасения мирного населения оказавшихся в условиях гуманитарной катастрофы. Одной из них была Эстер Пол Лавджой, успешный врач в США, **суфражи**стка. После Первой мировой войны она, в качестве главы Американской службы женских госпиталей и ее коллеги-единомышленники организовали систему оказания медицинской помощи во Франции, на Балканах, в Османской империи и в Армении.
Придерживаясь клятвы Гиппократа, Лавджой в сентябре 1922 года бросилась в Смирну, чтобы помочь осажденному населению – около 250 000 армян и греков. За 10 дней пребывания в Смирне Лавджой, будучи единственной американкой и одним из 3-х врачей, работающих в городе, оказала медицинскую помощь в экстремальных условиях и участвовала в эвакуации около 250 000 христиан. Она, очевидец катастрофы в Смирне, в 1927 г. написала и издала книгу "Настоящие самаритяне".

Ключевые слова: катастрофа в Смирне, Геноцид армян, Американские женские госпитали, Национальная ассоциация американских женщин-врачей, греко-турецкая война.

REFERENCES

Vardanyan, Gevorg. *Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և Փոքրասիական աղետը* (1914-1923 թթ.) [The Greek Population in the Ottoman Empire and the Asia Minor Disaster (1914-1923)]. Yerevan: Armenian Genocide Museum-Institute, 2012;

Safrastyan, Ruben, Ruben Melqonyan, Artur Dumanyan, Vahram Ter-Matevosyan, Hakob Chaqryan and Anush Hovhannisyan. *Թուրքիայի հանրապետության պատմություն, բուհական դասագիրք* [History of the Republic of Turkey: University Textbook]. Yerevan: YSU publication, 2014;

Gasparyan, Karen. *ԱՄՆ արտաքին քաղաքականությունը Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին. 1914-1917 թթ.* [U.S. Foreign Policy During World War I: 1914-1917]. Yerevan: YSU publication, 2016;

Dr. Khacheryan, Karapet. *Զմիւռնիական արկածներս 1922-ին, տպագրութեան պատր.՝ Դորա Սաքայեան* [My Smyrna Ordeal of 1922, ed. and trans. Dora Sakayan]. Montréal, Arod Books, 1995.

Հեղինակի մասին
About the author
Об авторе

Գոհար Վ. Խանումյան, պատմաբան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գլխավոր ֆոնդապահ, Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի կրտսեր գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտը՝ որբահավաք աշխատանքներն Օսմանյան կայսրությունում, հայկական և օտարերկրյա նպաստամատույց կազմակերպություններ:

Էլ. փոստի հասցե՝ goharkhanumian@gmail.com

Gohar V. Khanumyan, Historian, chief-registrar at the Armenian Genocide Museum-Institute Foundation, junior researcher at the Department of Research of the Armenian Genocide Sources.

Research fields - Orphan collecting efforts in the Ottoman empire, Armenian and foreign relief organizations.

E-mail: goharkhanumian@gmail.com

Гоар Ханумян, историк, главный хранитель музейных фондов Фонда «Музей-институт Геноцида армян», младший научный сотрудник отдела исследования источников геноцида армян.

Область исследовании-спасение сирот в Османской империи, армянские и зарубежные благотворительные организации.

Эл. Почта: goharkhanumian@gmail.com

ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻՑ ՄԻՏԻԼԻՆԻ. ՄԿՐՏԻՉ ԱՎԵՏՅԱՆԻ ՎԵՐԱՊՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Թեհմինե Ռ. Մարտոյան
«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Ականատես-վերապրող Մկրտիչ Ավետյանի հուշագրությունը Զմյուռնիայի հայերի խաղաղ կյանքի, նրանց դեմ թշնամանքի արմատավորման, բռնության և տարագրության մասին է: Առաջին աշխարհամարտի սկզբին Մկրտիչ Ավետյանին զինվորագրել և որպես արհեստավոր ուղարկել են Կ.Պոլիս:
Ավետյանը, տեսնելով, որ թուրքերի տրամադրությունները հայերի հանդեպ կտրուկ վատանում են, որոշում է ընտանիքին Դենիզլիից[1] տեղափոխել Զմյուռնիա: Ապա, որոշ ժամանակ անց, Մկրտիչ Ավետյանն իր և 20 ուրիշ ընտանիքների հետ 190 օսմանյան ոսկու դիմաց Զմյուռնիայից հասնում է Միտիլինի[2]: Վավերագրողն իր ձեռագիր-հուշը գրի է առել Հալեպում 1965 թ.՝ 93 տարեկան հասակում:

Բանալի բառեր՝ Զմյուռնիա, Դենիզլի, Կորդելիո, հուշագրություն, Մեսրոպյան վարժարան, Հռիփսիմյանց վարժարան, Առաջին աշխարհամարտ, քեմալական բանակ, հունական բանակ, Մուսթաֆա Քեմալ, Ռահմի բեյ, Միտիլինի:

Երախտագիտության խոսք՝ «Յուշեր. ընտանիքի մը հայապահպանման կեանքի այլազան դժնդակ պայմանները» ձեռագիր-հուշը հոդվածի շրջանակում հրատարակության պատրաստելը հնարավոր է դարձել Մկրտիչ Ավետյանի ծոռան՝ Ճորճ Լևոնի Պալըգճյանի ջանքերի շնորհիվ: Շնորհակալ եմ արևմտահայերենի խմբագիր Ավետ Ափոշյանին բարեխիղճ աշխատանքի և անհրաժեշտ խորհրդատվության համար:

Հոդվածը ներկայացվել է՝ 13.05.2022: Ընդունվել է տպագրության՝ 26.10.2022:
The article was submitted on 13.05.2022 and accepted for publication on 26.10.2022.
Статья поступила 13.05.2022 и была принята к публикации 26.10.2022.

Ինչպես հղել՝ Թեհմինե Ռ. Մարտոյան, «Զմյուռնիայից Միտիլինի. Մկրտիչ Ավետյանի վերապրման պատմությունը», *Ցեղասպանագիտական հանդես* 10, no. 2 (2022), 90-108:
How to cite: Tehmine R. Martoyan, “From Smyrna to Mytilene: Survival Story of Mkrtich Avetyan,” *Tseghaspanagitakan handes* 10, no. 2 (2022): 90-108.
Как ссылаться: Тегмине Р. Мартоян, “От Смирны до Митилини. История жизни Мкртыча Аветяна,” *Цехаспанагитакан андес* 10, no. 2 (2021): 90-108.

---

1 *Դենիզլի*, արվարձան Զմյուռնիայում:

2 *Միտիլինի* (հուն.՝ Μυτιλήνη), քաղաք Հունաստանում: Էգեյան ծովի Լեսբոս կղզու ամենամեծ քաղաքը:

https://doi.org/10.51442/jgs.0029

Ներածություն

Մկրտիչ Ավետյանը (1872-1972) ծնվել է Դենիզլիում[3], երկար տարիներ զբաղվել կոշկակարությամբ: 1908 թ. ավարտել է Բրուսայի (Բուրսա)[4] պետական շերամաբուծական վարժարանը[5], մի քանի տարի անց ընտրվել թաղային երեսփոխան:

Ավետյանի ծննդավայր Դենիզլին մեծ նշանակություն է ունեցել վավերագրողի կյանքում: Ձեռագիր հուշագրության հենց սկզբնամասում կարևորում է իր՝ դենիզլիցի լինելու փաստը. «Ես Իզմիրի նահանգէն տէնիզլիցի Մկրտիչ Աւետեանն եմ… կօշկակար եւ խանութի տէր, ամուսնացած, զաւակի մը տէր, քաղաքին մէջ 2 թթաստան պարտէզներ հասցնելով՝ փափաքեցայ տիրանալ անոր մասնագիտութեան… Տինիզլին Իզմիրէն երկաթուղիով 8 ժամուայ հեռաւորութեան վրայ կը գտնուի: Կը բնակէին 150 հայ ընտանիքներ, յոյներ ալ կային, իսկ թուրքեր գերազանց մեծամասնութեամբ եւ սակայն փոքր Ածուն (հաւկիթը), որ օգտակար սնունդ մըն է մարդուս, այնպէս ալ հայը նմին զնման միջավայրում կը փնտռուէր ամէն մարզերուն մէջ, կրնամ ըսել՝ երկրին հոտաւետ ծաղիկն էր՝ ամենուն հաճելի»[6]:

Հուշագրության մեջ կարևոր անդրադարձ է արվում վավերագրողի կրթական կյանքի որոշ փուլերին: Բրուսա հասնելու դժվարությունների և շերամապահության վարժարանում ուսանելու մասին է Ավետյանի հետևյալ գրառումը. «1906 Կարմիր Սուլթանի օրով՝ հայերուս ծովային ճամբորդութիւն արգիլուած էր, դժնդակ պայմաններու մէջ ցամաքի եւ երկաթուղիի ճամբով հասայ Էսկի Շեհիր, հոնկէ նոյնպէս ցամաք… հասայ Պրուսա եւ մտայ Թորգոմեանի շերամապահութեան դպրոցը: 2 տարի ուսանելէ ետք շրջանաւարտ եղայ: Պոլսոյ նաւով վերադարձայ քաղաք. նոյն տարին Կարմիր Սուլթանը գահընկեց եղաւ: Հայերուն ծովային ճամբորդութիւնը ազատ էր: Քաղաքին մէջ կար հրեայ առեւտրական մը Խայըմ Արտիթի անունով հում

---

3 Դենիզլիի հայերը ներգաղթել են 17-րդ դարում Իրանից: Նախապես ցրված լինելով քաղաքի տարբեր մասերում՝ ստեղծել են իրենց թաղամասը՝ Վերի և Վարի թաղերով, որոնց կենտրոնում կառուցել են եկեղեցի ու հայկական դպրոց: Ծերերը խոսել են բացառապես հայերեն, իսկ երիտասարդները՝ հայերեն և թուրքերեն: Դենիզլիի գերեզմանոցի տապանաքարերից մեկի վրա պահպանվել է արձանագրություն՝ «Զմիւռնիացի Խաչատուր որդի Յովհաննու Տէր Խաչատուրեան, ծաղկեալ ձրիք եւ շնորհօք, ի հասակի երեսուն եւ վեց ամաց, աստ ընդ օտար աստեղօք, հանգեաւ ի Քրիստոս ի 29 Յուլիս 1878»: Տե՛ս *Մեր Զմիւռնիան* (Նիւ Եորք, Զմիւռնահայ միութիւն, 1961), 181:

4 *Բրուսա*, մինչ XX դարը տարածված էր քաղաքի հունական անվանումը՝ *Պրուսա* (հուն.՝ Προύσα), 1919-1922 թթ. Հույն-թուրքական պատերազմի ընթացքում հունական բանակն ազատագրում է քաղաքը, սակայն 1922 թ. վերջին այն անցնում է Թուրքիային: 1923 թ. Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո Բրուսան (թուրք.՝ Bursa) դառնում է արդյունաբերական խոշոր կենտրոն. գտնվում է Թուրքիայի հյուսիսարևմտյան մասում:

5 Օսմանյան կայսրության շերամաբուծության և մետաքսի արտադրության զարգացմանը մեծ զարկ է տվել Գևորգ Թորգոմյանը. 1888 թ. նա Բրուսայում հիմնում է շերամաբուծական վարժարան: 33 տարի շարունակ Թորգոմյանը վարում է վարժարանի տնօրենի և ուսուցչապետի պաշտոնը: Այս ուսումնական հաստատության շնորհիվ գիտական հիմքի վրա է դրվում շերամաբուծությունը: Տե՛ս Անահիտ Աստոյան, *Բուրսայի նահանգի հայության տնտեսական վիճակը և նյութական կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին* (Երևան, Գիտություն, 2017), 27:

6 Մկրտիչ Աւետեան, *Յուշեր. ընտանիքի մը հայապահպանման կեանքի այլազան դժնդակ պայմանները*, ՀՑԹԻ նախնական ֆոնդ, թ. 231:

եւ եփած կաշուի վաճառական. միանգամայն կը զբաղէր մետաքսի առ ու ծախով: Փափաքեցաւ ընկերանալ ինձի հետ, համաձայնելով կը գործէինք այս 3 տեսակի ճիւղերուն հետեւելով»[7]:

Ձեռագիր հուշագրության սակավաթիվ էջերում, թվում է, ծավալուն տեղեկություն չի հաղորդվում, սակայն առանցքային թեմաների համապատկերում պայմանականորեն ուրվագծել ենք հետևյալ բաժինները.

ա. Զմյուռնիայի բնակչությունը՝ համաձայն Ավետյանի հուշագրության,
բ. Զմյուռնիաբնակ հայերի ներգրավվածությունը դատական համակարգում,
գ. Վաճառական դասը Զմյուռնիայում,
դ. Զմյուռնիայի հայերի գիտակրթական ձեռքբերումները,
ե. Երիտթուրքական հեղաշրջումն ու զմյուռնիաբնակ հայերի դրությունը,
զ. Մկրտիչ Ավետյանը՝ օսմանյան բանակի զինվոր,
է. Մասնակի տեղահանություններ Զմյուռնիայում,
ը. Բնաջնջում, հրկիզում և տարագրություն,
թ. Քաղաքական իրադրությունը և Ավետյանի դիրքորոշումը:

Զմյուռնիայի հայերը

Անդրադառնալով Զմյուռնիայում հայերի նախնական բնակությանը՝ նշենք, որ քաղաքի բարձրադիր վայրում հայերը կառուցում են Սբ Հովակիմ-Աննայի մատուռը և մի գերեզմանատուն՝ թուրքական թաղամասի մոտ: Հայտնի է, սակայն, որ հայերը թուրք բնակչության անբարյացակամ վերաբերմունքի պատճառով 1500-ականներին տեղափոխվում են Հայնոց անունը կրող մեկ այլ թաղամաս[8]: Ավետյանը, կարևորելով Զմյուռնիայի բազմամշակույթ բնակչության տեղաբաշխվածության մանրամասները, հաղորդում է. «Իզմիրի ժողովուրդը չորս ազգերէ բաղկացեալ էր. յոյները մեծամասնութիւն կը կազմէին՝ ներքնապէս թէ արտաքին, տիրող լեզուն յունարէնն էր, որու համար թուրքերը «կեաւուր» Իզմիր կ'անուանէին. երկրորդը՝ թուրքերը ներքնապէս, առանց արտաքինը հաշուելու. երրորդը՝ հայերն էին, իսկ չորրորդը՝ հրեաները: Կային փոքր ուրիշ ազգեր եւս: Իմ կարծիքով, հայերը հարիւր հազարէ աւելի պէտք է ըլլան՝ ըստ երկրին Ապահովութեան պետին յայտարարութեան: Հակառակ յոյներու մեծամասնութեան, հայերու հսկողութիւնը պետական աջալրջութեան տեղը կը գրաւէր թէ՛ հրապարակային, եւ թէ՛ ազգային հարցերուն մէջ, հայը կ'ուզէր հպարտ ապրիլ իր բնածին ուշիմութեամբ եւ քաջութեամբ …»[9]:

---

7 Աւետեան, *Յուշեր*, 4:

8 Հայնոց թաղամասը բաժանված էր լայն, կանոնավոր ու մաքուր փողոցների: Հայնոցում էին տեղակայված Առաջնորդարանը, եկեղեցիներ, Մխիթարյան վարժարանը, բողոքականների ժողովատեղին, դպրոցներ, ազգային հիվանդանոցը, հայ ընթերցատունը, ազգային մշակութային հաստատությունները, գերեզմանատունը և այլն: Տե՛ս Ասյա Գրիգորյան, Վաչիկ Բրուտյան, *Զմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր (19-րդ դարի սկզբից մինչև 1922 թ.)* (Երևան, Իրավունք, 2007), 11: Ծատուր Աղայան, Հայերը՝ Թուրքիայում (Երևան, Հայաստան, 1994), 10, 43-45:

9 Աւետեան, *Յուշեր*, 12:

Զմյուռնիաբնակ հայերի ներգրավվածությունը դատական համակարգում

Մկրտիչ Ավետյանի հուշագրությունը նկատելիորեն տարբերվում է սեփական ժողովրդի հանդեպ վավերագրողի սիրո ու գնահատանքի արտահայտությամբ. հուշագրության մեջ Ավետյանն առանձնակի հիացմունքով է անդրադառնում այն ոլորտներին, որտեղ զմյուռնիաբնակ հայերը զգալի դերակատարում են ունեցել: Դատական համակարգում Դենիզլիի հայերի մասին է Ավետյանի հետևյալ վկայությունը. «Դատարանին մէջ կային պաշտօնական հայ աղաներ եւ դատաւոր՝ Գրիգոր էֆենտի Փարազամեան ագշեհիրցի, մեճլիսի իտարէին[10] մէջ միութեսառիֆի[11] կողքին նստած Օննիկ Փեշթիմալճեան անունով աղայ մը, որ շաբաթը երկու անգամ ժողով կը գումարէին երկրին կարեւոր խնդիրներուն մասին: Կրնամ ըսել՝ եթէ Փեշթիմալճեանը բացակայ ըլլար այդ ժողովին, այն օրուան լուծելիք խնդիրները առանց որոշում ստանալու կը յետաձգուէին՝ հակառակ իսլամ եւ յոյն աղաներուն ներկայ ըլլալուն. կար թաղապետութեան մէջ աղայ մը եւ ուրիշ պաշտօնեաներ ունէր հայ փաստաբաններ եւ պետական պաշտօնեայ հայ գրագիրներ»[12]:

Մկրտիչ Ավետյանն անդրադառնում է նաև բնակչության վաճառական դասին, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու Զմյուռնիայի համայնքային կյանքին բնորոշ կողմերից մեկի մասին:

Վաճառական դասը Զմյուռնիայում

Զմյուռնիայի հայերը վաճառականի բնատուր խելքի և ընդունակության շնորհիվ մեծ հռչակ էին վայելում ոչ միայն քաղաքում, այլև նրա սահմաններից դուրս. 17-րդ դարում Զմյուռնիան Իրանից և Եվրոպայից ներկրվող ապրանքների շտեմարան էր: Հայ վաճառականներն իրենց ապրանքները Փոքր Ասիայից և Իրանից ուղտերի քարավաններով բերում էին Զմյուռնիա և հոլանդական նավերով փոխադրում Եվրոպա՝ Վենետիկ, Մարսել, Հոլանդիա[13]:

17-19-րդ դդ. Զմյուռնիայի հայ, հույն և հրեա վաճառականները գերիշխող դիրքեր ունեին Այդընի, Ալաշեհիրի, Մանիսայի և Էգեյան ծովի առափնյա շրջաններում ու բավարարում էին ոչ միայն տեղական, այլև եվրոպական արտադրության հումքի պահանջարկն այդ վայրերում, խթանում գյուղատնտեսական արտադրության զարգացումն Օսմանյան պետության մեջ[14]: Ավետյանը, անդրադառնալով առևտրում հայերի ներգրավվածությանը, գրում է. «Առեւտրական շրջանակը հայերուն գրաւման տակ կը գտնուէր. երեք մեծ մանիֆաթուրայի[15] մեծ մթերանոց ունեցող հայեր կային, իսկ արհեստաւորները հայ եւ յոյներ էին[16],– ապա մեկ այլ հատվածում

10 *Մեճլիսի իտարէ* (թուրք.՝ Meclis-i idare), կառավարման խորհուրդ:

11 *Մութասարրֆ* (թուրք.՝ mutasarrıf), վարչական տարածքի կառավարիչ պաշտոնյա, գավառապետ:

12 Աւետեան, *Յուշեր*, 1-2:

13 Հրաչյա Աճառյան, *Հայ գաղթականության պատմություն* (Երևան, Զանգակ, 2002), 551:

14 Նույն տեղում, 196:

15 *Մանիֆաթուրա* (մանուֆակտուրա), աշխատանքի բաժանման վրա հիմնված ձեռնարկություն:

16 Աւետեան, *Յուշեր*, 9:

հավելում է,– Իզմիրը առեւտրական տեսակէտէն երեք լայնածաւալ նահանգներու բաց դուռն էր: Մանիֆաթուրայի սպառումը հայ վաճառականներու հսկողութեան ներքեւ կ'ընթանար: Կային 2 հայ վաճառականներու մեծ մթերումներ, նաեւ վերջին արդիականութեամբ շինուած մեծ վաճառատուներ, որոնց մէջ մտնելէ յետոյ ելքը դժուարին կը թուէր մտնողին: Սիվրի Հիսարլեան եւ Ազնաւորեան, Սպարդալեան, Իփլիքճեան, Կոճամանեան եւ Անտոնեան, Պաքըրճեան, Եսայեան, Իպրանոսեան մանիֆաթուրայի մեծ վաճառատուներ էին, որոնց մէջ մարդ կը կորսնցնէր իր ելքի դուռը: Կար վերէն վար մեծ շուկայ մը Արաբեան անունով»[17]:

Զմյուռնիայի հայերի գիտակրթական ձեռքբերումները

Զմյուռնիայի հայերը գիտակրթական, գիտահիրատարակչական, մշակութային, արհեստագործական կարևոր գործունեություն են ծավալել: Բազում են այն օրինակները, որոնք վկայում են նրանց հասարակական, կրթական, մտավոր կյանքի զարգացվածության մասին: Գրեթե բոլոր հայերը տիրապետում էին թուրքերենին, շատերը՝ հունարենին, իսկ վերնախավը գիտեր ֆրանսերեն, իտալերեն, անգլերեն[18]: Տեղի հայ բնակչությունը դարերի ընթացքում ձեռք էր բերել մշակութային ուրույն դիմագիծ: Հայտնի դպրոցներից Մեսրոպյանի և Հռիփսիմյանցի շրջանավարտներից շատերը (Ստեփան Ոսկանյան, Գալուստ Կոստանդյան, Գրիգոր Չիլինկիրյան, Մարկոս Աղաբեկյան, Մատթեոս Մամուրյան, Մեսրոպ և Գրիգոր Նուպարյաններ, Մսեր և Գրիգոր Տետեյան եղբայրներ և այլք) հետագայում դառնում են հասարակական, քաղաքական, մշակութային և հոգևոր գործիչներ:

Ավետյանը, կարևորելով Զմյուռնիայի կրթական կյանքի առանձնահատկությունները, գրում է. «Իզմիրի մէջ, բացի հայերու մասնաւոր դպրոցներէն, կար Մեսրոպեան երկրորդական Ազգային վարժարան մը, որուն տնօրէնը Զաքար Զաքարեանն էր: Նաեւ Աղջկանց Հռիփսիմեանց վարժարան՝ իր մանկապարտէզով, Պոյաճեան անուան տակ կար գիշերօթիկ վարժարան մը՝ արուարձաններէն եկած տղայոց համար: Ունէր Ամերիկեան երկսեռ քոլեժ մը Փարատիսոյի մէջ, ուր կը յաճախէին շատ մը հայերու զաւակներ»[19]:

Եկեղեցաշինությունը հայ գաղթաշխարհի պատմության մեջ հայապահպանության անհրաժեշտ պայման և նախադրյալ է եղել: Զմյուռնիայի եկեղեցիների պատմությունը մեծապես նպաստում է գաղթավայրի պատմության ճշգրիտ վերարտադրությանը,

---

17 Ավետյանը, ներկայացնելով Զմյուռնիայի հայ վաճառականների գործունեությունը, ընթերցողին է փոխանցում նրանց հետագա ճակատագրի մանրամասները. «Այս մարդիկը Իզմիրի Քեմալի գրաւման ժամանակ վաճառատուները հրկիզուելով՝ աքսորուեցան Իզմիրէն հեռու վայրեր, ուր հողատէրերու մօտ վասն աւուր հացի աշխատեցան եւ ուրիշներ ճամբու շինութեան վրայ քարեր կոտրելով փճացան: Սոյն տեղեկութիւնս ինձի յայտնող ուշակցի Միհրան էֆենտի Եաքուպեանն է, որ մազապուրծ ազատած է ուշակցի իր թուրք բարեկամի մը միջնորդութեամբ, Աթէնք եկած էր մերկ վիճակի մէջ: Ասիկա փոքր միջադէպ մըն է՝ նայած Իզմիրի հայութեան ալեկոծ եւ դառն սպառնալիքներու դէմ», 10:

18 *Armenian Smyrna/Izmir: The Aegean Communities*, ed. Richard Hovannisian (Costa Mesa, California: Mazda Publishers, 2012), 2-3.

19 Աւետեան, *Յուշեր*, 9:

անգամ հանդես գալիս իբրև նշանախեց՝ հայ համայնքի նկարագիրն ու պատմության փուլերը վերհանելու և բնութագրելու տեսակետից[20]:

Զմյուռնիայում կառուցված եկեղեցիների մասին Ավետյանը հաղորդում է. «Իզմիրի մէջ կար երկու եկեղեցի. մին նշանաւոր Սուրբ Ստեփանոսը[21]՝ իր անառիկ բերդովը պաշարուած, իսկ միւսը՝ Լուսաւորիչ եկեղեցին, որ շինած էին եղբայրք Սպարդալեաններ իրենց ծախքով, վարը եկեղեցի, վերը՝ աղքատաց համար հիւանդանոց: Եկեղեցւոյ մուտքին կը փայլէին եղբայրք Սպարդալեաններու դէմ դիմաց երկու խոշոր արձանները»[22]:

Ավետյանն անուշադրության չի մատնում նաև գիտահրատարակչական ոլորտը. անդրադառնալով Զմյուռնիայում հրատարակվող թերթերին՝ գրում է. «Հրապարակին վրայ կար Արեւելեան մամուլ, Կաւրոշ օրաթերթեր, Բժիշկ ամսաթերթ եւ այլն…»[23]:

Գիտակրթական կյանքի համապատկերում հուշագրողն առանձնակի հետաքրքրությամբ անցում է կատարում բժշկագիտության ոլորտին: Այսպես՝ «Հայերը ունէին ազգին տրամագլխով դեղարան, որու դեղագործը Թորոս էֆենտի Օտապաշեան կ'աշխատէր թոշակով, կար նաեւ յոյն դեղարան մը: Վերջին տարիներուն ունեցանք հայ բժիշկ Գրիգոր էֆենտի Մնացականեան անունով քիմիագէտ դեղագործ մը Գէորգ Տէր-Գալուստեան անունով, նաեւ եղբայրը՝ Աբգար Տէր-Գալուստեան»[24]: Ապա ավելացնում է. «Կային շատ մը բժիշկներ, որոնց մէջ նշանաւոր են բժիշկ օփերաթոր Սպարթալեանը՝ իր հիւանդանոցով, բժիշկ Ճելէպեան՝ մասնագէտ ներքին հիւանդութեան, նոյնպէս Կոստանեան եւ Փաշապէզեան: Թաղապետութեան մէջ կային շատ մը հայ բժիշկներ, նաեւ դեղագործներ»[25]:

Հուշագրողը ներկայացնում է նաև անասնաբուժության ոլորտում հայազգի մասնագետներին. «Իզմիրի նահանգին Անասնաբուժութեան ընդհանուր քննիչը հայ մըն էր՝ Պայթար Արթին էֆենտի, կուսակալներ Սայիթ եւ Ռահմի փաշաներուն աջ բազուկն էր, որ Քեմալի կողմէ գրաւման Իզմիրի Սովուկ քոյուի մէջ իր մաքսային բժիշկ քիմիագէտ Գէորգ Տէր-Գալուստեանի եւ եղբայրը՝ դեղագործ Աբգար Տէր-Գալուստեանի 60 ընկերներովը միթրիլիոզի բռնուեցան»[26]:

---

20 Ալբերտ Խառատյան, *Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական և այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կես)* (Երևան, Գիտություն, 2022), 182:

21 Սբ Ստեփանոս եկեղեցու ճարտարապետներն էին Մելքոն Երամյանը, Սիմոն Կեսարացին, Պոլսի Կոնտիկ Մինասը: Եկեղեցին շրջապատված է եղել ընդարձակ այգիներով: Գերեզմանոցի շիրմաքարերի արձանագրությունները վկայել են այն մասին, թե հայերը որտեղից են գաղթել Զմյուռնիա (Ջուղա, Թիֆլիս, Երերուկ, Գանձակ,Գողթն, Շաշիգետ):

22 Աւետեան, *Յուշեր*, 11:

23 Նույն տեղում, 9:

24 Ձեռագրից տեղեկանում ենք, որ 1922 թ. քեմալականների՝ Զմյուռնիայի գրավման ժամանակ հայ բժիշկ Գրիգոր էֆենդի Մնացականյանը, դեղագործ Գևորգ Տեր-Գալուստյանը, եղբայրը՝ Աբգար Տեր-Գալուստյանը, հայրը՝ Տեր Գալուստ քահանան և 60 այլ մտավորականներ Կորդելիոյում շղթայակապ, մերկ վիճակում գնդակահարվել են. «Յետագային իրենց հօր՝ Տէր Գալուստ քահանայի եւ ուրիշ 60 մտաւորականներու հետ Իզմիր Քորտելիո Սովուկ քոյու ըսուած վայրին մէջ շղթայակապ մերկ վիճակով միթրիլիոզի բռնուեցան Մուստաֆա Քեմալի մարդոց կողմէ 1922-ի Իզմիրի գրաւման», Աւետեան, *Յուշեր*, 6:

25 Աւետեան, *Յուշեր*, 9:

26 Նույն տեղում, 10:

Ավետյանը պարզապես չի պատմում, այլ անվանական շեշտադրումներով է հաղորդում տեղեկությունները. առանցքային կերպարները հետագայում այլ հետազոտողների համար կարող են ուսումնասիրության նյութ դառնալ: Տպավորությունն այնպիսին է, որ Մկրտիչ Ավետյանն իր հուշերը շարադրելիս փորձում է ընթերցողի ուշադրությանը ներկայացնել զմյուռնիաբնակ հայ երևելիների գործունեությունը: Ավետյանի հաջորդ հաղորդումը Զմյուռնիայի փաստաբանների մասին է. «Կային շատ մը հայ փաստաբաններ, որոնց մէջ նշանաւոր էր այնթապցի Նազարէթ էֆենտի Հիլմին[27], որ կուսակալ Ռահմի Պէյի[28] խորհրդատուն էր: Իզմիրի նահանգին հողագործական ընդհանուր քննիչը Զաքար Զաքարեանն էր, շատ յարգուած թուրքերու կողմէ: Կային կառաւարութեան մէջ առաջին աստիճանի վրայ գտնուող հայ դատաւորներ, վճռաբեկ ատեանի դատախազներ, վերջապէս, հայերը պետական շրջանակէն ներս ուրոյն տեղ կը գրաւէին, նաեւ եւրոպական պաշտօնական տեղերը հայերը իրենց ուղիղ գործառնութեամբ յարգանք կը վայելէին»[29]:

Կրթագիտական, մշակութային խաղաղ կյանքի պատկերի ուրվագծումներին զուգահեռ՝ Մկրտիչ Ավետյանը ներկայացնում և մեկնաբանում է ներքաղաքական իրողությունները:

Երիտթուրքական հեղաշրջումն ու զմյուռնիաբնակ հայերի դրությունը

1908 թ. գալով իշխանության՝ երիտթուրքերը թուրքական ազգայնականության գաղափարախոսությունը պետական քաղաքականություն են դարձնում և դեռևս բազմէթնիկ կայսրությունում այն գործադրելու մեթոդներ փնտրում[30]:

Հետաքրքիր է, թե ինչպես է Ավետյանը ներկայացնում հեղաշրջումից հետո տեղի ունեցած իրողությունները և հատկապես գնահատում տեղի հայերի շրջանում «Միություն և առաջադիմություն» կոմիտեի աշխատանքները. «Ինչ որ պատահեցաւ 1912-էն յետոյ ես 27-28 տարեկան էի: Ազգին կողմէ թաղական ընտրուեցայ միանգամայն երէցփոխ, ազգին ամէն գործերը հովանաւորող էի: Ազգի անուան հեռագիր մը կու գայ Մերսինէն[31], ժամակոչ Սեդրաքը կ'առնէ, երեկոյեան կը յանձնէ ինձի: Մերսինի Դաշնակցութեան Բիւրոն մեզ կը հաղորդէ տեղւոյս Իթիհատ կուսակցականներուն հետ միասին գործենք, բայց չենք գիտեր՝ ինչ է գործերնիս: Ժողովի հրաւիրեցի մեր

27 *Նազարէթ Հիլմի* (Նազարեթ Ներսեսյան), փաստաբան, Օսմանյան պետության խորհրդարանի՝ Զմյուռնիայի պատգամավոր: Սպանվել է 1922 թ. քեմալականների՝ Զմյուռնիա մտնելու հենց առաջին օրը: Ավետյանի հաղորդած տեղեկության համաձայն՝ «Իզմիրի դէպքին իր տան սպասաւորող թուրքի մը կողմէ գլխատուեցաւ», 10:

28 *Ռահմի Պէյ* (թուրք.՝ Evrenoszade Rahmi Bey, 1874-1947), Այդընի նահանգապետ (1913-1917): Ծնվել է Սալոնիկում Էվրենոսների ընտանիքում: Ազգանունների օրենքի ընդունումից հետո վերցրել է *Արսլան* ազգանունը: Ընտրվել է պատգամավոր Սալոնիկից (1908, 1912): Անդամակցել է Միություն և առաջադիմություն կուսակցությանը:

29 Աւետեան, *Յուշեր*, 10:

30 Ռեգինա Ա. Գալուստյան ««Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության զարգացումը (1889-1908)», *Ցեղասպանագիտական հանդես* 7, no. 2 (2019), 29:

31 *Մերսին* (թուրք.՝ Mersinli), թաղամաս Զմյուռնիայում:

ընկերները, որոնք ինձմէ տարիքոտ էին, խնդիրը չկրցանք լուսաբանել, որոշեցինք դէպքերու յայտնութեան սպասել»[32]:

«Միասնաբար գործելու հնարավորության» մասին է Ավետյանի ներքոբերյալ վկայությունը. «Անցան ամիսներ, օր մը տեղւոյս Իթիհատի ակումբը հրաւիրեցին ազգային մարմինը եւ հոն յայտարարեցին՝ կեդրոնէն եկած հրահանգին համաձայն հայ տղամարդիկ պարտաւոր են 15 տարեկանէն վեր եղողները ասինչ օր հայոց դեղարանը գալ եւ հոն երդման արարողութիւն մը կատարել՝ միասնաբար գործելու մասին: Այժմ կը նկատենք հեռագիրը լուծումը գտաւ: Ժողով գումարեցինք կրկին եւ որոշեցինք ենթարկուիլ հրահանգին: Ներկայացող հայ տղամարդիկ Իթիհատի վարչութեան առջեւ Աւետարանի եւ Սուրի վրայ ձեռք դնել տալով երդում ըրին, թէ ապագայի Իթիհատ կուսակցութեան հրամանին համաձայն միասնաբար պիտի գործենք: Մի քանի ամիս յետոյ կրկին մեզի ակումբ հրաւիրեցին, խմիչքով եւ այլ ուտելիքներով այնպէս մը հիւրասիրեցին մեզ, որ մեր արժանիքէն բարձր գտանք: Ստիպուեցանք փոխարինել այն հիւրասիրութեան: Մենք ակումբ չունէինք, յարմարցուցինք վայր մը ծայրայեղ հիւրասիրութեամբ պատուեցինք զիրենք: Այլեւս մեր մէջ «կեաւուրը» վերացուած, եղբայրացած, որեւէ գաղտուկ բան չունեցանք: Այս կացութեան մազերը ճերմկցած մարդիկ ունեցան խստիւ դիտողութիւններ, բայց ի զուր, շփացած նոր սերունդին սպառնալիքը աւելի ծանր ազդեց, դէպքերը օրէօր ծանրացան, սակայն եղբայրութիւնը սերտ կապ կը հաստատէ Իթիհատի ամէն դեղահատը կուլ տալով անկեզու»[33]:

Մկրտիչ Ավետյանը՝ օսմանյան բանակի զինվոր

Առաջին աշխարհամարտի սկսվելուն պես Ավետյանին զինվորագրում են օսմանյան բանակ, որի մասին հուշագրության մեջ կարդում ենք. «1914-ին համաշխարհային պատերազմը պայթեցաւ: Կը գտնուէի քաղաքս՝ Տենիզլի: Զինուոր կանչուեցայ եւ փրկանք տուի: Մինչեւ 1916-ի վերջերը երեք անգամ փրկանք վճարեցի՝ «Պետելի նաքտի»[34]: Ի վերջոյ ելաւ «Թատտի պետել» օրէնքը, զինուոր եղայ եւ զիս ղրկեցին Պոլիս Այ-Իստիֆանոս որպէս արհեստաւոր: Թուրքերը ղրկեցին արհեստանոցներ, իսկ քրիստոնեաները մարզելով՝ ղրկեցին Պաղտատ «Աղըր տեքօ թապուրին»: … Պոլսոյ Հայտար փաշա կայարանին չայըրլը պախչէէն[35] ես փախայ, ծածկուելով գոմէշի կառքին տակ, նոյն օրը կաշառելով երկաթուղիի պաշտօնեաներէն մին, գիշերով դժնդակ պայմաններու մէջ, վակոնսերուն վրան պառկած վիճակի մէջ երկար մէջէ անցնելով, հասայ Իզմիր: Իզմիրէն բարձրացայ Սապանճայի լեռներ, ուր կը հսկեն լազերը, 15 օր անօթի ծարաւ պտտելէ ետք, եկայ տեղ մը, ուր ձորի մէջ զինուորները պետութեան հաշոյն տախտակ կը սղոցեն: Հայեր էին զինուորները, խնդրեցի, որ հաց տան ինձի. ըսին՝ մեր հացը կէսօրին կը բերէ, չունինք: Հեռացիր այստեղէն, եթէ

32 Աւետեան, *Յուշեր*, 3:

33 Նույն տեղում, 3-4:

34 *Պետելի նաքտի* (թուրք.՝ bedel-i nakdi), զինվորական ծառայությունից ազատվելու հարկատեսակ:

35 *Չայըրլը պախչէ* (թուրք.՝ çayırlı bahçe), մարգագետնային այգի:

քեզ տեսնէ, վիճակդ կը ծանրանայ: Ըսի ճամբան չեմ գիտեր, ինձի կաղ զինուոր մը գտան 3 մէճիտիէ[36] սակարկեցին, որ ինձի Իզմիրին ճամբան ցոյց տայ՝ պայմանաւ, որ զինուորական պահականոցին առջեւէն ես առանձին անցնիմ, ինքը լեռնային ճամբէն երթալով՝ ինձի պիտի սպասէ որոշեալ տեղ մը… Փախստական կեանքս շատ փոթորկալից եղաւ, շատ անգամներ Աստուած զիս հուրէ եւ սուրէ ազատեց, այս մասին մանրամասն գրել աւելորդ կը նկատեմ… »[37]:

1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարից հետո Անտանտի երկրները ձեռնամուխ են լինում Օսմանյան պետության մասնատման քաղաքականության իրագործմանը, որը պետք է նպաստեր թուրքական լծի ներքո գտնվող ժողովուրդների՝ հույների, հայերի, արաբների ազատագրմանն ու նրանց ինքնուրույն պետությունների ստեղծմանը: Հունաստանին իրավունք էր վերապահված վերագրավել Թրակիան (բացի Կ.Պոլսից) և Փոքր Ասիայի արևմտյան շրջանները: Հույն-թուրքական պատերազմը սկսվում է 1919 թ. մայիսի 15-ին, երբ հունական զինված ուժերը, Փարիզի հաշտության համաժողովի որոշումների համաձայն, իրենց հսկողության ներքո են վերցնում Զմյուռնիա քաղաքը[38]:

Մկրտիչ Ավետյանն ականատես է լինում, թե ինչպես է հունական բանակն ազատագրում Զմյուռնիան. «1918 թուին պատերազմի վերջաւորութեան կը գտնուիմ Իզմիր, գաղտնի զրոյցներ կը շրջին Իզմիրի ապագայի գրաւման մասին: Օր մը յոյն բանակին կողմէ Իզմիրի գրաւումը Պատերազմական ժողովը որոշում կու տայ, յոյն կարեւոր անձնաւորութիւն մը գաղտնի կերպով ինձի կը յայտնէ եւ խորհուրդ կու տայ նոյն օրը տունէս չմեկնիմ շուկայ»[39]:

93-ամյա վավերագրողը գրի է առել հետաքրքիր մանրամասներ. «Ես կը բնակէի Իզմիրի Քորտելիո արուարձանը, որ օդափոխութեան վայր մըն է Իզմիրի դիմաց, ունի ծովէն ու ցամաքէն երթեւեկութեան ճամբաներ: Գրաւման օրը մնացի Քորտելիո (Քարշը եաքա), ծովեզերքէն հեռադիտակով կը դիտեմ առտուան ժամը 6-ին յոյն բանակը զէնքերնին դէպի վար բռնած ծովեզերք կ'ելլեն նշանաւոր Քորտոն պոյր: Նախապէս կուսակալութեան հետ, հակառակ համաձայնութեան, թուրքերը ծովէն ու ցամաքէն զէնքով կը դիմաւորէն յոյն բանակը: Դիմաւորելով թուրքերը՝ կը յառաջանայ գրաւելու պաշտօնական տեղերը: 24 ժամուան մէջ խաղաղութիւն տիրեց եւ Իզմիրը անցաւ յոյն բանակի գրաւման տակ»[40]:

Դենիզլիից Զմյուռնիա փոխադրվելու որոշումն Ավետյանը կայացնում է հատկապես այն ժամանակ, երբ, իր բնորոշմամբ, թուրքերի մտայնությունը քրիստոնեաների նկատմամբ թունավորված է գտնում. «Եւ սակայն 24 ժամուայ մէջ եղած թալանկողոպուտը ծայրայեղ վիճակի մէջ էր, մանաւանդ թրքական շուկաներուն մէջ: Տեսնե-

---

36 *Մէճիտիէ*, օսմանյան արծաթե դրամ՝ քսան ղուրուշ արժողությամբ:

37 Աւետեան, *Յուշեր*, 4:

38 Arnold Toynbee, *The Western Question in Greece and Turkey, A Study in the Contact of Civilizations* (London: Constable and company, 1922), 77.

39 Աւետեան, *Յուշեր*, 6:

40 Նույն տեղում:

լով այս վիճակը, ես մտադրեցի անմիջապէս երթալ Տենիզլի եւ ընտանիքս փոխադրել Իզմիր: Թուրքերուն մտայնութիւնը հանդէպ քրիստոնեաներուն թունաւորուած գտայ, մինչ այդ շատ սիրով կը վարուէին, մանաւանդ մեզ՝ հայերուս հանդէպ տարբեր աչքով կը նայէին: Քիչ օրուայ մէջ երկու վաճառատուները փակելով՝ պատրաստուեցայ եւ շատ դժուարութեամբ կրցայ երկաթուղիի տոմսակ ճարել: 3 արու զաւակներով, մայր եւ ընտանիքովս, ողջ առողջ, ութը ժամ շոգեկառքով ճամբորդելէ վերջ հասանք Իզմիր: Հայրս եւ քոյրս մեզ չհետեւեցան, ի վերջոյ Քոնիա (Աքսերայ) աքսորուելով՝ մահացան: Շաբաթ մը վերջ թուրք խուժանը անգլիական երկաթուղին գրաւեց, վերէն վար ոչ մէկ քրիստոնեայ թողուց դուրս ելլէ եւ ամբողջ գծի վրայ եղող քրիստոնէութիւնը մնացին թուրք չեթէներուն ձեռքը»[41]:

Զմյուռնիայում իր գործունեության մասին Ավետյանը գրում է. «Ես Իզմիր հաստատուելով, ընկերս՝ Խայլմ Արտիթիի հետ Իզմիր Փեշտիմալճիլար պաշը պողոտային վրայ Քիւտիւք Քուզուօղլը խանին մէջ մանիֆաթուրայի մեծաքանակի վրայ վաճառատուն մը բացինք: Գիտէք, Իզմիր Միջերկրական ծովուն վրայ Թուրքիոյ առաջին նաւահանգիստն է, ունի երկաթուղիի երկու ցանցեր, մին անգլիական, կ'ելլէ Իզմիրի բուն կայարանէն, հանդիպելով Այտընն: Տենիզլիի քազաներով (միութեսառիֆ) կ'անցնի Քոնիա կուսակալութեան մէջէն, կը հասնի Անթալիա կուսակալութեան Քարա Քոյու կայարանը, որ կը տարածուի մինչեւ Ատալիոյ սահմանը: Սոյն վայրերու մթերքը կը փոխադրէ Իզմիր: Իզմիրի մէջ կար ընդհանուր մթերքներու եւ եւրոպական ապրանքներու շուկայ մը: Երկրորդը ֆրանսական գիծն է, որ Իզմիրի Պասմախանէի կայարանէն մեկնելով Մանիսա, Քասապա, Սալեհլի, Ակ-Հիսար, Ալաշեհիր, Քրքաղաճ, Սոմա, Պալըքասիր, Պերգամա, կը հասնի Պանտըրմայի նաւահանգիստը: Կէս ճամբուն գիծ մը բաժնուելով կը հասնի Ուշակէ մինչեւ Քարահիսար: Այս քաղաքներուն մէջ կային հոծ հայութիւն մը: Նմանապէս Այտընի գիծին վրայ հայաշատ քաղաքներ կային՝ Էօտեմիշ, Պայընտըր, Փուշատա, Այասուլըք, Սէօքէ, Այտընն, Նազիլլի, Օրթակճը, Սարայքէօյ, Տենիզլի: Նոյնպէս այս տեղերուն մէջ կային հայեր, որոնք ունէին դպրոց, եկեղեցի եւ այլ ազգային հաստատութիւններ՝ թաղական եւ հոգաբարձու մարմիններու հսկողութեամբ, նաեւ Իզմիրի մէջ կային արուարձաններ Քարաթաշ, Կէօզ թեփէ, Փոքարիալը, Սալախանէ, Հալքապունար, Պայրաքլը, Քարշը եաքա: Այս վայրերուն մէջ կը բնակէին շատ մը հայեր, ունէին ուրոյն դպրոց եւ եկեղեցի, ակումբ, գրադարան եւ այլ ազգային հաստատութիւններ՝ իրենց թաղական եւ հոգաբարձուներովը»[42]:

Զմյուռնիան Հայոց ցեղասպանության տարիներին

Մասնակի տեղահանություն

Տեղահանությունները՝ որպես ցեղասպանության գործընթացի բաղադրատարր, պետք է ընդգրկեին ինչպես Կ.Պոլսի, այնպես էլ Զմյուռնիայի հայ ազգաբնակչությանը,

41 Աւետեան, *Յուշեր*, 6:

42 Նույն տեղում, 7-8:

որը սակայն զերծ մնաց զանգվածային տեղահանություններից և հետևաբար բնաջնջումից՝ ենթարկվելով մասնակի, սահմանափակ գործողությունների[43]: Զմյուռնիայի հայ համայնքին պարտադրվեցին մասնակի տեղահանություններ 1915-1916 թթ. (երիտթուրքերն առաջին քայլերը սկսեցին Զմյուռնիայի շրջակայքի հայ ազգաբնակչությունից)[44]: 1919 թ. դեկտեմբերի 3-ին Զմյուռնիայի առաջնորդարանի՝ Կ.Պոլսի պատրիարքին ներկայացրած հաղորդագրության մեջ նշվում է, որ տեղահանությունները Զմյուռնիայում մասնակիորեն իրականացվել են 1915 թ. նոյեմբերի 15-ին և 1916 թ. նոյեմբերի 25-ին քաղաքի մերձակա բնակավայրերից դեպի Քուշադաս, Դիքիլի (ամբողջովին), Քըրքաղաչ ու Էոդեմիշ (մասամբ): Տեղահանության ժամանակ Զմյուռնիայում բնակվում էր 10 205, Մանիսայում՝ 1 828, Էոդեմիշում՝ 1 336, Քըրքաղաճում՝ 850, Դենիզլիում՝ 1 350, Այդընում՝ 510 հայ, իսկ ամբողջ վիլայեթում հայերի թիվը կազմում էր ավելի քան 19 000[45]:

Տեղահանությունները կազմակերպել և իրականացրել է Զմյուռնիայի նահանգապետ Ռահմի բեյը: Վերջինս աչքի էր ընկնում ինքնուրույն կեցվածքով և գործելակերպով, պատրաստ էր ոչնչացնել իր տնօրինությանը հանձնված վերջին հային: Եթե Թալեաթի համար հայերի ոչնչացումը սևեռուն գաղափար էր, ապա Ռահմին այդ գաղափարը ծառայեցնում էր երիտթուրքական պաշտոնեության մեջ իր դիրքերի ամրապնդմանը[46]: Հայտնի է, որ Ռահմին կազմակերպել է նաև հույների զանգվածային տեղահանությունները 1914 թ.[47]:

Բնաջնջում, հրկիզում և տարագրություն

Ավետյանը Զմյուռնիայի հայերի բնաջնջման վերաբերյալ տեղեկությունները հաղորդում է համաձայն ականատեսների վկայության, քանի որ իր և ընտանիքի՝ Զմյուռնիայից հեռանալուց հետո գործադրված բռնությունների վերաբերյալ տեղեկությունները հավաքագրել է՝ զետեղելով հուշագրության մեջ. «Շատ չանցած Քեմալը Իզմիրի արշաւանքովը հայերուն դէմ եղած հալածանքը հակապատկեր մը ստեղծեց, ջարդելով եւ աքսորելով տասը տարեկանէն վեր հայ տղամարդիկը, անխտիր, իսկ անպաշտպան ընտանիքներու մասին ծանօթ էք թրքական անպատկառ ախորժակին: Եղած աւերումը եւ բնաջնջումը, ըստ ականատեսներու վկայութեան, հայերուն մեծամասնութիւնը կը կազմէ, որոնց առիթ տուող եւ քաջալերողը եղած է անամօթ եւրոպացիք, վասն իրենց քաղաքականութեան: Իզմիրի գրաւման մէջ յոյն բանակը յաղթող էր: Ես Իզմիրէն մինչեւ Քարահիսար ականատես եղած եմ յոյներուն յաղթութեան: Դժբախտաբար, եւրոպացիք, մանաւանդ ազատամիտ Ֆրանսան, արգելք հանդիսացան յոյներուն յաղթանակին եւ ի վերջոյ հասան իրենց նպատակին՝

43 Ալբերտ Խառատյան, «Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայ ազգաբնակչության տեղահանումների շուրջ (1915-1916 թթ.)», *Պատմաբանասիրական հանդես* 1 (2016), 1:

44 Նույն տեղում, 10:

45 Նույն տեղում, 10-11:

46 Նույն տեղում, 11:

47 Նույն տեղում, 15:

Իզմիրի քրիստոնէութիւնը զոհել տալով թուրքերուն: Իզմիրի նշանաւոր Քորդոնպոյր ըսուած ծովեզերքին վրայ կը գտնուէր յունական Քիլքիս եւ Ափրոֆ դէմ առ դէմ երկու զրահաւորները: Քեմալի մտնելէն առաջ եւրոպացիք նաեւ Իզմիրի ջուրերուն մէջ կը գտնուէին իրենց զրահաւորներով: Յունական իշխանութեանց սպառնացին հեռացնել ծովեզերքէն՝ իրենց զրահաւորները եւ անշարժութեան դատապարտել թնդանօթի հարուածային ոյժը: Այս բանին ականատեսն եմ, երբ ես ընտանեկան 28 անդամներով շաբաթ մը առաջ առագաստանաւ մը վարձելով Իզմիր՝ Քորտելիոյէն կը մեկնէի, եւրոպական ռազմանաւերէն մեզի նկատեցին ելեկտրական հոսանքի տակ»[48]:

Քաղաքական իրադրությունը և Ավետյանի դիրքորոշումը

Զմյուռնիայում հայերի և հույների բնաջնջման հանցավոր ծրագիրը մշակելիս, որպես իրենց գործողությունների ապահովման և ավարտին հասցնելու երաշխիք, քեմալականները շահարկել են հոգեբանական տարբեր գործոններ, որոնցից թերևս ամենապարզունակը քրիստոնյաներին հանկարծակիի բերելն էր: Այսինքն՝ դիմադրության չհանդիպելու նպատակով՝ քաղաքի քրիստոնյա բնակչության մեջ լայն առումով չպետք է կասկած ներարկեր առաջիկա կոտորածների հետ կապված: Բացառելով բնաջնջվելու հավանականությունը՝ քաղաքի հայ և հույն քրիստոնյա բնակիչներն իրականում «ազատ են արձակել» ոճրագործի ձեռքերը և ավելի դյուրին դարձրել նախապես ծրագրված գործողությունների անարգել կատարումը: Զմյուռնիայի հայերն ու հույներն անտեսում էին իրենց բնաջնջելու վերաբերյալ բոլոր նախազգուշացումները՝ դրանք համարելով ստահոդ տեղեկություններ և ապավինելով քաղաքում տեղակայված եվրոպական պետությունների ներկայացուցիչների «համոզիչ» հորդորներին, թե իբր վախենալու կարիքը չկա. կոտորած չի կարող տեղի ունենալ, քանի որ բոլոր քրիստոնյաներն իրենց պաշտպանության ներքո են գտնվում և այլն[49]:

Մկրտիչ Ավետյանն այն բացառիկ հայերից էր, որ վտանգի լրջությունն իրատեսական էր համարում: Ավետյանի՝ հայերի «սեւ մութ ամպի մը տակ ապրելու» գիտակցման մասին կարդում ենք. «1914 թուին Իզմիր գործով գացեր էի, կը ստանամ հեռագիր մը՝ ապրանք զարնելու մասին, կը վերադառնամ, քաղաքը կը գտնեմ տակն ու վրայ: Մերսինի մեզի ղրկած հեռագիրը կը հաստատէ, որ մենք՝ հայերս, սեւ մութ ամպի մը տակ ապրեր ենք, այլեւս հայութեան համար նոր բան, նոր գործ, որ ամէն հայու գիտցածն է, այս բանը աւելորդ կը համարեմ անոնց մասին գրել»:

Թե ինչպես փրկվեցին Մկրտիչ Ավետյանն ու ընտանիքի անդամները, հուշագրության մեջ կարդում ենք. «… ես բարեբախտաբար Աստուածային հրաշքով

48 Աւետեան, *Յուշեր*, 13-14:

49 Այս թեմայի շուրջ մանրամասն տե՛ս Թեհմինե Մարտոյան, «Զմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջման սպառնալիքի ժխտման հետևանքները (1922 թ. սեպտեմբեր)», *Հայագիտության հարցեր* (2014), 61-75: Tehmine Martoyan, "Denying the Possibility of Annihilation during Genocide: A Case Study of the Armenians and Greeks, 1915–1922," *New Perspectives on the Genocide of the Greeks in the Ottoman Empire, 1913-1923,* ed. George N. Shirinian (Chicago, IL: Asia Minor and Pontos Hellenic Research Center, 2019), 253-268.

ականատես չեղայ, շաբաթ մը առաջ 20 ընտանիքի 28 անդամներով 190 ոսկի զոհողութեամբ կրցած էի ողջ առողջ հասնիլ Իզմիրի դիմաց յունական Միտիլլի կղզիի գիւղ մը»[50]:

Մկրտիչ Ավետյանի և իր ընտանիքի պատմությունը բնականաբար չէր կարող ավարտվել նրանց՝ Միտիլինի հասնելով: Ավետյանը, հավաստի աղբյուրների հիման վրա, շարունակում է մանրամասներ հաղորդել Զմյուռնիայի և տեղի հայերի վիճակի մասին. «Իմ մեկնելէս յետոյ Քեմալը կը յաջողի մտնել Իզմիր, նախ ղրկելով ձի եւ աւանակ նստած գիւղացիներ, յետոյ անզէն թուրքեր եւ կամաց կամաց Իզմիրը պաշարելով՝ զինուորները ազատօրէն այս անգամ այս հանդարտութեան վախճանը կ'ըլլայ զինուորներու յարձակումը դէպի քրիստոնեայ թաղեր, հետը միացան Իզմիրի խուժանը: Ամէն մարդ կեանքը ազատելու համար ծովեզերք կը դիմէ, շատերը ճամբան մեռած եւ ծովեզերք հասնողները ինքզինքնին ծովը նետելով կ'աղաղակեն ազատութիւն, եւրոպացիներու կողմէ, բայց հակառակը կը պատահի. այն կրթեալ եւ մարդասէր եւրոպացին հայուն դէմ հակառակ շարժելով՝ իրենց նաւերուն մօտեցած հայերը փոխանակ պաշտպանելու, տաք ջուրերու ներքեւ կը դնեն զիրենք: Ոմանք ճարպիկ կերպով վեր կը բարձրանան եւ յետոյ կը նետեն ծովը»[51]:

Ավետյանը, անդրադառնալով Զմյուռնիայի հայերի և հույների թաղամասերի հրկիզմանը, գրում է. «Խուժանը չէ գոհացեր միայն վառելով եկեղեցին եւ հիւանդանոցը, այլ փշուր-փշուր ըրած է բարերարներուն արձանները եւ իր ուղղութեամբ գտնուող բոլոր շէնքերուն վրայ վառելանիւթ թափելով՝ ահագին տարածութեան վրայ գտնուող մեծ ու փոքր շէնքերը այրած է եւ այժմ պատասխանատու կը գտնէ հայերը այս հրկիզումին համար, սակայն տեսնողները կը վկայեն, թէ որոնք էին վառողները»[52]:

Վերջաբան

Մկրտիչ Ավետյանի «Յուշեր. ընտանիքի մը հայապահպանման կեանքի այլազան դժնդակ պայմաններ» խորագրով հուշագրությունը սկզբնաղբյուրային նշանակության տեղեկություններ է հաղորդում ոչ միայն Զմյուռնիայի, այլև արվարձանների, մասնավորապես՝ Դենիզլիի վերաբերյալ: Ավետյանի ձեռագիր, անտիպ հուշագրությունը կարևորվում է հատկապես Հայոց ցեղասպանության զոհերի և վերապրողների փաստագրման և ուսումնասիրության տեսանկյունից: Այն Զմյուռնիայում հայերի ներդրման վերաբերյալ արժանահավատ փաստաթուղթ է, ամենատարբեր ոլորտներում հաջողություն գրանցած հայտնի հայերի մասին համառոտ հանրագիտակ:

Հուշագրությունը համապարփակ տեղեկություններ է հաղորդում և՛ նախացեղասպանական, և՛ հետցեղասպանական շրջանի վերաբերյալ. Հայոց ցեղասպանության ընդհանուր պատմության մեջ Զմյուռնիայի հայերի վերաբերյալ Մկրտիչ Ավետյանի միկրոպատմությունը նյութի լրացում և ներդրում է՝ «դարերէ ի վեր

50 Աւետեան, *Յուշեր*, 11:

51 Նույն տեղում, 15:

52 Նույն տեղում, 12:

փափաքած տունը ունենալու անխախտ հաւատով». «Հայերը. այս է մեր սիրելի եւ կրթուած մտայնութիւնը մեզ՝ հայերուս հանդէպ: Մէկ րոպէ ինքնագիտակցութեան եկէք, մտածեցէք դուք ձեր մասին, վազ անցէք օտարասիրութենէ, սիրեցէք զմիմեանս սիրոյ անքակտելի ոգիով, եղէք միակամ եւ մի հոգի ըսէք համոզում գոյացնելով, ոչ մէկ օգուտ կայ մեզի օտարներէն, ընդհակառակը՝ կայ առատ թշնամութիւն, բայց մենք ունինք մեր զօրաւոր կամքը եւ ստեղծող միտքը, որ կարող է մեզ աշխարհի վրայ երջանկացնել՝ ստեղծելով մեզի համար ազատ եւ անկախ հայրենիք մը, որու տենչով մահացան մեր նախնիները: Մենք՝ ապրողներս, դարերէ ի վեր դաժան աշխատանքներով կ'աշխատինք իրականացնել զայն, լաւ գիտցէք, եթէ իրար չսիրենք եւ զիրար չհասկնանք, մեր հետեւանքն ալ նոյն բախտին ենթակայ պիտի ըլլայ: Կ'աղօթեմ Աստուծոյ իմ անցուցած փորձառութենէս, խորհուրդ կու տամ իմ ազգիս համայն զաւակներուն, որ գիտակցին իր ազգային ունեցած ուղղութիւնը տայ՝ ուսանելու իր դարերէ ի վեր փափաքած տունը ունենալու[53],– Հայե՛ր, կ'ուզէ՞ք այս աշխարհին մէջ ձեր դիրքերուն վրայ ամուր մնալ. եղե՛ք աղաւնիի պէս միամիտ, իսկ աղուէսի պէս նենգամիտ, չի բաւեր ձեր ստեղծագործութիւնը, միայն զայն ձեռքէ չհանելու եւ աւելի ուժեղացնելու համար հնարամտութիւն պէտք է ունենաք, ինչպէս որ ունին հրեաները, փորձառութիւն առէք ձեր անցուցած կեանքէն եւ ըստ այնմ գործեցէք ձեր կեանքին մէջ, ապա թէ ոչ, ուր որ ալ գտնուիք, ուր որ ալ գործէք, լաւ գիտցէք, որ մեր վրայ կնքուած գաղթական անունը պիտի չսրբուի, եւ պիտի մնաք անտէր անտիրական հայ գաղթական»[54]:

FROM SMYRNA TO MYTILENE: SURVIVAL STORY OF MKRTICH AVETYAN

Tehmine R. Martoyan
Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

Eyewitness-survivor Mkrtich Avetyan's memoir is about the peaceful life of Armenians of Smyrna, rooting of enmity against them, violence, and exile. Mkrtich Avetyan was drafted into the army and sent to Constantinople as an artisan at the beginning of World War I. Avetyan decided to move his family from Denizli to Smyrna because the Turkish sentiments towards the Armenians had been sharply deteriorated. A week before the invasion of Smyrna by the Kemalist army, Mkrtich Avetyan, together with 20 other families, arrived in Mitilini (Greece) from Smyrna, having paid 190 Ottoman gold liras. Mkrtich Avetyan wrote his memoirs in Aleppo in 1965 at the age of 93.

53 Աւետեան, *Յուշեր*, 11:

54 Նոյն տեղում, 5: Մկրտիչ Ավետյանն այսպես է ավարտում հուշագրությունը. «Վերոյիշեալ դրութեան ականատես եւ վկան՝ 30/9/1965 Հալէպ (93) տարեկան Մկրտիչ Աւետեան»:

Key words: Smyrna, Denizli, Cordelio, Mkrtich Avetyan, memoir, Mesropyan school, Hripsimyan school, the First World War, Kemalist army, Greek army, Mustafa Kemal, Rahmi bey, Mytilene.

ОТ СМИРНЫ ДО МИТИЛИНИ. ИСТОРИЯ ЖИЗНИ МКРТЫЧА АВЕТЯНА

Тегмине Р. Мартоян
Фонд "Музей-институт Геноцида армян," Армения

РЕЗЮМЕ

Воспоминания свидетеля-выжившего Мкртыча Аветяна о мирной жизни армян Смирны, укоренении вражды против них, насилии и изгнании.
В начале Первой мировой войны Мкртыч Аветян был зачислен в армию и направлен в Константинополь в качестве ремесленника. Аветян решает перевезти семью из Денизли в Смирну, так как настроения турок по отношению к армянам резко ухудшились. За неделю до вторжения кемалистской армии в Смирну, Мкртыч Аветян вместе с 20 другими семьями прибывает из Смирны в Митилини (Греция), заплатив 190 османских золотых. Свое рукописное воспоминание Мкртыч Аветян записал в Алеппо в 1965 году в возрасте 93 лет.

Ключевые слова: Смирна, Денизли, Корделио, Мкртыч Аветян, мемуары, Месропский колледж, Коллегия Рипсимянца, Первая мировая война, кемалистская армия, греческая армия, Мустафа Кемаль, Рахми-бей, Митилини.

REFERENCES

Մեր Զմիւռնիան [Our Smyrna]. New York: Armenian Smyrna Association, 1961;

Acharyan, Hrachia. Հայ գաղթականության պատմություն [The History of Armenian Diaspora]. Yerevan: Zangak-97, 2002;

Aghayan, Tsatur. Հայերը՝ Թուրքիայում [The Armenians in Turkey]. Yerevan: Hayastan, 1994;

Astoyan, Anahit. Բուրսայի նահանգի հայության տնտեսական վիճակը և նյութական կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին [The Economic Condition and Material Losses of the Armenians of Bursa Province during the Armenian Genocide]. Yerevan: Gitutyun, 2017;

Avetian, Mkrtich. Յուշեր. ընտանիքի մը հայապահպանման կեանքի այլազան դժնդակ պայմանները [Memoir: The Various Difficult Conditions of the Life of a Family of Armenian Preservation], unpublished;

Galustyan, Regina. «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության զարգացումը (1889-1908)», [The Evolution of the Ideology of the "Committee of Union and Progress" (1889-1908)]. *Ts'eghaspanagitakan handes* 7, no. 2 (2019): 9-32;

Grigoryan, Asya and Brutyan, Vachik. Զմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր (19-րդ դարի սկզբից մինչև 1922 թ.) [Outlines of the History of Smyrna Armenian Educational and Cultural Life (From the Beginning of the 19th Century to 1922]. Yerevan: Iravunq, 2007;

Kharatyan, Albert. «Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայ ազգաբնակչության տեղահանումների շուրջ (1915-1916 թթ.)» [About the Deportation of the Armenians of Constantinople and Smyrna (1915–1916)]. *Patmabanasirakan handes* 1 (2016): 3-20;

Kharatyan, Albert. Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կես)[Armenian Colonies of Smyrna and the Coast of the Aegean Sea (16th - first half of the 19th century)]. Yerevan: Gitutyun, 2022;

Martoyan, Tehmine. «Զմյուռնիայի հայ և հույն բնակչության բնաջնջման սպառնալիքի ժխտման հետևանքները (1922 թ. սեպտեմբեր)» [The Consequences of the Denial of the Threat of Annihilation in Case of the Greek and the Armenian Population of Smyrna (September 1922)]. *Hayagitutyan harts'er* 1 (2014): 61-75.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Թեհմինե Ռ. Մարտոյան, պատմ. գիտ. թեկն., միջազգայնագետ-արևելագետ (իրանագետ), ցեղասպանագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության զոհերի և վերապրողների փաստագրման և ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Զմյուռնիայի հայերի և հույների բնաջնջման և քաղաքի հրկիզման պատմություն, զոհի հոգեբանական ժխտում և այլն:

Էլ. փոստի հասցե՝ martoyan.tehmine@genocide-museum.am

Tehmine R. Martoyan, PhD in History, specialist in international relations/oriental studies (Iranology), specialist in genocide studies, senior researcher at the Armenian Genocide Victims and Survivors Documentation and Research Department, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – the history of the annihilation of the Armenians and Greeks of Smyrna and the fire of the city, psychological denial of victim, etc.

E-mail: martoyan.tehmine@genocide-museum.am

Тегмине Р. Мартоян, канд. ист. наук, специалист по международным отношениям/ востоковед (иранист), геноцидовед, старший научный сотрудник Отдела документации и исследований жертв и выживших Геноцид армян, Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – история истребления армян и греков в Смирне и поджога города, психологическое отрицание жертвы.

Эл. почта: martoyan.tehmine@genocide-museum.am



Մկրտիչ Ավետյանը
Ավետյան ընտանիքի արխիվ



Մկրտիչ Ավետյանը կնոջ և որդիների հետ
Ավետյան ընտանիքի արխիվ



Հատված ձեռագիր հուշագրությունից
Ավետյան ընտանիքի արխիվ

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(եթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորույթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առավազն մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի»արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ում պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի»խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների

բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Ցեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ Ցեղասպանագիտական հանդեսի տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Ցեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
   Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական տարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rpe'rean, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կոթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կոթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* ["Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-i

Mahsusa)" in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut'yun, 2016, 198-212.

Marutyan, Harutyun. «Ինքնութեան «ամրացման» երկու հնարաւորութիւններ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնների համատեքստում», *Սփիւռք եւ ինքնութիւն* (խմբ.՝ Շահան Գանտահարեան) ["Two 'possibilities' of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations," in Diaspora and Identity (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire's State Orphanages (1915-1918)]. *Ts'eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տօքտ. Ալթունյան» [Dr. Alt'unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

ՀՂՈՒՄՆԵՐ

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:
    Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

    Նույն տեղում: (եթե էջը նույնն է)
    Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. Գրքեր (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:
2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.
3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի

քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին*, 55:
Тунян, *Россия и Армянский вопрос*, 55.
Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:
1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, Moby-Dick; or, The Whale (New York: Harper & Brothers, 1851), 627, http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html, դիտվել է 17.07.2019:
2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, http://press-pubs.uchicago.edu/founders/, դիտվել է 17.07.2019:
3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.
4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.
2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.
3. Borel, *Fact-Checking*, 104–105.
4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական,

հոդվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, "Ottoman Archives and Denial of the Armenian Genocide," in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin's Press, 1992), 280.
2. Վերժինե Սվազլյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90*, հոդվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:
3. Сурен Манукян, "Наказание за верность." От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения," *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումներների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը:
Օր.՝
1. Dadrian, "*Ottoman Archives,*" 471.
2. Սվազլյան, «*Հայոց ցեղասպանությունը*», 471:
3. Манукян, "*Наказание за верность,*" 648.

Ե. Հոդվածներ

1) Հոդվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև ՝ DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, "Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire," *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.
Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, "Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality," *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, https://doi.org/10.1086/690235
3. Peter LaSalle, "Conundrum: A Story about Reading," *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.
4.Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, "Comparative Policy and Differential Practice," 35.
2. Keng, Lin, and Orazem, "Expanding College Access," 23.
6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հոդվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Նշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսաննա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ* օրաթերթ (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html.
4. Խմբագրական, *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝
1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝
1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:
1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝
1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html, դիտվել է 17.07.2019:

2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php, դիտվել է 17.07.2019:
3. Katie Bouman, "How to Take a Picture of a Black Hole," filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.՝

1. "The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton."
2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:
3. Bouman, "Black Hole."

12. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակ ները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:
2. Պետրոս Տեր-Մաթոսյան, Էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

13. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ.կամ 2019 թ. փետրվարի 1:
2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:
3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

14. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
Բ բ - B b
Գ գ - G g
Դ դ - D d
Ե ե - E e
Զ զ - Z z
Է է - E′ e′
Ը ը - Ë ë
Թ թ - T’ t’
Ժ ժ - Zh zh
Ի ի - I i
Լ լ - L l
Խ խ - Kh kh
Ծ ծ - Ts ts
Կ կ - K k
Հ հ - H h
Ձ ձ - Dz dz
Ղ ղ - Gh gh
Ճ ճ - Ch ch
Մ մ - M m
Յ յ - Y y
Ն ն - N n
Շ շ - Sh sh
Ո ո - Vo vo (բառամիջում գրել օ ձևով)
Չ չ - Ch’ ch’
Պ պ - P p
Ջ ջ - J j
Ռ ռ - R’ r’
Ս ս - S s
Վ վ - V v
Տ տ - T t
Ր ր - R r
Ց ց - Ts’ ts’
Ու ու - U u
Փ փ - P’p’
Ք ք - Q q
Եվ և Ev ev
Օ օ - O′ o′
Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
Б б - B b
В в - V v
Г г - G g
Д д - D d
Е е - E e
Ё ё - Io io
Ж ж - Zh zh
З з - Z z
И и - I i
Й й - Ï ï
К к - K k
Л л - L l
М м - M m
Н н - N n
О о - O o
П п - P p
Р р - R r
С с - S s
Т т - T t
У у - U u
Ф ф - F f
Х х - Kh kh
Ц ц - Ts ts
Ч ч - Ch ch
Ш ш - Sh sh
Щ щ - Shch shch
Ъ ъ - “
Ы ы - Y y
Ь ь - ‘
Э э - E′ e′
Ю ю - Iu iu
Я я - Ia ia

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 150:

Համակարգչային ձևավորումը՝ Քրիստինե Վարդանյանի

Տպագրվել է .....